

891 - 99

P - 82

143

143



ՀՐԱՉՅԱ ՔՈԶԱՐ

Վ. Ա. ՀԱՆ Վ. Ա. ՐԴՅԱՆ

291.99
R- 82

ՊԵՏՐԱՏ
1 9 3 4

291.99

Բ-82

ՀՐԱՉՅԱ ՔՈՉԱՐ

6 NOV 2011

№ 63

այ.

Վ Ա Հ Ա Ն Վ Ա Ր Դ Յ Ա Ն

(Վիպակ)

191

30 JUL 2013

60752

ՎԱՀԱՆ ՎԱՐԴՅԱՆ

ՀԱԿԵՑ ՍԻՐԵԼԻ ՎԱՐՍԻԿԻՆ

Յերրորդ որն եր, ինչ պառկում եր նա այդ խշխշան ներքնակի վրա: Վաս չեր իհարկե: Ամեն անգամ շարժվելիս, յերբ ներքնակը խըշխըշում եր, նրան թվում եր, թե մի հաճելի բան է կատարվում: Խոտով լցված ներքնակը ծածկըված եր մաքուր, սպիտակ սավանով: Փափուկ, նույնիսկ աղայական անկողինը թողնելով, նա այժմ պառկում եր խոտի ներքնակին, բայց ամենեին տհաճ բան չեր զգում դրանից: Ամոթ ել կլիներ, յեթե զգար: Դա ի՞նչ դժվարություն եր, վորին նա դիմանալ չկարողանար:

Յեվ յերրորդ որն եր, ինչ պառկում եր նա այդ ներքնակի վրա ու չեր թաղվում մեջը: Իրենն այդպես չեր: Թաղվում եր նա իր ներքնակում ու վայրկենապես դադարում առորյալի վորևե բանի մասին մտածելուց: Ընկղմում եր իր փափուկ ներքնակում և թվում եր թե ողի մեջ է պառկած: Վոչ թե անկողնակալի առաձգականության ու փափուկ անկողու, այլ ողում ճոճվող ճլորթի մեջ եր զգում իրեն: Այդպես եր յերեք որ առաջ, իսկ հիմա



1528

37

Գառ. խմբ. Սուր. Հարությունյան
 Սրբազրեցին՝ Ս. Փարսադանյան և Մ. Քեչյան
 Գլավիկա 8-30, պատվեր 774, հրատ. 2962, տիրաժ 3000
 Գրտերատի տպարան, Յերեվան

այդպէս չե: Պատկում ե նա խշխշացող ներքնակի վրա ու դեռ պէտք ե պառկի 10 ամիս 27 որ ել: Ընդամենը 11 ամիս ե, բայց 3 որն արդեն անցել ե:

Նա միամյակ ե... Մի տարի յե մնալու բանակում:

Պատկած ե նա հիմա խոտե ներքնակի վրա: Վաղուց արդեն բոլորը քնել են: Երջվում ե անկողնում, ստիպում ե ինքն իրեն քնել, խփում ե կոպերն ուժով, բայց վորքան ճիգ ե գործ դրնում, քնի թմիրն այնքան հեռու յե փախչում նրանից: Այդպիսի քաշում ե գլխին: Այդպէս նա աչքերը կծածկի լույսից ու հեշտ կքնի: Բայց մի քանի ըոպե հետո ելի յետ ե գցում նա ագյալն ու նայում ժամացույցին:

— Ծո՛ւ, սատանան տանի, յես չսովրեցի ժամի Ծ—ին քնել: Մեկ, յերկու, յերեք.— արդեն յերեք ժամ ե անցել ժամի Ծ—ից, — բարկանում ե նա ինքն իր վրա և այս անգամ ակնապիշ նայում առաստաղին, կարծես մի աննկատելի կես ե փնտռում այնտեղ ու չի գտնում:

Լուսամուտը բացվում ե քաղաքի գլխավոր փողոցներից մեկի վրա: Այդ լուսամուտից ուշ յերեկոյան նայում ե նա փողոց: Նա մուսկետի ե, թե յերեք ժամում քանի անգամ ե ձգվել դեպի լուսամուտը՝ փողոց նայելու: Ամեն անգամ դուրս ե նայում հետաքրքրական մի բան տեսնելու ակնկալությամբ, բայց դատարկ փողոցի լուսթյունն ե ընկճում նրան: Վորքան կուղեր ազատ լինել նա, թեկուզ այդ դատարկ

փողոցում աննպատակ թափառելու: Բայց վաղ եր դա, յերբ նրան թվում եր, վոր յերկրի բոլոր մարմինները կարող եյին իր քմահաճույքների շուրջը պտտվել. ինչպէս քամու մեջ ընկած փոշու ու թղթի մանր կտրոնները: Իսկ այժմ նա չգիտեր թե ինչո՞ւ, թվում եր, վոր ինքն ել, վորպէս փոշու մի հատիկ, կամ թղթի մի կտոր՝ պտտվում ե ահա այն մարդու քմահաճույքի շուրջը, վորը յերեք մահճակալ այն կողմն ե պառկած իրենից:

Չորանոցի ավագի քմահաճույքի շուրջը:

Նրան չեր թույլատրվում քաղաք գնալ: Յերևի այդ եր պատճառը, վոր նրա ուղեղում շարունակաբար մի միտք եր պտտվում: Ինչպէս ամբողջ ուժով աշխատում եր նա քնել, այդպէս ել աշխատում եր ազատվել այդ մտքից: Բայց մի քանի ըոպե միայն կարողանալով ուրիշ բանի մասին մտածել, ելի վերադառնում եր նա նույն մտքին: Այդ միտքը մղում եր նրան դեպի քաղաք, դեպի փողոցները: Յեւ այդ, ամենից առաջ այդ միտքն եր նրան արթուն պահում ժամերով: Քիչ եր մնում, վոր նա կոչմարի յենթարկվեր:

Ինքն ել արդեն չգիտեր, թե ինչու սկսեց դրա մասին մտածել, թե ինչպէս և ինչից այդ միտքն հղացավ իր ուղեղում ու ներծծվեց ուղեղի բոլոր ծալքերի մեջ:

Չկարողանալով քնել ու ազատվել այդ ճնշող մտքից, նա ջղաձգորեն ելի յետ նետեց օդյալը: Յետ նետեց և այս անգամ նստեց ան-

կողմում: Վոչ վոք չարթնացավ: Լուսամուտից նա տեսավ գունատ լուսինը, սառն ժպիտը դեմքին: Լուսամուտից վերցրեց տետրակը և անկողնու վրա դնելով, դրեց այդ որվա որագրի շարունակությունը:

«Գիտեմ, վոր անհարմար է սա գրել թղթերիս մեջ, բայց վորովհետև գիտեմ, վոր միայն յես պետք է կարգամ գրածներս և վոչ մեկ ուրիշը, ուրեմն՝ կարող եմ գրել:

Յես, իհարկե, հարյուր տոկոսով հավատում եմ Լյուբայի, իմ Լյուբինկայի հավատարմությանը: Ինչպե՞ս կարող ե պատահել, վոր նա բացի ինձանից ապրի ու չնչի ուրիշով ել...

Բայց վորտեղից այդ միտքը դուրսս մըտավ: Կարծես արդեն հավատում եմ այդ սին մտապատրանքին: Հավատում եմ, վոր յեթե քաղաք դուրս գամ, առաջին պատահած փողոցում Լյուբային կտեսնեմ մի ուրիշի հետ թե՛ վանցուկ: Լյուբան կկարմրի, ցնցումով թևը կպոկի նրանից ու աչքերի պղտոր արտահայտությամբ ինձ կնայի: Ինձ ծանոթ, կամ անծանոթ տղան ել կվախենա ինձանից ու Լյուբայից հեռու կքաշվի: Իսկ յես վոտքս գետին կղարկեմ, կբարկանամ Լյուբայի վրա, յերբ նա, այդ տղան արդեն գնացած լինի, ու յետ կգամ: Լյուբան կգա յետևիցս, կխնդրի ինձ, վոր կանգնեմ: Յես կկանգնեմ: Լյուբան հայացքով ներողամտություն կը հայցի ինձնից: Յես, վորպես պատիժ նրա այդ գողունի արար-

քի, նրա շրթունքները պինդ կկծեմ և նա յեւ չի ասի:

— Թու, անամոթ, հիմա՛ր, եղպես բա՞ն կանեն...

Սրա մասին, յերեք ժամից ավել է, ինչ սրա մասին եմ մտածում: Հիմար բան է, իհարկե: Կարծես մանիայով եմ բռնված: Բարկանում եմ ինձ վրա, վոր այսպիսի ստոր մտքերով ե լցվում գլուխս մեկի մասին, վորը վարդազույն հույսի պես քաղցր է ինձ համար ու վարդի չափ ել սիրելի:

Ժամանակն անցնում է:

— Вроще, — ասում եմ ինքս ինձ, — вроще ամոթ է, ինչպես ես թույլ տալիս քեզ: Բայց մի քանի վայրկյան հետո՝ ելի նույն միտքը: Մի քանի վայրկյան հետո՝ ելի դուրս եմ նայում լուսամուտից՝ արդյոք հենց այս փողոցում չե՞մ տեսնի նրան»...

Ուշ գիշեր եր: Շատ ուշ: Առաստաղի սպիտակ ֆոնի վրա նրա աչքին յերևացող սիւրյետներն ու ֆիգուրները դառնում եյին խաթամուժ, ձուլվում իրար, սև, դեղին ու կանաչ գույնի դժերով փոփում առաստաղին, ապա՝ առաստաղը սվաղվում եր խառնիճաղանձ դույներով:

Ուշ գիշեր եր: Լսում եր նա կողքին քնած ընկերների շնչառությունը: Ահա մեկը: Փրսփրսում է: Կարծես գաղտնիքներ է հաղորդում իր կողքի մահճակալի վրա պառկածին, վոր

ուրիշները չլսեն: Ինչպես յերևում է, քնի մեջ
խոսելը նրա սովորությունն է:

Կիսաբաց լուսամուտից սառ ողն ալիքնե-
րով ներս եր հորդում դուրեկան թարմու-
թյամբ: Սրտերն ու ժամացույցն իրենց զարկե-
րով հաշվում էյին հալվող ժամանակը: Սրդեն
ծանրանում էյին նրա կոպերը: Մի քանի րոպե
հետո նա արդեն քնած կլիներ: Բայց մի վատ
զգացմունք ծանրությամբ նստել եր նրա սրը-
տին:

Քնեց նա, այդ վատ զգացմունքը սրտում,
այնտեղից նա դուրս վանել չկարողացավ
նրան:



Քաղաքի ուշ աշունն եր: Չմեռնամուտը:
Նրան թվում եր, վոր յեթե արևի սրտի ջերմն է
տաքացնում յերկիրը, ուրեմն անսահմանու-
թյան չափ մեծ մի մաղով ձյուն եր մաղվում ա-
րևի սրտին: Դրա համար ել թուլանում եր ա-
րևի սրտի ջերմության ուժը և արևը չեր այ-
րում:

Նա արվեստի յերկրպագու չեր յինի, յեթե
այդպես պատկերներով չմտածեր: Յեվ, յեթե
կուզեք, հանուն այդ պատկերների յել նա չու-
զեց ոգավել իր արտոնությունից: Կարող եր մի
վկայական ներկայացնել, վոր հիրավի Լյու-
բան հզի յե և կազատվեր բանակի ծառայու-
թյունից: Բայց չուզեց: Չուզեց, վորովհետև

այդ տասնումեկ ամսվա կյանքը ստեղծագոր-
ծական վոզեորության հորդահոս մի աղբյուր
կլիներ նրա համար: Այդպես եր մտածում նա և
այդ հույսերն ել նրան մինչև իսկ թույլ չտվե-
ցին մտածել իր՝ բանակից ազատվելու արտո-
նությունից ոգավելու մասին: Հրաժարվել այն
մտահղացումներից ու վորոշակիորեն ուրվա-
գծվող հեռանկարներից, վորոնք բանակ գալու
հետ էյին կապված, կնշանակեր արվեստից
հրաժարվել: Իսկ դա տգիտության պես ան-
տանելի բան կդառնար: Տգիտությունն ամե-
նաանհանդուրժելի բանն է նրա համար, նա
տանել չի կարողանում տգիտությունն ու տգեա
մարդկանց:

Այդ որն արևի ճառագայթներն հազիվ էյին
տաքության թեթև մի ալիք ստեղծում նրա
մաշկի տակ: Այդպես եր լինում, յերբ Լյու-
բան թեթևորեն շոյում եր նրա ճակատը, յերբ
ձեռքը նա չեր հպում ճակատին: Յերբ հպում եր
Լյուբան իր ձեռքը նրա ճակատին, արևի ամ-
բողջ կրակը նրա կրծքի մեջ եր լցվում:

Այդ որն արևի ճառագայթները հազիվ էյին
ջերմի թեթև մի ալիք ստեղծում: Արևը ստույգի
կյորակ մի զանգվածի պես չողում եր բաց գոր-
չագույն ամպերի ծալքերի միջով՝ դեպի ներ-
քեվ: Քաղաքի շենքերն ու լուսամուտների
փեղկերը ներկվել էյին դեղինով: Լսում եր նա
քաղաքի հիմնական պողոտայի՝ ծառերի չոր
ճարճատյունը: Տերևաթափը վերջացել եր և
քամուց իրար կպչող ճյուղերը չոր ճարճատ-

յուն եյին արձակում: Նա ուշ յերեկոներին, յերբ մարում եյին գեղին շողերն հեռու հորի-
զոնի վրա, ունկընդրում եր այդ ձայնը և կտոր
ներ արտասանում Սերգեյ Յեսենինից:

Այդ որն ել այդպես եր: Նա մտածում եր,
կարծես տխրում: Հայացքը հառելով վերջա-
լույսի արնազույն ամպերին, բարձր, ինչպես
արտիստը, արտասանում եր «ցնծա արվեստա-
գետ— նկարիչ, ի՞նչ սքանչելի պատկերներ
են»...

Արտասանում եր, ապա թիկնած լուսամու-
տին սուղվում եր մտքերի մեջ ու այս անգամ
կրկնում նույնը, բայց փեղմ ձայնով: «Ի՞նչ
փառահեղ պատկերներ են»...

Ելի յերեկո յեր: Արդեն յերկու ժամ եր
անցել այն ընթացից, յերբ նա յսել եր: «Քնել,
պարտադիր քուն ե հայտարարվում»:

Քնել եյին բոլորը, բացի նրանից: Նա ելի
արձակել եր իր խոհերի կծիկը:

Սենյակը կիսախավար եր: Հրամանով ե-
լեկտրական լույսը պետք ե վառ մնար մինչև
առավոտ:

Բայց վորովհետև նրա ներվոլոգիական
ախտամբ լույսին չդիմանալու առանձնահատ-
կություններ ունեյր, վորից զուրկ եյին մյուս-
ների ներվերը, յերբ քնեցին, նա ելեկտրական
լամպը թղթով փաթաթեց:

— Ուրեմն հրամանի խախտում կատա-
րեցի, ծիծաղս գալիս ե... — ծիծաղեց նա ջթի
տակ և քաշեց տետրն անկողնու տակից:

«Սենյակը կիսախավար ե, իսկ խավա-
րում միտքն ավելի արագ ե թռիչքներ գործում:
Այդպես ե ասել չգիտեմ վոր գրողը: Իսկապես,
վոր այդպես ե: Իմ միտքն հիմա յերևակայու-
թյունիցս ել արագ թռիչքներ ե գործում մա-
նավանդ, յերբ աչքերս հառում եմ առաստա-
ղին ու սևեռակի պես դամում մի կետի:

Ընթերցող, ասում եմ ինքս ինձ (վորով-
հետև գրածիս ընթերցողը միայն յես կլինեմ),
ընթերցող, դու պատկերացրու կիսախավար մի
սենյակ, շարքով ու կանոնավոր դրված քսան
մահճակալ ու յուրաքանչյուրի վրա՝ քնած յե-
րիտասարդ մի մարդ: Մի քանիսի դեմքին հող-
նույթ ե նստել: Այսոր մենք չորս ժամ շարքա-
յին վարժություններ ենք արել: Իսկ մյուսները
ժպտում են, կարծես ինչ վոր յերանության
հույսով են քնել: Մեկն ասա, լավ ե անունն ա-
սեմ Հրայր Քարամյանը, քնած ժամանակն ել
ցույց ե տալիս, վոր մտքի մարդ ե: Խելոք ու
իմաստալից արտահայտությամբ լեցուն ե նրա
կիսաժպիտը:

Մտքներն ալիքներով են լցվում ուղեղիս
մեջ. բոլորը քնած են: Արթուն ե մնացել միայն
մեկը, խոհերով, խորախորհուրդ մտքերով ու
ղեղեցկություններով ապրելու համար, կամ՝
ավելի ճիշտ ե ասել, նրանով տանջվելու ելի մի
քանի ժամ: Դա յես եմ: Յերեկո, կիսախավարի
մեջ այդ պատկերը: Յեզ յես ասում եմ ինքս
ինձ. «ցնծա, նկարիչ ինչ փառահեղ պատ-
կեր ե»:

Աղբայրի տակից դուրս մնացած գլուխս
պետք է այնպես նկարեմ, վորպեսզի զգացվի,
վոր նա խորհող ու զգացող արվեստագետի
գլուխն է, վորպեսզի նկարը դիտելիս իմանան,
վոր կարմիր բանակում, վորպես հասարակ,
այո՛, հասարակ բանակային, անգամ արվեստ-
ագետն է մտնում և վոր արվեստը վոչ միայն
հասկանալ, այլև կատարելապես յուրացնել կա-
րող է նաև հասարակ, այո՛, հասարակ բանա-
կայինն էլ, ինչպես որինակ յես և ինչպես
Հրայր Քարամյանը:

Ինչ լավ, վոր յես նրա հետ միասին ընկա:
Ինձ չհաշված՝ նա միակն է մեզ մոտ, վոր հաս-
կանում է արվեստից: Կարծեմ նույնիսկ գրում
է: Ու, բացի դրանից, ինչքան էլ համակրելի
ընկեր է: Իմ առաջին տպավորությունն է այդ
և համոզված եմ, վոր չեմ հուսախաբվի: Ան-
կարելի յես, վոր յես նրա մեջ վատ բան տես-
նեմ:

Հրայրի ժպիտը...

Յես պետք է նկարեմ նրա դեմքը, անպայ-
ման պետք է նկարեմ նրա մշտած իծաղ դեմքը:
Այդ առիթ կլինի, վոր մենք ավելի մտերմա-
նանք: Յեվ ինչքան էլ հեշտ ծանոթացանք»...

Ու նա հիշում է, թե ինչպես ծանոթացավ
Հրայր Քարամյանի հետ, աշխատում է չմոռա-
նալ դեպքի մանրամասնությունները:

Յերկուսով մի հին բանակայինի հետ բաղ-
նիք էյին գնում: Դեռ քաղաքացիական հա-

գուստներով: Նա Քարամյանին եր նայում ու
չէր կարողանում հիշել, թե վորտեղ է տեսել
նրան: Դեմքը՝ ծանոթ է, այդ դեմքի դիմա-
դժերը նա տեսել է շատ անգամ, նույնիսկ կար-
ծես հարազատ են այդ դիմադժերը: Մի քանի
անգամ նա փորձեց հարցնել Քարամյանին, թե
արդյոք իրեն չի՞ ճանաչում, բայց վորպեսզի
ինքը մտածի ու գտնի, չհարցրեց: Վերադար-
ձին, յերբ գլխավորական համազգեստ էյին հա-
դել, նա արդեն մոռացել էր, վոր վորոշել է Քա-
րամյանից հարցնել նրա ով լինելը: Համազգեստ-
ից նա և՛ տհաճ բան էր զգում և՛ ամաչում:
Հանկարծ վորևէ ընկերուհի այդպես չտեսնի՞
իրեն, այդպես կոպիտ սապոզներով, կաշվե
հաստ ու լայն գոտիով, կոմունարկան մինչև
ականջները: Մինչ նա մտածում էր, վոր մի
քանի քայլ հետո նրբափողոցով կանցնեն ու ել
վոչ վոքի չի հանդիպի, Քարամյանը հարցրեց.

— Դուք վո՞րտեղ էյիք աշխատում:

— Յե՞ս, — հարցրեց նա, — ինչո՞ւ յեք
հարցնում:

— Ձե վոր մենք միասին ենք լինելու,
պետք չե՞, վոր ծանոթանանք:

— Ինչո՞ւ չե, ինչո՞ւ չե, վրա բերեց նա
չփոթված, — Վահան Վարդյան, յես նկարիչ
եմ, նոր եմ ավարտել:

— Հա՞, — ժպտաց Քարամյանը:

Վարդյանը թեթևացել էր: Արդեն նրբա-
փողոցով էյին գնում, և բացի դրանից, վերջա-
պես առիթ յեղավ, վոր նա Քարամյանի հետ

խոսի, ճանաչի նրան: Վարդյանը մտածում էր, վոր հերթն իրենն է, վոր հիմա յեղ ինքը պետք է հետաքրքրվի Քարամյանով: Հենց այն է, նա ուզում էր խոսել, յերբ տեսավ, վոր դիմացից գալիս է իր նկարիչ ընկերը: Դեռ մի քանի քայլ հեռվից ժպտում էր նա: Վարդյանը ժպտով պատասխանեց նրա ժպտալուն: Յեվ ի՞նչ: Յերբ մոտ յեկավ, ընկերը, փոխանակ Վարդյանի ձեռքը սեղմելու, առաջին անգամ սեղմեց Քարամյանի ձեռքը, իսկ Վարդյանին բարևեց սովորականի նման:

— Բանակայի՞ն դարձաք, Հրայր, — հարցնում էր նա Քարամյանին, Վարդյանին անուշադուլթյան թողնելով, — լա՛վ է...

Վարդյանի աչքերում սառել էր զարմանքը: Ինչպես է, վոր իր ընկերն այդքան մտերիմ է Քարամյանի հետ, իսկ ինքը նրան չի ճանաչում: Ո՞վ է Քարամյանը: Ինչո՞վ է դբադվել նա նախքան բանակ գալը:

Վորպեսզի գոհացում առ իր մեջ ծագող այդ հարցերին, նա յետ ընկավ մի քանի քայլով, ընկերոջից Քարամյանի մասին հարցնելու:

— Ո՞վ է դա; — հարցրեց նա աչքերը կկոցած, Քարամյանի յետևից նայելով:

— Ինչպե՛ս, չե՞ս ճանաչում, Հրայր Քարամյանն է:

— Այսինքն ո՞վ է Հրայր Քարամյանը:

Ընկերը մի քանի խոսքով պատմեց, թե ով է Հրայր Քարամյանը: Այդ ծանոթացումն ավելի ուժեղացրեց Վարդյանի ցանկությունը՝

Քարամյանի հետ խոսելու: Վարդյանը վաղեց հասնելու Քարամյանին, մտքում կրկնելով:

— Ուրեմն արժի, արժի Հրայր Քարամյանի հետ մտերմանալ: —

Նա յերկար չարչարվում էր վորևե հետաքրքրական նյութի շուրջ խոսք բանալ, բայց չէր գտնում այդ նյութը: Ի վերջո հարցրեց.

— Ի՞նչ էք կարծում, ինձ թվում է, վոր տիտուր չի լինի, չե՞. — Քարամյանը քմծիծաղով ժպտաց:

— Ի՞նչ էք ասում տո՛, — պատասխանեց Քարամյանը. — Իհարկե՛ չէ:

... «Ձե, յես անսպասան պետք է նկարեմ նրա այնպես լավ առնական դեմքն ու նրա ժպտար» — մտածում էր Վարդյանն այդ րոպեյին: Բայց ինչ տգեղություն կլինի նկարի մեջ: Վարդյանը հանկարծ գգաց դա: Յեթե նկարի գորանոցը, պետք է նկարի նաև Հովոյին: Նա Քարամյանի կողքի մահճակալի վրա յե պառկում: Ի՞նչպես Վարդյանը կարող է նկարել նրա հիմարական արտահայտություն ունեցող դեմքը: Վարդյանը չի սիրում տգեղությունն ու տգիտությունը:

— Տգիտությո՞ւն... չէ վոր տգիտությունը թշնամի յե գեղեցկությանը: Յեթե ընդունակ ես պարտելու գեղեցկությունը, ընդունակ յեղիր նաև տգիտությունը չհանդուրժելու, — ասել է նա բազմիցս իր բաժակահատերում շիկահեր և մատնոցների չափ քթեր ունե-

ցող աղջիկներով շրջապատված քեֆասեղանի առաջ.— կորչի տգիտությունն ու տգեղությունն հանդուրժող միտքն էլ,— յեզրափակել է նա իր խոսքը աղմկալի ծափերից հետո, և ազահությամբ մինչև մրուրն ըմպել է հեղուկը: Այդպես է ասել նա: Իսկ հետո, ամիսներ, տարի հետո, սովորել է դրանց ավելացնել:

— Ո՞վ է ասել, վոր մեր իդեոլոգիան էլ դա չի պահանջում...

Արդեն ժամի մեկն է և դեռ վարդյանը քնած չէ: Անքնությունից դմբում է նրա գլուխը: Գովվուն է լավում գորանոցի լուսթյան մեջ: Ասում են, վոր դա անցնող ժամանակի ձայնն է:

Վարդյանն աչքերն անթարթ հառել է առաստաղին: Այն ի՞նչ յուսանկար է առաստաղին փակցված, վոր նայում է վար, ուղիղ նրա աչքերի մեջ... Լուսանկարը մեծանում է: Վարդյանն արդեն փակել է իր աչքերը: Բայց խրփած աչքերով ավելի պարզ է յերևում լուսանկարը: Ապա այդ լուսանկարը դառնում է կենդանի դեմք, կենդանի դեմք՝ աղջկական դալթակզող ժպիտը շրթունքներին: Սեւաչյա աղջիկ, թուխ խոպոպներով գեղեցկուհի, դո՞ւ յես այդ: Այո՛, դա Լյուբան է... Ժպտում է նա, վոր այտի վրա էլի յերևա փոսիկը: Խորամանկ Լյուբա: Չե՞ վոր այդպես Վահան Վարդյանն ավելի շատ է համբուրում քեզ: Ժպտում է Լյուբան և աչքերը փակած, Վարդյանը տեսնում է նրա այտերի նուրբ մկանների այն խրճիկների կծկվելը, վոր այնքան փորձել է ու նկարել չի

կարողացել: Հիմա ինչքան լավ գտել է: Կկարողանա նկարել նրան, նկարել այնպես, վոր նկարը լինի ինքը, կենդանի ու չարածճի Լյուբան, չար աչքերով, այտի փոսիկով, ժպտացող շրթունքներով ու թուխ խոպոպներով...


Բայց Վարդյանը բացում է աչքերն ու ճեմակ առաստաղն է միայն յերևում կիսով չափ ծածկված այն սովերով, վոր յամպին փաթաթված թուղթն է զցել նրա վրա:

Լյուբան չկա...

Վարդյանն սթափվում է: Նա հիշում է ինչ-վոր մի այդպիսի պատրանք ուրիշ անգամ էլ: Այդ յե՞րբ էր: Յե՞րբ:

Ո՛ր, տարիներ են անցել, ջրեր են հոսել: Վահան Վարդյանը տասնևհինգ տարեկան էր, յերբ առաջին անգամ համբուրեց աղջկա, մեկն այն աղջիկներից, վորոնք մատնոցի նման փոքր քիթ ունեն, բայց ունեն չեկ վարսերի դեզ, կլոր դեզ, ինչպես սոճու փնջածև սաղարթը:

Վահան Վարդյանը չի հիշում, թե ինչպես նա տասնևինգ տարեկան դարձավ: Հիշում է միայն, վոր մինչև տասնևինգ տարեկան դառնալը մի անգամ փոքրիկ մի աղջկա մերկացրեց ու թքեց նրա վրա, վոր դրա համար պապան նրան ծեծեց: Հիշում է, վոր իրենց սենյակում, յերբ այնտեղ վոչ վոք չկար, նա սեղանի տակ մտցրեց հարևանի աղջկան, տասը տարեկան աղջկան ու ինքն էլ այնտեղ մտավ... վոր դրա համար էլ մամայից ծեծ կերավ: Բայց իսկա-



կան, առաջին համբույրը նա համարում է այն համբույրը, վոր քաղեց փնջածև սաղարթի նման մազեր ունեցող խարտյաչ աղջկա քաղցր շըրթունքներէից: Այդ ժամանակ նա տասնևհինգ տարեկան էր: Այդ ժամանակ նա առաջին անգամ զգաց, վոր ինքն արու մարդ է և դործ ունի կնոջ հետ: Այդ որը նա սուլելով գրոսնեց քաղաքի փողոցներում մինչև ուշ գիշեր, իսկ յերբ անկողին մտավ, չկարողացավ քնել: Յեղավ ըրպէ, վոր նա վոչ քնած էր, վոչ արթուն: Ահա թագնված է նա, այն աղջիկը, բուլվարի փըսփըսող սոսնիների տակ, թագնվել է մեղրածոր ժպիտը շրթունքներին: Վահան Վարդյանը նրան այդ ժպիտի պէս քաղցր խոսքեր ասաց աղջկա մայրենի լեզվով և ամուր դրկեց: Ամուր դրկեց, շրթունքները հպեց նրա աչքերին և արթնացավ: Վոչ վոր չկար իր սենյակում: Պապայի ու մամայի սենյակում լույսը վառվում էր: Վահան Վարդյանն այդ որը չքնեց մինչև լուսադեմ և այդ որն ել սկիզբն է նրա իսկական կյանքի: Նրանից առաջ Վահան Վարդյանը կյանք չի ունեցել, նա ինքն այդպէս է համարում:

Հինգ տարիներ հոսեցին այդ որվանից: Այդ հինգ տարում այնքան փորձություններ ունեցավ նա, վոր բոլորը վերհիշել չի կարող, մանավանդ, վոր նրանցից չատերը դատապարտելի յեն: Այո, ինքը Վարդյանը դատապարտում է իրեն իր պատանեկության այնպիսի սխալների համար, ինչպէս որինակ այն սխալի, վոր

ինքը թղթախաղում տարվել է իր գեղեցկուհի սիրուհուն: Թղթախաղում տարվել է և վորովհետև նա խաղի մեջ կեղծ չի յեղել, խուսափել է սիրուհուց, վոր ընկերը մտերմանա նրան: Այդպէս էլ վարվել է ընկերը: Բայց ինչի են հարկավոր դրանք, ինչու Վարդյանը դրանք վերհիշի:

Նայում է Վարդյանն առաստաղին, Լյուբան այնտեղ չկա... և հիշում է նա առաջին համբույրը...

— Որե՛ր... տխրությամբ արտասանում է Վարդյանը:

Յերբ հինգ տարի անցավ առաջին համբույրից, Վահան Վարդյանը թողեց իր մանկության քաղաքը, բոլոր մտերմուհիներին և յեկավ Յերևան: Յեկավ Յերևան, բերելով իր հետ իր անձնական ալբոմը, վորի մեջ կային հեռու քաղաքում մնացած իր բոլոր մտերմուհիները, վորոնց մայրենի լեզուն Վարդյանին ավելի հարազատ էր, քան իր՝ Վարդյանի մայրենի լեզուն: Հին քաղաքումն էր թողել նա և այնտեղից նրան իր հետ բերել նաև քառասուն տարիներ ունեցող, բայց փթթող մի տիկնոջ: Փթթող՝ այդպէս է տեսել Վարդյանն այդ տիկնոջը:

Առաջին համբույր... առաջին պատրանք... ուշ յերեկո...

Վարդյանն հիշում է բոլորը: Նա յեկավ մանկության քաղաքից այնտեղ թողնելով բոլոր շիկահեր մտերմուհիներին: Նոր քաղաքում

նա տեսնում եր թխահեր աղջիկներ ռ վառ-
վում եր իր մանկության քաղաքի կարոտը: Ա-
միսներ եյին անցել: Վահան Վարդյանն արդեն
նոր մտերմութիւններ ուներ, բայց դեռ լսում եր
նա շիկահերներ թրքիջը հին քաղաքի բուլվա-
րում...

Մի որ, նա ծանոթացաւ թուխ խոպոպիկ-
ներով մի աղջկա հետ: Հին քաղաքից բերած
ճարակությունները չողնեցին: Բայց չկոտրվեց
Վահան Վարդյանի համառությունը: Շարաթ-
ներն անցան անողուտ: Վահան Վարդյանը հա-
շիվ պահանջեց ինքն իրենից:

— Սիրահարված եմ, թե ամեն անգամ վա-
նման ե,— հարցրեց նա ու անմիջապես պա-
տասխանեց իր հարցին:

— Ինչպես յերևում ե, սիրահարված եմ:—
Յերբ արդեն վորոշել եր, հանդիպեց ու ասաց,
վոր ինքը խաղ չի անում, վոր ինքը սիրում ե և
վորոշել ե ամուսնանալ նրա հետ: Իրանից հե-
տո ինչքան Վահան Վարդյանն զգում եր, վոր
չահում ե նրա վստահությունը, այնքան յեր-
ջանիկ եր յերևում ինքն իր աչքին:

Վարդանն ելի ուղում եր քնել, բայց շատ
եր ցանկանում, վոր ելի կրկնվի պատրանքը:
Աչքերը նա ամուր խփում եր, վոր ելի տեսնի
Լյուբային առաստաղի վրա: Չեր լինում:

— Քաղցր պատրանք, առաջին համբույր...
սեր...— մրմնջաց Վարդյանն ու աղբյուր քաշեց
գլխին: Մեկ ել նա բացեց գլուխը, նայեց ա-
ռաստաղին:

Լյուբան չկար...

Ծանրացել եյին Վարդյանի կոպերը: Նա
գլխեր, վոր մի քանի բուլե հետո քնած կլինի:
Շոյեց նա գլուխը: Ամեն անգամ նա կարծում
եր թե մագերի յերկար փնջերը պետք ե հետ
տանի, բայց մերկ գլուխն եր շոյում:

Այդ որը Վարդյանը քնեց տաղտուկ զգաց-
մունքով: Մի քանի ժամ հետո, հեղուկ մետա-
ղի պես ծանր նրա ախանջը պետք ե լցվեր զո-
րանոցի ավազի ձայնը:

— Արթնանա՛լ...

Յերկու—յերեք որում Վահան Վարդյանն
այնքան մտերմացաւ Հրայր Քարամյանի հետ,
վոր արդեն պատմում եր նրան իր անձնական
կյանքի բոլոր դեպքերը: Քարամյանը սիրով
լսում եր նրան: Լսում եր նրան ու քաջալերող
ժպիտով ժպտում: Վահան Վարդյանը վողկոր-
վում եր դրա համար և պատմում եր առանձին
մի շուքով: Սակայն վորքան Վահան Վարդյա-
նը շոյել եր իր պատմությունների մեջ, Հրայր
Քարամյանն այնքան ժպտո եր: Նրա ժլատու-
թյունը հաճախ նյարդայնություն եր ստեղ-
ծում Վարդյանի մեջ:— Ի՞նչ մարդ ե տո՛, բա
դա չի՞ ապրել, վոր վոչինչ չի պատմում,—
հարցնում եր Վարդյանն իրեն ու բացասաբար
գլուխը տարուբերում, սատանա՛ն տանի...:

Մի անգամ Վարդյանը Քարամյանից կար-
դալու դերք խնդրեց: Քարամյանը շտապում եր
ինչ վոր տեղ: Ասաց, վոր իր պայուսակում
գրքեր կան, Վարդյանը կարող ե ինքը նայել

ու վերցնել: Յերբ Քարամյանը դուրս եր գնում, Վարդյանը անհամբեր մարդու շտապողականությամբ բացեց նրա պալուսակը: Գրքերի վրա բացված եր խառն ձեռագրերի մի տետրակ: Նայեց նա ձեռագրին, կարգաց առաջին տողերը և կռահելով թե ինչ կարող է լինել, վայրկենապես ձեռագիրը թաղցրեց: Չլինի՞ թե Քարամյանը վերադառնա և ձեռագիրը շտա կարդալու: Գրքերի մեջ դնելով ձեռագիրը, իբր թե ինքը, Քարամյանն է այնտեղ թողել, Վարդյանը դորանոցից դուրս յեկավ լենանկյուն գնալու: Ճանապարհին նա կրանար ու կկարգար յեթե չվախենար, վոր կարող է մասնավել իր անքաղաքավարության մեջ, վոր առանց թույլտվության ձեռագիրը վերցրել է կարդալու:

Լենանկյունում քաղաքապետնք կար: Հազիվ է նա հիշում: Խորհրդային իշխանությանը հանձնված հակամանջութեան դորքերի մասին էլ ին խոսում: Պարապմունքից Վարդյանն այնքան բան է հիշում, ինչքան մանուկ որբերին տեսած իր յերագների բովանդակությունից: Յերկուան էլ հիշում է նա աղոտ ու կցկտուր, աղոտ, ինչպես մեզը:

Մի քանի անգամ պարապողը հանդիսավոր կերպով լռեց ու նայեց բոլորին: Իս լուսթյուն ստեղծելու նշան եր: Վերջին անգամ յերբ նա այդպես արեց, վոչ մի փափսուկ չկար: Պետը միայն Վահան Վարդյանին եր նայում: Վարդյանը գլուխը բարձրացրեց ու հանցան-

քում բռնվածի մեղավորությամբ նայեց պետին:

— Ընկեր Վահան Վարդյան, պարապմունքի ժամանակ կարդալ չի կարելի,— ուղղակի նկատեց պետը: Վարդյանը գիրքը ծալեց ու դրեց սեղանի տակը, իր ծնկների վրա: Աշակերտական տարիների նրա խաղն եր դա:

Մինչև պարապմունքի առաջին ընդմիջումը գլուխը կախած ծնկներին, իբր թե այդպես շտամ է, Վարդյանը կարգաց Քարամյանի ամբողջ ձեռագիրը: Իսկ պարապմունքի յերկրորդ մասից մինչև վերջն այդ ձեռագրի մասին եր մտածում: Իրա համար էլ նա պարապմունքի նյութից այնքան բան է հիշում, վորքան մանուկ որբերին տեսած իր յերագների բովանդակությունից: Յեվ ընդհակառակը, Քարամյանի ձեռագրի բովանդակությունն այնքան թարմ է նրա մտքում, վորքան Բրոդսկու՝ Ռազմահեղափոխական Խորհրդի նիստի նկարը, նկար, վորին Վահան Վարդյանն այնքան հավանել է ու սիրում է:

Յերբ պարապմունքը վերջացավ պետն սպասեցրեց Վարդյանին:

— Իրտե՞ք, ընկեր բանակային,— սկսեց նա լուրջ ու մի առանձին նշանակություն տալով իր խոսքերին,— պարապմունքի ժամանակ դուք անուշադիր ելիք: Այդպես չի կարելի: Կարմիր բանակայինը պարտավոր է իմանալ քաղաքական բոլոր հարցերը: Չեզ ավելի պետք է հայտնի լինի դա, քան մյուսներին: Չեմ ա-

սում թե ումաններ կարդայր վատ բան է, բայց պարապմունքի ժամանակ պետք է միայն լսել, կարմիր բանակայինը...

Վահան Վարդյանն այս անգամ էլ այնպես չէր լսում պետին, ինչպես պետը պահանջում էր:

Այնպես է խոսում հետս, կարծես յես նրա աչակերտը լինեմ, համողողի տոնով, ասացեք խնդրեմ—վրդովվում եր նա ինքն իր մեջ:

— Ներողություն, յես լսում եյի,—պատասխանեց Վարդյանը, բայց, զգաց, վոր պետը տեսնում է իր կեղծելն ու հաստատուն տոնով, յերկրորդ անգամ կրկնեց.

— Ազնիվ խոսք, յես լսում եյի, ընկե՛ր պետ:

— Բազար չանենք, ընկե՛ր Վարդյան,— պատասխանեց պետը կտրուկ,— դուք կարդում եյիք,— ապա նա սիրալիբ ժպտաց, վորով ուղում եր ասել, վոր ինքը խորամանկ է և ներողամտությամբ է վերաբերվում:

Վարդյանը գլխիկոր դուրս յեկավ լենանկյունից ու զորանոցը մտնելով, մտածեց մի անգամ էլ կարդալ ձեռագիրը:

Յեվ հիմա թարմ է Վարդյանի մտքում ձեռագրի բովանդակությունը, ինչպես Բրողսկու նկարը: Իսկ այսոր Վարդյանն էլի անգրադարձավ այդ ձեռագրի բովանդակությանը, վորովհետև այսորվա քաղաքապարապմունքին Հովոն յերևաց իր բութ ուղեղով: Իսկապես, վոր բռի: Հովոն Վարդյանի մեջ մտքերի կա-

պակցություն ստեղծեց Քարամյանի ձեռագրի մասին մտածելու: Ձեռագիրը... չե՞ վոր այդ ձեռագիրն ասազին լույս սփռեց Քարամյանի կյանքի վրա, նա ցույց տվեց թե ինչով է ապրում ու հուզվում Քարամյանը: Ձե՞ վոր հենց դա յեր Վահան Վարդյանին հետաքրքրողը:

Վարդյանը նստել եր այդորվա որագիրը գրելու, բայց շուտ եր տալիս Քարամյանի ձեռագրի արտագրության թերթիկները: Փորձեց նա ցած դնել դրանք և մատիտը վերցնել գրելու, բայց չարեց: Ապա, վերցնելով մատիտը, սկսեց որագրի առաջին տողերը:

«Լավ է, վոր այսոր որագրի փոխարեն Քարամյանի ձեռագրի արտագրությունը կլեյով կպցնեմ այս թղթին: Հետո, տարիներ հետո, յերևի կկարդամ և շատ բաներ կհիշեմ, շատ բաներով կապրեմ, ինչպես առհասարակ զգայուն մարդը կարող է ապրել անցյալի անվերադարձ, բայց հենց դրա համար ե՛լ ավելի հուզող քաղցրություններով ու դառնություններով:

Ահա Քարամյանի ձեռագիրը: Ինչպես յերևում է, դա մի կտոր է մի մեծ գործի, վորը պետք է գրի նա».—

«Մայրս, լեռների ու կիրճերի կայտառ մի
յեղջերու, բարակիրան մի հովվուհի, առաջին
անգամ յերկունքի մեջ է յեղել հազար իննը
հարյուր տասը թվին: Ու նրա այդ առաջին
յերկունքից ծնվել էմ յես, հազար իննը հա-
րյուր տասը թվին: Մորս կաթով մեծանալուց
հետո, յես կյանքի թույնն էմ ըմպել ու կաթի
պես քաղցր է թվացել ինձ այդ թույնը, յերբ
դեռ մանուկ էմ յեղել, ապա՝ լեղու պես դառն,
յերբ պատանի յեմ դարձել:

Անցել են ժամանակի միավորները: Կտրը-
տել էմ յես աղայի տված տասներկու զույգ
տրեխները վեցը տարում, և վերջին զույգ
տրեխի թելերից բռնած, ցեխոտ տրեխը աղա-
յի դեմքին էմ խփել: Ու յերբ կոմ յերխտական
ստաժս անցել է յերեք տարուց, քաղաք էմ հա-
սել սովորելու:

Ելի անցել են ժամանակի միավորները և
ահա յես քսաներկու տարեկան էմ:

Մի ամիս հետո բանակ էմ գնալու...

Ուզում էմ, վոր ամիսը դառնա վայրկյան,
վոր ժամանակն իրենից արագ հոսի, արագ,
ինչպես իմ բնախոսական ու դիտակցական ա-
ճումը, ինչպես իմ յերկրի աճումն ու թափը:

Մի ամիս հետո յես բանակ էմ գնալու...

Գարուն էր: Ծաղիկները փթթում էյին:
Ծաղիկները փթթում էյին, վոր ծանրությամբ
որորվեն նրանց վարսանդները: Ամառ է, հասել
է կյանքն իմ մեջ ել, հասուն մրգերի պես, հա-
սուն հասկերի պես իմ մեջ ել հասել է կյանքը:
Գարուն էր, փթթեցին ծաղիկները—այդ իմ
կյանքի պատանեկության տարիներն էյին:
Ամառ է, ծանրությամբ որորվում են վար-
սանդները, այդ իմ կյանքի այսորն է:

Ու մեկ ամիս հետո յես բանակ էմ գնալու:

Ավելի հուզիչ ու ազնիվ բան կարո՞ղ է լի-
նել, քան այն, յերբ սրախողողում ես, արյուն
թափում, վոր վերջ տրվեն բոլոր, բոլոր սրա-
խողողումներին, վոր աշխարհում արյան ել
վոչ մի վտակ չՖչա...

Յես կարմիր բանակ էմ գնալու սրի, հրա-
ցանի ու գազի գործածման արվեստը սովորե-
լու, հրաման կատարելու ու հրամայելու: Այդ
իմ պարտքն է: Չէ վոր հովվուհի յե ինձ ծնել
և յես սնվել էմ այն դառնությամբ, վոր կյանք
է կոչվում, ու սնվում էմ այն քաղցրությամբ,
վոր կյանք է կոչում:

Յես չեմ տեսել յերեկը: Յերեկվա մա-
սին մարդիկ ու գրքերն են պատմել ինձ: Յես
նոր կյանքի հետ էմ բուսել ու նրա հետ էմ ա-
րագ աճում: Բայց թե ի՞նչ բույս էր սնվում
յերեկվա հողում, թե հողը վո՞ր արևի ջերմն
եր իր մեջ քամում, այդ գիտեմ յես: Յես գի-
տեմ, թե ինչ էր զգում ու ինչ էր մտածում յե-

րեկվա մարդը: Յես գիտեմ, թե ինչ զգացումներով եր բանակ գնում յերեկվա մարդն էլ:

Յես մտածում եմ այդ մասին և հանկարծ հիշում եմ ընկեր Ակորին: Ընկեր Ակորին եմ հիշում ու մի անմոռաց յերեկո:

Անմոռաց յերեկո...

Վեց ամիս առաջ եր դա, բայց վեց տարի հետո յեւ այսօրվա նման կհուզի ինձ այդ յերեկոն:

Սորը ձորերով խշշում եր ջուրը: Արևը վաղուց կնճռոտ սարերի սապատավոր մեջքերից գեպի վար եր գլորվում: Ստվերը սև ու թափանցիկ սավանի պես փռվել եր կիրճերի վրա: Թփուտների սոսափյունն էլ ջրի խշշոցի հետ հոսում եր ձորով. գարունը շնչում եր լիաթոք, բուրում եր գարունը:

Կնճռոտ, ինչպես սարերը, և մթազնած, ինչպես ամպող յերկինքը, գետի ափին, քարի վրա մեզ մոտ նստել եր Ակորը: Ուղիղ յերկու ու կես անգամ ինձանից շատ գարուններ եր տեսել նա ու վորպես տարիների վաստակ, կրճքին ուներ կարմիր ժապավենով փաթաթված մի շքանշան: Պղնձի դեղին ու փայլվիլուն մի կտոր մի ափից մյուսի մեջ նետելով, նայում եր նա հեռուն ու խոսում մեզ հետ:

— Ա՛, ճուտեր, ասում եք թե խի՞ չեք պլանները կատարում, բա իմ ասած եդ անփութությունը վոր չլի, չենք կատարի՞: Բա Նիկոլի վախար եդ ջահելներն աշխատեյ են խազեյինի հմա՞ր, վոր ետր եյ մեր արտադրու-

թյունի զադրն իմանա՞ն... Ե՛, ճուտեր ջան, լավ ա, վոր հենց չեք տեսել...:

— Բայց, ախար, ընկեր Ակոր, հասակավոր բանվորներից ել կան, վոր դործալքումներ են ունենում:

— Հո յես չժխտեցի՞, ա՛ բալամ, իհարկե, հասակավոր բանվորներից ել կան: Հին բանվորներից ել մեկ-մեկ պլանիցներ են մնացել, վոր մեր արտադրութունի զադրը չեն իմանում: Իմ կարծիքով, դուցե դուք ասեք, վոր յես սխալ եմ, համա դա իմ կարծիքն ա, դրանք փշատի ծառի պես են, ել չեն դզվի: Իսկ յերկու յերեք ջահել վոր կան պրոգուլ անողներիցը, կզզվեն: Ճի՞շտ ա...:

Ասենք մի քիչ ել յես եմ փշատի ծառի նման...

Գթի տակ ծիծաղեց Ակորը, ապա թերվեց դեպի մեզ:

— Ճիշտ ա, մեկ-մեկ յես ել եմ խմում, համա պրոգուլ չեմ անում:

— Հա, մոռացա, գլխավոր պատճառը արեզլիչկեն ա: Ղեկավարությունը խամ ավտոմոբիլ քողի նման գործը զայդին առաջ չի տանում... Հրեն, տեսնո՞ւմ եք, մեկ պեչկին ա վառում ետրվա տեմպի դյուռ որը: Ասում են՝ թե եյեքարական եներգիա չկա: Բա եդ եներգեն չե՞ վոր երեկ կար, ետր մտա՛վ... ելի ասել եյի հա՛...:

Ու ընկեր Ակորը գայրուլթով նայեց հեռուն, ճուլաբանի ծխնեչույղից դուրս յեկող

ծխի քուլաներին, վորոնք ծանորեն յերկինք եյին բարձրանում:

— Շան վորդկերանց բանը մարդ չի հասկանում, ինչքան ել ժողովներումը բոս եյուլթյան ես խոսում—եյի են ա ու ելի են: Ասես վնասարարություն ա, դիրեկտորը կոմունիստ ա, ասես սխալ ա, բա ըտենց ել սխալ կլի՞...:

Ընկեր Ակորը գլուխն որորեց ու շարունակեց.

— Աղնիվ խոսք եմ ասում, հենց գաղեթի մեջ ել գցելու բան ա, գրեք...

Մութը խտանում եր ու խշխշում եյին ձորի ջուրը, թփերը, հողը: Կարծես ամբողջ ձորը լցված եր վճիտ ջրով ու հանդարտիկ ներքե եր հոսում:

Լավեցին աններդաշնակ յերգի ձայներ, ապա արձագանքի հազարաձայն թրթիռները:

Սիրած տղես մի կաղնի ծառ,
Եսոր կարմիր բանակի գնաց,
Ենքան սիրուն, ենքան պայծառ,
Վոնց վոր՝ սրած դանակի գնաց:

Յերգում եյին ամեն մեկն իր համար:
Յերգում եյին տղաներ ու աղջիկներ: Ամբողջ ձորը յերաժշտությամբ եր լցված:

Ընկեր Ակորը խորը շնչեց, այնքան խորքից, վոր կարծես հառաչեց:

— Տեսնո՞ւմ եք, ինչ են անում մեր լակոտները:

— Ովքե՞ր են դրանք:

— Տասը թվականի ծնվածները: Պարտա՝ մունքից են գալիս: Հմիկվանից սովորում են, վոր բանակի գնան քիչ ու միչ հասկացած. դա՛ ա՛... աչխարհք ա, ե՛լի...:

— Բայց ինչո՞ւ դու հառաչեցիր, ընկեր Ակոր:

— Յանի թե ի՞նչ արի:

— Ա՛խ քաշեցիր:

— Ա՞խ, ախ չե՛, ամա մի բա՛ն ընկավ

միտս:

— Ի՞նչ:

— Հե՛չ:

— Իսկապես, ինչ հիշեցիր, ընկեր Ակոր:

— Հին մի բան, հե՛չ:

— Հետաքրքիր ե:

— Ի՞նչ հետաքրքիր, ա՛չի, սալդաթ գնալըս եր...

— Պատմիր լսենք, ընկեր Ակոր:

— Ի՞նչ պատմեմ, ա տղա, են ընկավ միտըս, վոր մենք լացով ու շիվանով ինք սալդաթ գնում, իսկ մեր ես լակոտներն ու իրենց սիրած աղջկերքը յոթ ամիս առաջ են ուրախանում ու յերգով ասում թե՛ յարս կարմիր բանակի գնաց:

— Լավ չի՞, վոր այդպես ե:

Ընկեր Ակորը հանդիմանությամբ նայեց մեզ:

— Բա լավը չի՞. ել հեղափոխությանն ինչի՞ հմար արինք, վոր լավը չի, հլա դրա-

նից ել ստալայի, նրանք գիր ու դարամ ել կստ-
վորեն:

— Իսկ դուք հին բանակում չեյի՞ք սովորում:

— Իա չեյինք սովորո՞ւմ, իհա՛րկե սովորում եյինք:

— Ի՞նչ եյիք սովորում:

— Ինչ եյինք սովորո՞ւմ, սովորում եյինք ... թագաւորի կնդա անունը, մենձ ու պուճուր աղջիկների անունը, ու ով գիտի, հազար ու մի դհենց մատրարազ բաներ...

Ընկեր Ակորի շրթունքների վրա խաղաց բաղմախորհուրդ մի ժպիտ: Մի առանձին վայլ ստացած աչքերով նա մեզ նայեց ու հարցրեց.

— Թե վոր ուղում եք, մի բան կպատմեմ, տեսնում եմ, վոր հեռաքրքրվում եք:

— Պատմիր, ընկեր Ակոր, պատմիր:

— Լա՛վ, պատմեմ: Եդ վոր ասում եմ, ոուսի ու յապոնացու կովից առաջ եր: Սալ-
դաթ գնացի: Համա ոուսերենից մենակ յերկու խոսք եյի իմանում՝ մեկը վադեմ եր, մեկն ել խլերը: Մին աչքը պուճուր, մինը մեծ մի ո-
ֆիցեր ունեյինք, կգար ու կասեր.

— Նու կա, Ակոր Սարկիսով, կա՞կ իմ յա յեվո վիսոչիսովո իմպերատորա վսերասիսկովո, — յանի թե, ի՞նչ ա թագաւորի անունը: Յես նրանց եդ քաղպարապմունքիցը բաւարար չեյի, համ ել ոուսւթարը լալ չեյի իմանում, ասում եյի.

— Իմ յա յեվո վիսկոսովո վսեսեսկի Նի-
կարայ Ալեքսանդրովիչ Ռոմանով. — յանի թե
թագաւորի անունը՝ Նիկարայ Ալեքսանդրովիչ
Ռոմանով ա, համա խոսքերս լալ դուքս չեյին
գալի ու մի քանի պլեա եյի ուտում:

— Մի որ ել եդ մատրարազ շան վորդին
եկավ թե՛

— Սարդիսով, կա՞կ յեյո, յեվո չի, հա՛,
յեյո, վելիչեսովա իմպերիատրիցա վսեսասիս-
կովո, — յանի թե՛ ի՞նչ ա թագաւորի կնդա ան-
ունը:

— Կարացիմ ասեմ: Ասեցի ու թողեց գնաց:
Հմի միտս չի, Մարիա յե՞ք, թե՛ դահրումար:
Մի որ ել, ելի եդ ոֆիցերն եկավ ու եդ բոլորը
հարցնելուց հետո, հարցնում ա. —

— Կա՞կ իմ յա պերվոյ նասրեդնիցի յեվո
վելիչեսե, ու հետեվին ել մյուս խոսքերը. — յա-
նի թե՛ ի՞նչ ա թագաւորի մենձ աղջկա անու-
նը: Եդ մեկը մտիցս գնացել եր: Չորս պլեա
կերա, սիրտս դադվեց: Սիրտս դադվեց, իսկ
շան վորդի քորը չորս պլեաը բովարար հետաբ
չարեց ու չորս պլետից հետո յեյ հարցնում ա,
թե ի՞նչ ա թագաւորի մոր ու կնդա անունը:
Վախր վատ բան ա, են ել թագաւորի շան վոր-
դի ոֆիցերներիցը, համա վոր համբ շատ են
տանում, վախն ել ես մոռանում, սարսաւին ել:
Եստեղ հերոս երավ ու հայերեն ուչունց տվի:

— Տո քո թագաւորի մորն ել ըսենց աս-
նեմ... կնգանն ել... մենձ ու պուճուր աղջիկ-
ներինն ել... հլա տատինն ել վրեն...

Եստեղ նրա հերսն ել ելավ ու յես հետաքը
կորցրի, թե քանի պլեա իջավ գլխիս: Խփեց,
դինջացավ ու ելի հարցնում ա:

— Ի՞նչ ասեցիր, ասում ա:

— Ասում եմ թե ոուսվար դու եր, հայե-
րեն ասեցի:

— Մվորոչ,—ասում ա,—դա շան լեզու
յա, բուսվար պետք ա ատես,—ու մի հատ
ենպես տվեց աչքիս տակը, վոր հազար պեծեր
տեսա: Աչքիս տակը արնտովեց, կաշին պլոկ-
վեց ու մինչև ետոր ել տեղը յերևում ա, նշան
ա մնացել, ափսոս լիս չի, վոր շանց տամ...

Ընկեր Ակորը լուեց: Մեկ ել նա խոր շունչ
քաշեց:

— Ես ել նրանց քաղպարապմունքն եր: Դե
ա՛րի ու թագավորի կնդան ու աղջկերանց ու-
շունց մի տուր...

Նա կատակով խփեց ուսիս ու ժպտաց
մթության մեջ:

— Եղպես բաներ են ըլում, ճուտեր ջան...

— Դեռ են չեմ պատմում, թե իմ սիրած
աղջիկը վոնց եր լաց ըլում, վոր ինձ սալդաթ
ին տանում, թե վոնց իմ սալդաթ գնալուցը
մի որ առաջ ձորի մեջը վզովս եր ընկել ու ա-
սում եր թե, ինչ ել անեն՝ ինքը չի թողա, վոր
ինձ սալդաթ տանեն:

— Թող Նազո ջան.—ասում եմ.—խալխը
կտեսնի, ամոթ ա, իսկ նա վզովս ա ընկել ու
չէ՛ վոր չէ՛, թագավորը դուրսը քարովն ա
տվել, վոր քեզ սալդաթ ա տանում, յես քեզ

չեմ թողա... դե խեղճը ի՞նչ կարար աներ:
Յես մեկ ել նրան են ջահել վախտվա դուստ-
թովս պինդ գրկեցի, պոռչտի արի ու գնացի:
Մեկ ել յես դառնամ, տեսնեմ՝ Նազոն գրուխը
մի քարի վրա դրել ա ու լաց ա ըլում: Սիրտս
չկարաց համբերի: Յետ դարձա, մեկ ել գրկե-
ցի ու պինդ պինդ պոռչտի արի: Ուրախացավ
Նազոն, հենց իմացավ թե ել չեմ գնում: Ար-
ցունքը չորացավ Նազոյի կարմիր թշերի վրա:
Ես անգամ յես թողեցի նրան ու առանց յետ
նայելու, վոր չլի թե սիրտս չկարա համբերի,
գնացի:

Ել չեմ պատմում, թե վոնց յես սաղա-
սութունիցը եկա ու տեսա, վոր հերն ու մերը
Նազոյին դուռով մարդու ելին տվել ու հալա
Նազոն մի տղա յել ուներ: Թե վոնց նրա թա-
ղա մարդն ել իմ ջգրու եղ տղի անունը դրել
եր Ակոր: Թե վոնց՝ յես ուզում ելի, վոր եզ
մարթուն սպանեմ, բայց Նազոն չթողեց թե՛
Ակոր ջան, հո չես գժվել, ի՞նչ անենք, վոր
աստոծը եղպես խարար արեց մեր բախտը,
բնենց հաշվենք, թե ինձ դչերն են կերել ու դու
չես կարացել ազատես:

Համ ել ի՞նչ... Եղ բոլորն եղպես եր ըլում,
վոր թագավորի ու նամեստնիկների կնանիքը
հետևները լավ հաստացնեն, շատ վոսկու ու
բուլյանտների մեջ թաղվին: Համա կերան...

Ամպերը ծածկեցին հորիզոնը: Գոռացին:
Անձրենների առաջին կաթիլներն ընկան մեր
գեմքերի ու թփերի վրա: Գոռացին ձորերն ել:

Գրուացին ավելի խուլ ու խորքից: Տարերքե սկսվում եր:

— Գնա՛նք, — ասաց ընկեր Ակորն ու ծանրությամբ վեր յելավ: Հեռվում յերևում եր ձուլարանի ծխնելույզի կարմիրի, կապույտի ու կանաչի խառը բոցը:

— Ասում են թե խի՞ չեք սլանները կատարում: Բա ղեկավարութան արեգլիչիկն թողնում ա՞, վոր կատարենք, հարկավոր ա, վոր հենց կենսկոմն ել իմանա եզ մասին...

Ապա, կարծես չարունակելով նույն միտքը, ընկեր Ակորն ելի սկսեց խոսել ինքն իր հետ:

— Եղպես եր իմ սարդատութունը: Հիմա հալբաթ վոր ուրախութունով կերթան կարմիր բանակ ու հլա աղջիկներն ել յերգ կասեն թե՛ յարս կարմիր բանակ գնաց, քե յարս սիրուն եր, դանակի դայդա սուր եր ու ըզեց բաներ... Տեսնում եք, ինչ լավ, սիրուն ա պեչիկ բոցը, կա՞րաք համբարեք քանի գույն ա: Են մեկը կարմիր, մեկելը — կանաչ, մեկն ել, են մեկն ել... գուր ասեք, ձեր աչքերը լավ են ջոկում: Շատ սիրուն ա... Ճիշտ ա, հիմա մեկ պեչիկն ու վառվում, բայց եզուց մեկն ել խոտի կզցենք, մյուս որն ել նորը կշինենք: Իրա համար ա, վոր մեր յակոսաներին կարմիր բանակ են ուղարկում: Ուղարկում ենք, վոր մեր արդյունարբութունի պեչիկներն արխային, ապահով ու գյուղ վառվեն: Շուտ քելեք, վոր չթռվենք: ամպերը նոթերը կխտեցին...

Դղրդում եյին ամպերը: Չորերն արձադանքում եյին:

Անձրեք մաղվեց, մեղմ, ապա՝ հորդ կաթիլներով ու մեկեն:

Մեկեն ել դադարեցին յերգն ու նրա արձագանքը՝ իրենց հաղարածայն թրթիռներով:—

Վեց ամիս առաջ եր այդ յերեկոն, բայց վեց տարի հետո յել յես չեմ մոռանա դա: Յեվ հիմա, յերբ մի ամիս հետո բանակ եմ գնալու, հիշում եմ այդ յերեկոն ու Ակորին: Հուշ, վոր լցնում ե ինձ մարտական հույզներով, ազգմի ղգացմունքներով, շողշողուն սվինի ու փայլիլող սրի կաշոտով: Չե՞ վոր նրանցով մենք արյուն ենք թափելու, վորն աշխարհում վերջին արյունը կլինի, նրանցով մենք արյուն յենք թափելու, վոր աշխարհում ել արյան վոչ մի վտակ չհոսի: Իսկ մենք թափում ենք արյունն այն մարդկանց, վորոնց արյան մեջ վորպես շաքարային նյութեր, ծծվել են միլիոնների միլիոնները, արյունը, կյանքը...

Աչուն ե: Մեկ ամիս հետո, հազարների հետ, վորոնց հովվուհիները, ղեղջիկուհիներն ու բանվորուհիներն են ծնել՝ փաթաթել ցնցոտիների խանձարուրի մեջ, յես բանակ պետք ե գնամ, կարմիր բանակը...»:

Քարամյանի ձեռագիրը սոսինձով իր որագրի տեարակին կպցնելով Վարդյանը մեկ էլ թերթեց այն: Թերթեց ապա ձախ աչքն ու ձախատր ձախ ձեռքի մեջ առնելով, մատիտով խզմզեց Քարամյանի ձեռագրի արտագրության տակ:

«Նշանակված «II», մասը չգտա Քարամյանի չեմոդանում: Հետաքրքրական է, թե ի՞նչ կգրեր նա: Բայց բավական է այսոր: Յեթե այսորվա որագիրս Քարամյանի ձեռագրերն է, նա արդեն բլոկ-նոտի քսան էջի չափ բան է: Վ՞որ որն եմ այդքան որագիր գրել: Քիչ է մնում նկարչությունը թողնեմ ու դրող դառնամ: Լավ է քնեմ: Միևնույն է, առավոտը ժամը 6-ին կարթնացնեն: Հո որագիրը գրելու համար ուշ քնելս հարգելի չե՞ն համարի: Մ՞ե՞ք, եզ զինվորական «վերկա՛ց»-ը, վոնց վոր սընդիկ լցնեն ականջիս մեջը: Ասում են պետք է սովորել դիսցիպլինային: Քարամյանն էլ է ստում: Յես ել իհարկե բանակ դալուց առաջ նրա նման կարող եյի խանդավառվել ու այսպիսի բաներ գրել: Բայց... բանն այն է, վոր նա ճիշտ այդպիսի տրամադրությամբ է լցված հիմա յեւ, իսկ յես՝ հակառակը, յես զգում եմ այդ:

Ինչո՞ւ:—Դա ինձ դադանիք է, այդ «ինչու»-ին պատասխանել չեմ կարողանում յես...

— Չե, յես պետք է նկարեմ Քարամյանի այնպես լավ առնական դեմքն ու նրա կիտաժպիտը: Պետք է նկարեմ ու իրեն նվիրեմ...

Գրեթե ամեն որ Վարդյանը Հրայր Քարամյանի ձեռագրի մասին է մտածում: Նա յերբեք չի կարողանում մոռանալ այդ ձեռագրի բովանդակությունը: Ինչքան շատ բան տեսցայդ ձեռագիրը նաև իրեն՝ Քարամյանի մասին: Իսկ թե ինչու Վարդյանը մեկ էլ կարդաց ձեռագիրը և այն սոսինձով իր որագրի տեարակին փակցրեց, դա յեւ իր պատճառներն ուներ:

Այդ որ առավոտյան սովորականի նման լավեց ավազի ձայնը.

«Արթնանա՛լը»...

Հինդը բուպեյում հագած, պատրաստ եյին բուրբը: Սկզբեց Փիզկուլուուրայի պարապմունքը: Ամենորվա պես, Վարդյանը վստահ էր, վոր ամենից հաջող ինքն է քայլում, դուրսը հպարտ, կուրծքը՝ դուրս: Վահան Վարդյանը չէր յերկմտում, վոր ավազը դո՛հ է իրենից: Ավազն է կամանդայում ղեկավարում նաև շարային պարապմունքները: Վարդյանը կարծում էր թե Սվազի քեֆը դայիս է իր՝ Վարդյանի իսկական զինվորական կեցվածքի համար: Այդպես էր հավատացած նա, բայց պարապմունքից հետո նա ավազից լսեց այն, ինչը չէր սպասում և լսեց սպասածի միանդամայն հակառակը:

— Ընկեր վահան,—ասաց ավազը մոտենալով վահան Վարդյանին,—դու կծկվում ես քայլելիս, թեվերդ լաթի պես թույլ կախում

ես ուսերիցդ, կարծես թե բլուզիդ թեվերը
դատարկ լինեն. գոտիդ ել շատ թույլ ես կա-
պում:

—Ներսիսյանը, ընդհակառակը,—պա-
տասխանեց Վարդյանն այնպես հեվ ի հեվ շըն-
չելով, վոր քթի տակի նոր բուսած չեկ մա-
գիկները շնչից տատանվեցին.—ընդհակառա-
կը, յես վատ չեմ քայլում:

—Վատ ես քայլում Վարդյան, իզուր
պաշտպանվում ես, քայլելիս վոր լուսանկա-
րեն քեզ, լուսանկարդ իսկական կարիկատուրա
կլինի,—բարեկամական տոնով ասաց Քարա-
մյանը, այնպես, վոր Վահան Վարդյանը վո՛չ
միայն չվիրավորվեց, այլև շոյվեց: Միայն մի
բան չի մոռացել Վարդյանը: Դա Սարգսի խաչ-
թեխն էր: Այդ ժամանակ Սարգիսն էլ մեջն ըն-
կավ թե՛

—Բան չկա, աղջիկներ ճեռ շատ ա պատ-
բուշկա արել ու կծկվել, գիտի թե նրանց հետն
ա քայլում.—

Ճիշտ է, վոր Սարգիսն էլ չարամու-
թյամբ չասաց այդ, դա Վարդյանն էլ հաս-
կացավ, բայց ելի վիրավորական բան զգաց
էր նկատմամբ:

Սարգիսը, վոր կամանդայի բանակային-
ներից մեկն էր, շատ էր սիրում Վարդյանին
նյարդացնել: Իսկ Վարդյանը նրան պատաս-
խանում էր արհամարհանքի կարճ խոսքերով:

Այդպես: Կոտրված էր Վահան Վարդյանի
արամադրությունը, յերբ լենանկյուն մտան:

Սակայն դա չէր կարևորը: Կարևորն այն դեպ-
քնն է, վոր Վարդյանին հիշեցրեց Հրայր Քա-
րամյանի ձեռագիրը:

Ֆիզկուլտուրայի պարապմունքից հետո
մտան լենանկյունը: Կամանդայի լենանկյունը
այնքան էլ կահավորված չէր, բայց ելի այն-
տեղ կային Ստալինի, Վորոշիլովի, Սմոլինի,
Բուդյոննու և դիվիզիայի քաղբածնի պետի
լուսանկարները:

Վորոշիլովի լուսանկարը: Հենց ինքը,
Հովո՛ն, շատ անգամ է կանգնում այդ լուսա-
նկարի առաջ ու խոսում նրա հետ:

—Սիրելի ընկեր Վորոշիլով ջան, իմալ
ա քո քեֆ, լա՛վ ես... Ապա հիմարական հըռ-
հըռոցով թեքվում է դեպի սղաններն ու ասում.

—Հըս տեսեք, տղերք, յես բսեցի հնկեր
Վորոշիլով իմա՛լ ես, լա՛վ ես, կսա՛ լավ եմ,
Հովո ջան, բրա՛ դո՞ւ իմալ ես...

Պարապմունքն սկսվում է: Պետն էլի Հո-
վոյի հետ է զրույցի բռնվում: Այդ զրույց-
ներն արդեն տաղտկալի են Վահան Վարդյանի
համար: Միշտ միևնույն բանը է միշտ՝ տար-
բական:

—Քսան յերեք տարեկան ու այբուբեն,
և, դրանք էլ չի հասկանում, դժվար թե դրա
գլուխն այսուհետև բան մտնի.—մտածում էր
Վարդյանը:

Պետն հարցնում էր.

—Ինչո՞ւ ցարի բանակում բացի կրոնից
ու թագավորի տոհմի պատմությունից ուրիշ
բան չեյին սովորեցնում.—

«Հասարակ հարց. տեսնես այդ հարցի՞ն ել չի պատասխանի» — մտածեց Վարդյանը: Բայց Հովոն ուղեղացալ ունեցող վոչխարի նման չարժում եր գլուխն ու վոչխարի հայացքով նայում սեղանի կարմիր ծածկոցին: Յերբ պետը յերկրորդ անգամ կրկնում եր հարցը. նա չարչարվելով պատասխանում եր.

— Ձեմ իմանում, անգրագետ եմ:

Ու համարյա բոլոր հարցերին:

— Եհ, եդ անտերն իմ մտից ելեր ա, մոռցեր եմ.

— Ի՞... անգրագետ եմ, չեմ իմանում:

— Յես ի՞նչ գիտամ...

— Ձեմ իմանում, ընկեր պետ, թող Հրայրըն ըսա, յես ել սովորեմ...

Յեվ այսպես շարունակ:

Բայց Վարդյանը դարմանում եր, վոք յերբեմն վոչ միայն ճիշտ եր պատասխանում Հովոն, այլև՝ հաստատակամ ու վճռական, նույնիսկ բարկացած:

Մի անգամ պետը հարցրեց նրան:

— Ընկեր Հովո, ի՞նչ ես կարծում, ինչո՞ւ կուլակին ել բանակ չենք բերում. —

Նկարիչ պետք եր լինել լավ տեսնելու համար, թե ինչպես փոխվեց Հովոյի դեմքի արտահայտութունը: Տեսալ դա Վարդյանը և Վարդյանը չի մոռանում, թե ինչպես Հովոն խեղդվում եր բռի մեծացած տղաներին հատուկ անդուրեկան հոհոցից: Հովոն հոհոում եր, իսկ Վարդյանը քիչ եր մնում, վոր տրաքվի:

Նա յերբեք չի տանում այդպիսի անդուրեկան վայրենի ծիծաղներ:

— Ընկեր բանակային, ինչո՞ւ յեք ծիծաղում, յես ձեզ բան եմ հարցնում. — զայրանում ե պետը Հովոյի վրա:

— Ախր հնկեր պետ, — պատասխանում ե Հովոն ելի հոհոալով. — խո մեր խելք հացի խես չկերանք, վոր կուլակին բերենք բանակ:

— Նու, ասա՛, ուրեմն ինչո՞ւ չենք բերում:

— Ինչո՞ւ, կուլակը մեր թշնամին ա, ինչո՞ւ:

— Տեսնում ես, գիտես ել ինչո՞ւ ես ասում թե չգիտեմ:

— Յեսիմ, չեմ իմանում ելի...

Պետն հարցրեց:

— Ձեր գյուղում քաղիմբակ կա՞ր:

— Քաղիմբակ, ինչի՞ չե.

— Հապա ինչո՞ւ չես սովորել.

— Յեսի՛մ...

— Բատրակ մարդ ես, պետք ե սովորելի:

— Հառաջուց չսովորեբեմ, մկա նո՞ր...

Պետը նայեց Հրայր Քարամյանին, ասպս մյուս բանակայիններին ու յեղբափակեց այդ գիալոգը:

— Ուրեմն գորակոչիկների հետ պարապելու ասպարիզում նրանց գյուղի աշխատանքը ինքնահոսի յե մատնված յեղեյ:

Բայց հետաքրքրականն այդ հարցերն ու պատասխանները չեյին:

Հովոն ամեն որ ել տեսնում եր Վորոշիլովի նկարն ու խոսում նրա հետ: Իսկ յերբ պետն հարցրեց, թե ո՞վ է Կարմիր Բանակի ղեկավարն ու Ռազմահեղափոխական Խորհրդի Նախագահը, Հովոն ելի հիմարական ձևով ժողուաց:

— Չգիտե՞ս ով է,— կրկնեց պետը:

— Չե, չեմ իմանում:

— Ինչո՞ւ չես իմանում:

— Չե՛, չե՛ իմանում եմ:

— Յեթե գիտես, ուրեմն ասա, ո՞վ է.

— Ով ա՞, հնդեր Կրոյանն ա, ո՞վ ա.—

Մի քանիսն փոթկացին, ամենից բարձր Վահան Վարդյանը: Բայց վոր ամենից տարբինակն եր, Հովոն ինքն ել նրանց ծիծաղին խառնեց իր հոհուոցը:

Բոլորից հետո Վահան Վարդյանը կարողացավ զսպել իր ծիծաղը: Բոլորից հետո ել նա իր վրա նկատեց պետի հանդիմանական հայացքը:

— Ընկերներ, ընկեր Վահան Վարդյան, — ծանր ու հատ հատ արտասանելով բառերը, պետը միայն Վարդյանի վրա եր նայում, — ճիշտ է, վոր դեռ նոր եք բանակ յեկել, բայց պետք է սովորեք բանակի որենքները: Դա ձեզ պարտադիր է: Իսկ բանակի որենքներից մեկն էլ այն է, վոր պետք է հարգել ընկերոջը: Ինչո՞ւ յեք ծիծաղում: Պետք է տիրեք ծիծաղելու փոխարեն, մտահոգվեք: Ինչո՞ւ յեք ծի-

ծաղում... Ի՞նչ կա ծիծաղելու, ընկեր Վահան Վարդյան:

Վարդյանը դլուխը կախեց, իսկ պետը թեքվելով դեպի Հովոն՝ շարունակեց.

— Չե, ընկեր Հովո, Կրոյանը դեռ մեր դիվիզիայի Գաղբաժնի հրահանգիչն է: Կարմիր Բանակի ղեկավարն ու Ռազմահեղափոխական Խորհրդի Նախագահն ընկեր Վորոշիլովն է, այ, են նկարը.—

— Ը՛խ, ճիշտ ա... ելի անխմաստ մի ժպիտով ժպտաց Հովոն ու մեկ, ապա մյուս թևով սրբեց քիթը: Նրա քիթը նման է ոճի տափակ գլխի: Խոսելիս, յերբ տարուբերում է նա դլուխը, թվում է թե քթով սղն է հոտոտում:

— Ճիշտ ա, իհարկե ճիշտ ա,— շարունակեց պետը,— այ, նա ել բանվոր է յեղել, համա քեզ պես չի ասել «անգրագետ մարդ եմ, չեմ իմանում»: Նա սովորել է ինքնիրեն ու իր ընկերներին, կովել է բուրժուաների դեմ, ու հիմա յել Կարմիր Բանակի ղեկավարն է: Տեսե՞՞ր՞ էս, բանվոր մարդն ուր է հասել:

— Ը՛խ, տեսնում եմ...

Արդեն ուրիշ նյութի յեք հասել պարտամունքը, բայց դեռ Հովոն ինքն իրեն կրկնում եր.

— Ընկեր Վորոշիլով... ընկեր Վորոշիլով...

Ու միայն այդքանը:

Պարապմունքներից հետո Վարդյանը մտաեցավ Քարամյանին ու մտերմարար ասաց.

— Հրայր, ЧЕСТНОЕ СЛОВО — յես կյանքումս
դեռ այդպիսի անասուն մարդ չես տեսել.
մի՞թե նա այդքան տարրական բաներ չի հաս-
կանում:

Վահան Վարդյանին թվում էր, վոր նույ-
նը կհաստատի նաև Քարամյանը, վոր Քարա-
մյանը կհամաձայնվի իր հետ ու միասին կծի-
ծաղեն: Բայց տարրինակ բան: Քարամյանը
վոչինչ չպատասխանեց, նա մի չափող հայացք
նետեց Վարդյանի վրա ու հեռացավ: Վար-
դյանը մինչև հիմա յեւ չգիտեր, թե Քարա-
մյանն ինչու այդպես վարվեց: Ո՞վ դիտե,
վորքան մարդ, այնքան բնավորութուն: Բայց
եւի Սարգիսը մեջ ընկավ:

— Գիտենք, վոր դու ինդլիկենդ ես, եւ
ինչո՞ւ յես ուրիշի վրա ծիծաղում:

— Հարգելի ընկեր, — պատասխանեց Վար-
դյանը, — ամենից առաջ դու դեռ ինտելիգենտ
բառն արտասանել չգիտես, յերկրորդ՝ դու դեռ
կարծում ես թե ինտելիգենտ լինելը վատ բան
է, ուրեմն յես ինչպե՞ս թույլ տամ ինձ քեզ
հետ վիճելու: Ինչ ուզում ես, ասա՛, յես քեզ
չեմ պատասխանի:

— Իհարկե թույլ չես տա, դու ինդլիկենդ
ես, իսկ մենք բանվոր, բատրակ մարդ ենք, —
կրկնեց Սարգիսը:

— Ընկեր, յեթե դուք կոմ յերիտական եք,
յես եւ տոմս ունեմ, եւ ինչո՞ւ յեք ինձ հետ
այդպես խոսում:

— Նրա համար եմ այդպես խոսում, —

բարձրացրեց ձայնը Սարգիսը, — վոր դու իրա-
վունք չունես ուրիշի վրա ծիծաղելու, հասկա-
ցա՞ր...

— Լավ, վերջ տվեք, — շան վորդի ոպոր-
տունիստներ, զահլա տարաք եղ ձեր ինդլի-
կենդ — մինտլիգենդ խոսքերով, ա՛յ բայչեկ-
կյան ինդլիքներով գրադվեք. — միջամտեց
Ստալինի ձառի գրքույկը թերթոդ մի բանա-
կային, վորի անունն Ասատուր էր:

Վարդյանը թղթով փաթաթել էր լամպը,
աղյալը քաշել մինչև թևերի տակը, թեքվել
կողքին ու տետրակը դրել էր ներքնակի վրա,
որվա դեպքերը գրելու: Ինչպես ամեն որ, զո-
բանոցը լուռ էր ու կիսախավար: Վառարանի
դռան ձեղքից շիկացած քարածխի փայլն ըն-
կել էր հատակին ու վետիտում էր նրա վրա,
կարծես բոցե մի ձող լիներ ընկած հատակին:
Վարդյանը նայում էր բոցե այդ ձողին ու մտա-
ծում «ինչպի՞սի անասնական բթութուն...
Ինչո՞ւ Ակորը կարող էր ցարի, նրա կնոջ ու
սողջիկների անունները հայրանունով ու ազ-
գանունով իմանալ, իսկ Հովոն չի կարող իմա-
նալ, վոր Կլիմ Վորոչիլովն է կարմիր Բանակի
դեկավարը: Արժանի՞ յե Հովոն մեր կարմիր
Բանակի շարքերին»...

Վահան Վարդյանը, նայում է հատակին
ընկած բոցե ձողին ու մտածում «Մեծամիտ

մարդու պես չնայե՞ց ինձ վրա այդ Հրայր Քա-
րամյանը, վորին յես շտապել եյի համակրելի
մարդ համարել, վորին համակրանք եյի շտա-
յում յես»...

Ապա Վարդյանը մտքում մեքենորեն
կրկնեց.

«Յես պետք ե նկարեմ, պետք ե նկարեմ
նրա այնպես լավ առնական դեմքը, իսկական
արույի դեմքն ու նվիրեմ իրեն, դա շատ լավ
էլինի, մենք կմտերմանանք»...

Փակվում են Վահան Վարդյանի աչքերն և
նա տեսնում ե դաշնամուրի վրա տատանալող
սողջկա մատներ ու դեմքի վրա թափված թուխ
խոպոպները: Փակվում են Վարդյանի աչքերը
և Լյուբան ե իր ապակյա շրթունքներով ժրդ-
տում նրան:

Փակվում են Վարդյանի աչքերը և նա վեր
ե թռչում անկողնուց, ինչպես ոձից կծվածը:
Չորանոցի մեջ ուժեղ օեղոնանսով լավում ե
ավագի ձայնը.

— Արթնանա՛ր...

Վահան Վարդյանն ամբողջ օրն յեղել ե
պարապմունքներում: Հոգնել ե նա այդ պա-
րապմունքից: Բայց նա առանձին մի ցանկու-
թյամբ ե ուզում հոգնեցնել իր ուղեղը մի ժամ
ել: Վարդյանն ուզում ե մի ժամ ել նվիրել
օրվա պարապմունքների մասին օրաշիր գրե-
լուն: Ամբողջ օրվա մի քանի պարապմունքնե-
րը Վարդյանին խեղդում են օրագրի նյութի

առատության մեջ: Վարդյանը փորձում ե գը-
րել, և գրում ե. «մի ժամվա պարապմունքնե-
լից հետո յես պետք ե քանդելի հրացանը»...

Վահան Վարդյանը ջնջում ե գրածը, այն-
քան ե ջնջում, վոր վոչ մի տառ չկարգազվի:
Նա յերկար մտածում ե, ապա ելի գրում. «ա-
ռաջին ժամից հետո հրացանը տրվեց ինձ
քանդելու»...

Վերջակետ դնելով գրած մեկ տողին, նա
ելի ջնջում ե գրածը՝ ամբողջ ուժով նրա վրա
քսելով մատիտի գրաֆիտը: Ապա ձախ ձեռ-
քից աջի մեջ դնելով իր ձեռագրով բացիկը,
նա ջղաձգորեն տրորում ե բացիկը, կրկին բաց
ե անում ու նրա վրա նայելով, բարկացած խո-
սում ե այդ բացիկի ու նրա մեջ գրած յերկտո-
ղի հետ:

«Հիմա՛ր, ով գիտի, ինքն օրական քանի
ժամ ե փողոցներում դբոսնում և դեռ ինձ ե մե-
ղադրում: Ինչ խրատողն ե դարձել գլխիս հի-
մարիկս: Մեկ ել վոր այդպես գրի, Վահան
Վարդյան, խռովիր,— ասում ե նա ինքն իրեն
ու ելի տրորում բացիկը:

Ութերորդ օրն եր, ինչ նա յեկել եր և դեռ
քաղաք չեր գնացել: Կարոտել եր նա Լյուբա-
յին և այդ կարոտն ավելի յեր սաստկանում,
յերբ նա մտածում եր, վոր Լյուբայի մօտ չի
կարող գնալ մի ամբողջ ամիս: Ութ օր առաջ
եր նա գրիել Լյուբայի իրանը: Ութ օր առաջ,
բայց թվում եր, թե տարիներ են անցել և
Լյուբան միայն լուսե մի յերազ ե յեղել:

— Մի՞թե ութ որ ստաջ եր, վոր յես
վերջին անգամ «մոռացա աշխարհը», հարց-
նում եր վարդյանը, լցվում կարոտով ու պա-
տասխանում եր իր հարցին:

— Չեմ հազատում, վազուց կլինի.—:

«Աշխարհը մոռանար» — դա Լյուբային
գրկելն եր: — Գնանք այգի, Լյուբինկա ջան,
«աշխարհը մոռանալու», — այսպես եր վահան
վարդյանը շողում յերջանկության ծովի մեջ:
Իսկ հիմա, նա մի ամբողջ ամիս չպետք է
տեսնի նրան, հիմա նա յերջանկության ծովից
դուրս ընկած ձուկ է ու տոչորվում է, այր-
վում է անհուն մի կարոտից:

Կարոտել եր վարդյանը Լյուբային: Յեվ
մի յերեկո որագիր գրելու փոխարեն նա միայն
մի բացիկ գրեց: Ընդամենը մի քանի տող,
բայց հոգեպես հանգստացավ, և ել որագիր
գրելու չգիմեց: Չե վոր որագիրը հոգեկան
հանգստության միջոց է նրա համար: Յեվ ա-
հա իր գրած այդ բացիկը ինքը՝ վահան
վարդյանը ջղաձգորեն տրորում է: Լյուբան
այդ բացիկը նամակի հետ է ուղարկել, թե՛
«վահան, մեկ ել կարդա այդ բացիկդ ու ամա-
չիր»...

— Ինչո՞ւ արխար, ինչո՞ւ, — ջղայնացած
հարցնում է վարդյանը:

Մեքենորեն նա կարդում է իր գրած բա-
ցիկն ելի մի անգամ.

«Լյուբինկա ջան,

«Մեզ մի ամիս քաղաք դալ չեն թողնելու:

Մի ամբողջ ամիս: Նորերը մի ամիս պետք է
մնան դաստիարակվելու, յես ել պետք է
«դաստիարակվեմ»: Այդքան ժամանակ սարե-
րի ու ծովերի չափ կկարոտեմ քեզ, իմ սիրելի
Լյուբա, իմ արվեստ: Այսոր ելի հարցրի
ստույգ իմանալու համար: Ասացին, վոր մի
ամբողջ ամիս չեն թողնելու: Յես տխրեցի:
Տխրությամբ ու կարոտով գրում եմ քեզ այս
բացիկը, իմ կյանքի իմաստ դու, Լյուբա՛:
Թույլատրվում է դալ մեզ տեսնելու: Կուզեյի
վոր հենց ամեն որ այցի գայիր ինձ: Բացիկ-
ներ կարող ես գրել ինչքան ուզենաս: Առհա-
սարակ շատ-շատ և շուտ-շուտ գրիր: Նամակ-
ներդ սզ կլինեն ինձ համար: Կիսատ մնացած
նկարդ լավ պահիր: Մի ամիս հետո, յերբ
հանդիստ որերին թողնեն քաղաք գալու,
կգամ ու աչքերդ համբուրելուց հետո, կսկսեմ
նկարել համբուրածս աչքերը, վոր նկարել եմ
ու չեմ վերջացրել: Լա՞վ:

Շուտ, շուտ արի ինձ տեսնելու: Գրիր:
Ահաստ, վոր բացիկի վրա տեղ չմնաց, շա-
բան եյի ուզում գրել, ուզում եյի անընդհատ
գրել...

Միս, ենքան տխուր եմ, Լյուբա ջան,
չա՛տ եմ տխուր:

Համբուրներով՝ Վ. Վ. »:

վարդյանը բացիկը կարդալուց հետո, մե-
կեն նույն ջղաձգությամբ, ինչ ջղաձգու-
թյամբ, վոր տրորում եր բացիկը, մատիտը
վերցրեց և սկսեց գրել:

«Հիմարիկս, ի՞նչ վատ բան կա սրա մեջ, վոր գրել ես թե «մեկ ել կարգա բացիկդ ու ամաչիր, թե՛ «բանտում հո չե՞ս, վոր եղպես տխուր նամակ ես գրում, թե՛ «վոր սիրտդ ու հոգիդ նկարես՝ կնայես ու կամաչես ինքդ քեզ-նից»—

Ի՞նչ խրատողն ե դարձել գլխիս...

Ի այց, այնուամենայնիվ, կարծես թե Լյուբան վորոչ չափով իրավացի յե:

Չե՛, չե, ճիշտ չե, յես նրան սիրո խոսքեր եմ գրել, իսկ նա քաղաքական խրատներ ե կարդում գլխիս:

Քաղաքակա՞ն Լյուբինիկա ջան... բայց և այնպես յես քեզ կարոտել եմ և կուզենայի ազատ լինել, թեկուզ չըջեյի քաղաքի դատարկ փողոցներում ու չգտնեյի քեզ...

Աշուն, սիրելի աշուն, արդեն ցրտաշունչ ես դառնում...

Յես փակում եմ լուսամուտը»:

Վահան Վարդյանը կծկվեց առջալի տակ: Նա մըստում եր: Նրան թվում եր, վոր սառը քամին հասնում ե մինչև իր սիրտը...

Ծտաբի № սենյակի լուսամուտները նայում եյին դեպի արևելքը: Արևելքը գորշ եր ու անհրապույր: Միայն մի քանի կտոր ամպեր եյին բաց բրոնզի դույնով ներկված: Յերեկոյանում եր: Արևելքը ճիշտ այն գույնն ունեւր, ինչ վոր Արևմուտքը՝ առավոտյան:

Վահան Վարդյանը կանգնել եր № սեն-

յակի մեջտեղն ու դուրս եր նայում արևելքի անհրապույր գորշությանը: Նա չեր կարող ասել պատճառը, բայց դիտում եր, վոր ինչ վոր տարտամ մի զգացում համակել ե իրեն: Վարդյանը գույզ լուսամուտներից դուրս եր նայում անորոշ, վոչինչ չարտահայտող հայացքով, այնպես անխայլ հայացքով, ինչպես արևելքը՝ յերեկոյան: Նա դիտեր, վոր իր տրամադրությունը տեղը չի և չեր ցանկանում անտրամադիր մնալ:— Նայել բնության դուռեղ պատկերներին, ուշադրավ յերևույթներով հետաքրքրվել, — այս եր մշտական միջոցը Վահան Վարդյանի համար՝ հողթահարելու այն տարտամությունը, վոր հաճախ կապույտ յերակների արյան հետ լցվում եր նրա սիրտը:

Արևելքի գորշ միապաղաղությունից չապրելով վոչ մի գեղադիտական հաճույք, Վահան Վարդյանը ծծելով իր վերին շրթունքը, սեղանին մոտեցավ: Սեղանին մոտենալուց մի քանի րոպե հետո, նա հարցրեց ինքն իրեն:

— Լավ չե՞ր լինի, վոր յես գնդում շարային լինեյի, քան շտաբի աշխատող, — յերկար ժամանակ նա չեր պատասխանում իր հարցին: Վո՞ր դեպքում լավ կլիներ, նա դժվարանում եր պատասխանել: Տարիներ շարունակ սովորել, նկարել, դժել ու գծադրել, այնուհետև յերկու տարի աշխատել, կատարելով նույնը և այդ ամենից հետո բանակ գնալ էլի նո՞ւյնն անելու: Պարզ ե, վոր այս դեպ-

քում աշխատանքը կարող եր դադարել հոգեկան բավականություն պատճառելուց: Իսկ աշխատանքի մեջ վոչ ուրիշ բան, քան այդ եր միայն պահանջում Վարդյանը:

Վահան Վարդյանը վորոշեց, վոր հենց դայե իր այտորվա վատ արամազրության պատճառը: Բայց այս անգամ ատամների տակ առնելով ներքին շրթունքը, նա մտածում եր այն մասին, թե վորը կլիներ գնդում շարային լինելու վատ կողմը: Մտածելով այդ մասին, նա մխիթարեց ինքն իրեն, վոր շտարում ե: Չե վոր յեթե գնդում լիներ, ամբողջ որը Ֆիզիկական տանջանք պետք ե կրեր: Առավոտ կանոնի Ֆիզիկոլոգիայի պարագմունք, հետո՝ շարային վարժություններ, փորձական պարագմունքներ դաշտում: Քարշ պետք ե տաս գնդացիքը յետևիցդ, նետես քեզ փոսը, թըշնամու յենթադրյալ համագարկից կամ արկերից պաշտպանվելու համար, ուսիդ վրա պետք ե տանես թեթև գնդացիքը, վորն այնքան եր թեթև չի, վրադ պետք ե կրես պարտադիր դեկտավորման ու զինավորման բոլոր պարագների ծանրությունը: Ահա գնդում շարային զինվոր լինելու հետ կապված բոլորը:

Բայց վորն եր հիմնականը, վոր Վարդյանը մոռացավ: Մոռացածը Վարդյանին այնքան լավ բան եր թվում, վոր նա ախտոտում եր ե ամբողջ միտքը լարում մոռացածը գտնելու համար: Վարդյանն ինքնաբերաբար չեր, վոր սկսեց մտածել այդ մասին: Յերկու որ առաջ

այդ մասին նա ու Հրայր Քարամյանն էլին խոսել: Քարամյանի կարծիքն այն եր, վոր լավ կլիներ, յեթե գնդում լինեյին, այնտեղ նրանք կտվորեյին ռազմական տեխնիկան ալելի լայն ծավալով ու խորությամբ, քան շտարումն են սովորում: Հիշելով Քարամյանի կարծիքը, Վարդյանն ավելի յեր մոռանում գնդում շարային լինելու գլխավոր վատ կողմը:

Նեղսրտելով իր մոռացկոտության վրա, Վարդյանն զգում եր, վոր կամաց-կամաց մոտենում ե մոռացած մտքին, վորովհետև ատիճանաբար հանգստանում եր ու թեթևանում: Նա այնքան հանգստացավ, վոր այլևս չեր մտածում այդ մասին, յերը հանկործհիշեց: Հիշեց ե ուրախացած, Ժպտաց դադարի սենյակի քարտեզներով պատած պատերին: Գնդում շարային լինելու գլխավոր վատ կողմն այն եր, վոր նա ամիսներով քաղաք չեր դուրս դա: Չե վոր կարող եր չընկնել այն գունդը, վորը քաղաքումն ե: Ուրեմն՝ ամիսներով նա չեր տեսնի Լյուբային, ամբողջ ամիսներով...

Վահան Վարդյանը մխիթարում եր ինքն իրեն, վոր շտարումն ե, իսկ շտարը գտնվում ե քաղաքի գլխավոր փողոցներից մեկի վրա:

Վաղուց արևելքի ամպի կտորները կորցրել էյին իրենց բաց բրոնզի գույնը: Գանդաղ, ինչպես վերավոր, կարավանից կարտված ուղտեր, ամպի այդ կտորները բարձրանում էլին

կապույտ զենիթը: Գունատ շողով փալվելում էր մի աստղ ու կորչում Վարդյանի աչքից, ապա՝ մեկ ուրիշը, յերրորդը:

Գարակից հանելով մի «Գործ», Վարդյանը դրեց այն լուսամուտում ու իր տակը մի աթոռ քաշեց: Նայեց նա «գործ»-ին, նայեց արդեն, յերևացող աստղերին ու աջ ձեռքի ցուցամատն ականջը կոխելով, ելի սուզվեց մըտքերի մեջ: Չախ ձեռքի ցուցամատով ել խառնելով ձախ ականջը, Վարդյանը կոմունարկան ներքև քաշեց: Վարդյանի ականջները ճնշվելով կոմունարկայից, վոր սեղմում էր նրանց արմատները, ցած էլին ծալվել:

«Վահան Վարդյանը «գործ»-ից հանեց կապույտ մի թուղթ, գտավ մի քանի մանր թերթիկներ ու վերցրեց կարկինը: Նա պետք է նկարեր տակտիկական պարապմունքների համար մի քանի խնդիրներ:

Մի քանի անգամ կարգալով մանր թերթիկներից յերկուսը, նա մի քանի անգամ ել մտքում կրկնեց կարգացածն ու սկսեց կետեր նշանակել թղթի վրա:

Դա առաջին խնդիրն էր:

Ամսի քսանյերեքին, յերեկոյան ժամը 17-ին Հայկական Դիվիզիան պետք է իր կենտրոնացումը վերջացնի Յերևանում: Նույն ամսի քսանչորսի առավոտյան յերկրորդ դիվիզիան պետք է կենտրոնանա Աշտարակում:

Այս է «Կարմիրները»-ուժերի դասավոր-

րության մասին չամբողջ տեղեկությունը: Թշնամու ռազմական ուժերի դասավորության ու տեղաշարժերի մասին, ողային հետախուզության միջոցով հայանի յե դարձել հինգ քան:

Առաջին: X ամսի քսանյերկուսին յերեկոյան ժամի 17-ին ողային հետախուզյունքը նկատել են, վոր թշնամու փոքր զորամասերն Արաքս կայարանից շարժվում են դեպի Սարգարատ:

Յերկրորդ: Պարզված է, վոր X ամսի քսանչորսի յերեկոյան, Լենինականից դեպի Մաստարա պետք է շարժվի թշնամու հինգ կլլումետր խորություն ունեցող մի զորասյուն, կազմված հեռականներից ու հրետանիներից:

Յերրորդ: X ամսի քսանյերկուսի յերեկոյան ժամը 17,30-ին «Կարմիրները» ողային հետախուզյունքի կողմից նկատվել են թշնամու Լենինականից Մաստարա շարժվող զորասյան գլխամասերը. և, պարզվել է, վոր դրանք Լենինականից շարժվում են դեպի Մուղղյուքչա և կանգ են առնելու այնտեղ:

Չորրորդ: X ամսի քսանյերկուսին, յերեկոյան ժամը 18-ին ողային հետախուզյունքը նկատել են, վոր Լենինական կայարանում են կենտրոնացել թշնամու տասնհինգ տանկերը: Տանկերի դասավորությունից յենթադրել են, վոր թշնամու տանկային ուժերը հանգստանում են:

Հինգերորդ: Պարզված է, վոր թշնամու-
ողային ավիացիան ավելի ուժեղ է և հնարա-
վորությունն չի տալիս «Կարմիրներին» ողային
հետախուզությանն աշխատելու:

Գծագրելով ամբողջ խնդիրը, ջրանցքնե-
րը, բարձրությունները ու ստրատեգիկական
մյուս պայմանները, ինչպես դրանք նշված
էին մանր թերթիկների վրա, Վարդյանը յետ
զնայ աթոռի վրա ու հորանջեց: Ապա կոմու-
նարկան հանելով գլխից, նա տրորեց աչքերը,
կրկին վերցրեց սև մատիան ու գծագրի տակ
գրեց. «ՅԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ», և, հարցա-
կաններ՝ մի քանիսը: Այդ հարցականներին
պատասխանելը Վահան Վարդյանին չեր վերա-
բերում, բայց նա փորձեց, չի՞ կարող արդյոք
չուձել:

Մի քանի անգամ ցուցամատերն ականջը
կոխեցուց հետո, Վարդյանն զգաց, վոր գլուխն
սկսեց ցավել: Տրված պայմաններից յեղնե-
լով պետք էր ապացուցել, «Կարմիրներին» կողմն
է հաղթությունը, թե «Սպիտակներին» — դժ-
վար հարց:

Վարդյանը հիշեց տեխնիկումը, յերկրա-
չափության դասերը, յերբ տրված պայմանն
ու պատկերը զեղեցիկ գրելով ու գծելով, նա
կանգ էր առնում հարցականներին վրա ու չեք
զանում այդ անիժյալ «ՅԵԶՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ»
ապացուցելու ձևը: Բայց այնուամենայնիվ ս-
վելի հեշտ էր ապացուցել յերկու յեռանկյուն-

ների հավասարության յերեք պայմաններից
վորեւե մեկը, քան այս խնդիրը:

— Чорт его знает — բարձրաձայն ասաց
Վարդյանը, ծալեց «Գործ»-ն ու կոմունարկան
վերցնելով, մոտեցավ լուսամուտին:

Փայլիլում էին աստղերը: Ահա մեկն ըն-
կավ իր յետևից թողնելով լույսի այնպիսի մի
գիծ, վոր նման էր գծագրի վրա Վարդյանի
գծած Սարգսրարատի ջրանցքին:

— Ահա քեզ յերկինք. սա՛ յե ին՝ կարգաձ-
ցած ուս պսեաների՝ կովկասի յերկինքը, —
Վարդյանն հեղնաբար ժպտաց ու փակելով
չտարի № սենյակի դուռը, դղրդոց հանող
քայլերով ներքե իջավ փայտե աստիճաննե-
րով:

Լենինյան անկյունումն էին բոլոր բանա-
կայինները: Յուրաքանչյուրը մի հրացան վեր-
ցրած, մաքրում էր: Վարդյանը մտադրազ
ու զանդազ քայլերով մոտեցավ նրանց:

— Ը՛հը, ընկեր ինդլիկենուր յեկավ, —
բղավեց Սարգիսը, — յերեք աշխատանքի
լծեք ինդլիկենաին. —

— Բավական է, ընկերներ, վերջ տվեք, —
պատասխանեց Վարդյանը վիպվորված:

— Յես արդեն վերջ եմ տալիս պրծա,
զնա դու յեղ քո հրացանը վերցրու մաքրա,
ա՛յ, ենա՛, — պատասխանեց Սարգիսն իրոնիկ
տոնով, բայց սառնարյուն ու հանգիստ:

Վարդյանը վերցրեց հրացանը, շամփուրի
ծայրի մաքրիչի վրա փաթաթեց սպիտակ շորն:

ու փորձեց փողի մեջ մտցնել. հակառակ դորձադրած ուժին, շամփուրը ներս չէր գնում, մաքրիչի վրա շորը հաստ եր փաթաթված:

Տեսնում ես, չես կարում մտցնես... յես իմանում ի, թե եղ տեսակետից դու լավ կլինես.— կատակեց Ասատուրը:

— Ձե, Ասատուր, դու սխալվում ես, եղ. ասպարիզում Վահանը շատ ակտիվ ա, ինչքան չլինի ինդլիկենա ա, բա՛շամ,— հարեց Սարգիսը:

— Ձի լինի, վոր վերջ տաք եղ ձեր ինտելիգենա ածականին, ծաղրելու լինի, յես ափելի վարպետ եմ,— գայրույթի հասնող վիրավորանքով պատասխանեց Վահան Վարդյանը...

— Վո՞ր Ֆարգործուն ես ավարտել ու վարպետ դարձել:

— Ասում եմ բավական ե:

Բոլորն ել լուեցին: Մոտենալով Սարգիսին, Ասատուրը փսփոաց.

— Վոր խոսվում ա, ել ձեռ. մի առեք, բոլ ա...

— Հակառակը, վոր խոսվում ա, պտի ձեռ առնենք,— բարձր ձայնով պատասխանեց Սարգիսը, ապա դիմելով Վարդյանին, շարունակեց:

— Վոր ասում ենք ինդլիկենա, դու ել ուսում ես մեջդ, ի՞նչ կարիք կա խոսվելու, ընկերներ ենք, խոսում ենք ընկերական տեսակետով, շուրուխ ա.

— Ուրիշ բան չունե՞ք խոսելու:

— Վոր ունենայինք են ա ուրիշ բան կխոսեյինք, ե՛լի: Բայց խոսվելը լավ բան չի, Վահան: Ասում ենք, ելի, հո ինդլիկենա չեղա՞ր: Ականջներդ կախվում են կասես թե լոչ լինեն, մի դալչեդ ենպես կախ ես դցում ու հետդ քաշում, վոնց վոր փետով խիած լինեն, վոտներդ ել ենպես են իրարից հեռու քցում, կարծես թե թաղա կարգված աղջիկ լինես: Պարզ ա, վոր ես բոլորն ինդլիկենաություն չի: Մենակ դու սրտով ես ինդլիկենա, յերկրորդը՝ յերեսիդ սիվաակի կաշով, ու, մեկ ել եղ կարմիր պոռչներովդ... աղջկա պես կարմիր պոռչներ ունես, մարդ վոր պաչի լազաթ կաա...

Չայրույթը յեռաց, Վահան Վարդյանի մեջ, վորքան ել աշխատեց նա սառնարյուն մնալ, չկարողացավ: Ատամներն ամուր սեղմելով իրար, նրանց արանքից զսպված զայրութով, ոձի Ֆշչոցի պես նետեց նա:

— Ցինի՛կ...

Վարդյանի բորբոքված դեմքից ու պղտորվող աչքերից յերևաց, վոր նա բարկացած է:

— Վերջ տուր ելի,— բղավեց Սարգսի վրա Ասատուրը:

Չգալով, վոր չափն անցել է, Սարգիսը բարձրաձայն պաշտպանվում եր, այնպես, վոր Վարդյանն ել լուի:

— Ի՞նչ կա վոր, ընկերական շուրջու-
թյուն ենք անում, ի՞նչ ասի վոր...

Փակազակին Վիր անդր մտցնելով, Վարդ-
յանը յուզից քամած շորով մաքրեց հրացանի
ազուսան ել ու դուրս յեկավ լենանկյունից:
Նրա սիրտն այնքան եր լցվել, վոր քիչ եր մնում
լաց լինի: Թե ինչո՞ւ ելին այդպես վարվում իր
հետ, նա չեր հասկանում: Ինչո՞ւ հասցա նույն
կերպ չեն վարվում նրանք Քարամյանի հետ,
նույն կերպ չեն վարվում իրար հետ: Արդյոք
այդ բոլորի մեջ մի անասի տենդենց, չարա-
մտություն չկա՞: Վարդյանը մտածում եր հի-
շելու, գանելու, մի այնպիսի պատճառ վորն
հիմք կամ ստիժ լիներ նրանց այդպես վար-
վելու: Յեվ չեր գտնում այդ հիմքը: Ինչո՞ւ վ
կարող եր Վարդյանը, թեկուզ թույլ հակա-
կրանք ստեղծել նրանց մեջ դեպի ինքը: Այդ
նա չեր հասկանում:

Շտաբի բակում գնում գալիս եր Վարդ-
յանն ու հուզված փնթփնթում ինքն իրեն: Նրա
կողքից քայլողը կարող եր յսել իրար յեակից
կրկնվող միևնույն բառերը:

— Ամբարտաժաններ, ամբարտաժան-
ներ...

Յերկինքը պարզ եր ու փայլիլուն: Բա-
կում թափթփված ջուրը սառչում եր: Բակի
ջրի բաց ծորակից ջուրն այնքան դուրս աղ-
մուկով եր թափվում իր դեմի գոան մեջ, վոր
Վարդյանին թվում եր թե սիրելի յերգի նվա-
զքն է լսում:

Բակում գնում-գալիս եր Վարդյանը և նրա
մեջ յեռացող վիրավորանքն ու դալուճքը տե-
ղի ելին տալիս մի ուրիշ բանի: Նա մտածում
եր, թե ինչն եր այդ, վոր մի քսան բոպեյում
այդպես փոխում եր իրեն:

Քայլերը գանդաղեցրեց Վարդյանը, ապա
կանգնեց: Գոան մեջ թափվող ջրի գուլալ աղ-
մուկն ամելի աշխույժ եր: Վարդյանը մի քանի
քայլ մոտեցավ թափվող ջրին և այդ բոպեյին
զգաց, վոր կարտան է իր մեջ խոտում: Վարդ-
յանը նայեց յերկինքին ու փսփսաց:

— Ինչ սքանչելի աշնանային յերկինք
ե...

Կարտան եր խոտում Վարդյանի մեջ գու-
լալ ձայնով, ինչպես ծորակից գոան մեջ թափ-
վող վճիտ ջուրը:

Գուրս գալով բակից, Վարդյանը արագու-
թյամբ դեպի շտաբի շենքի մուտքը գնաց: Ո-
րասպահի սենյակը: Մտավ ու առանց վայրկյան
սպասելու, զգաստ կանգնեց ու պատիվ վերցրեց
ամազին:

— Թույլ ամեք, ընկեր Ավագ, ժամ ու կե-
սով քաղաք գնալու:

— Ինչո՞ւ, ի՞նչ է պատահել:

— Վոչինչ, հենց ենպես... ուզում եմ...
տնից մի յերկու գիրք բերել կարդալու:

— Գի՞րք: Չե՛, քաղաք գնալ չի կարելի:

Վարդյանը գլխիկոր գուրս յեկավ որասպա-
հի սենյակից, այս անգամ դեպի գորանոցը:
Մեջքի վրա յերկար պառկելով իր մահճակալի

վրա, նա չնշում եր հեմիհեմ, կարծես մի քանի կիլոմետր տարածութիւն վազել եր միանգամից:

— Այդպէս ուրեմն թույլ չտվեցին, Լյուբային չտեսա, վոչինչ...

Այդ որը Վահան Վարդեանը վոչինչ չգրեց իր որագրի տետրակում:

— Հրացանն ունի յոթ գլխավոր մաս՝ փող, փակաղակ, պահեստատուփ, ազուստ, փոզապատ, սվին և շամփուր.—

— Դու յեւ կրկնիր Ասատուր:

Ասատուրը, վորին բանակայինները Բատրակ, կամ Բայլչեիկ Ասատուր եյին ասում և նա դրանից բնավ չէր վիրավորվում, կրկնում եր պետի ասածները: Վահան Վարդեանը չէր լսում վոչ պետին, վոչ եւ բանակայիններից վորեւէ մեկին: Նա դեռևս նախորդ որվա արամադրութեան մեջն եր: Վահան Վարդեանը տխուր եր: Այդ պատճառով եւ նա պարապմունքում նստել եր դժգոհութեամբ: Նստել եր, բայց մտքով աշնտեղ չէր:

— Ապա դու վերցրու հրացանը, ընկեր Հովո, — լավեց պետի բարձր ձայնը:

Վարդեանը սթափվեց մտքերից, յերբ լսեց Հովոյի անունը: Ամեն անգամ, յերբ Հովոն եր խոսում, վարդեանը լարում եր իր ամբողջ լսողութիւնը: Նրան հետաքրքրում եր, թե ի՞նչ գուրս կտա Հովոն: Հովոն հաճույք եր պատճառում Վահան Վարդեանին: Վարդեանն ինչ-

քան չէր սիրում նրան, բարկանում եր ինքն իբ մեջ նրա կոպտութեան վրա, այնքան զվարճանում եր նրանով:

Հովոն վերցրեց հրացանը:

— Ի՞նչ հրացան ե դա:

— Մոսենի յա', ի՞նչ ա:

— Քա՞նի մաս ունի:

— Ո՛ւր, չէ', չէ', յոթ, յոթ մաս ունի:

— Յույց տուր մասերը, վորո՞նք են:

— Վորո՞նք են:

— Հա, ցույց տուր եդ յոթ մասերը:

— Ե՛, անտեր մտես գնաց...

— Մտածիր, ասա.

— Թո՛ւ, անտեր. իմա՞լ մտես գնաց...

— Սա որինակ վո՞ր մասն ե:

— Եիչն ա, վոր մասն ա.

— Եիչ չի, այլ շամփուր:

— Ճիշտ ա, ճիշտ ա', շամփուր ա:

— Սա՞:

— Լուլեն ա,

— Լուլա չե, ընկեր Հովո, այլ փող:

— Փող, փող, ճիշտ ա, փող ա:

— Յերբ Հովոն վերջացրել եր, Վարդեանն ելի և՛ պարապմունքումն եր և աշնտեղ չէր: Ակամա նրա միտքն ուրիշ տեղ եր սլանում և նա չէր կարող կանգնեցնել մտքի այդ սլացումը, պարապմունքը լսելու համար:

Իսկ յերբ Հովոն նստել եր արդեն, Վարդեանն զգաց, վոր նախորդ որվա պէս քաղցր մի կարոտ ե հուզում իրեն: Նա մտքում վորոչեց

անելիքը ու անհամբեր սպասում եր պարսպ-
մունքի վերջանալուն:

Պարսպմունքը վերջացած համարվեց:

Վահան Վարդյանը մոտեցավ պետին:

— Ընկեր պեա, քույրս հեռու տեղից ե յե-
կել— ուզում ե ինձ տեսնել, յերկու տարի յե,
ինչ չի տեսել, խնդրեմ թույլ տաք,— Վարդյա-
նը խնդրում եր աղաչական տոնով:

— Վ՞րտեղից ե յեկել ձեր քույրը:

— Մոսկվայից, այնտեղ նա կինո դերա-
սանուհի յե:

Պետը ժպտաց: Ապա թեքվելով դեպի ա-
վազը, կարգադրեց.

Թույլ տալ մինչև յերեկոյան ժամի Գ-ը:

Վահան Վարդյանը դուրս ընկավ: Նրա
սիրտն իրենից առաջ եր թռչում: Քիչ եր մնում,
վոր Վարդյանը վեր-վեր թռչի և մանկապար-
տեղ դնալու որերի պես ճչա.

— Սարեցի, խարեցի...

Վահան Վարդյանը Լյուբայի մոտից վերա-
դարձավ ժամի 11-ին, դեռ չհաղեցած նրանով:
Որասպա՛հին նա պատասխանեց, վոր իրեն տեղ
եյին ուղարկել: Շտաբի դռնից ներս մտնելով,
իր համար միայն լսելի ձայնով ասաց նա.

— Բախտս բերում ե, բոլորն ել դէյուրահա-
վատ մարդիկ են...

Վարդյանը մտավ գորանոցը: Քնած եյին:
Մոտեցավ նա մահճակալին: Հանկարծ նա իր
յետևից փախոց լսեց, թվաց թե մեկը հետևում
ե իրեն: Յետ դարձավ:

Հովոն եր:

Ոձի դուրսն ողի մեջ ցցած, ինքն իրեն
Ֆրեկնում եր նա.

— Ընկեր Վորոշիլյով... ընկեր Վորոշիլ-
յով...

Հեղնական մի ժպիտ խաղաց Վարդյանի
դեմքի վրա:

— Մարդը քնի մեջ ել շարունակում ե մտա-
ծեց, ինչ անխոնջ ուղեղ,— ու քիչ մնաց, վոր
Վարդյանը փոթկար:

Վարդյանը բարձրացավ լամպը թղթով
փաթաթելու: Յերբ նրա աչքերը փակվեան, նա
թուղթը, ինչպես ամեն ոք, ձողով ցած կնետի:
Բարձրացավ Վարդյանը և ողի մեջ բռնեց լամ-
պը:

— Ի՞նչ ես անում,— լսեց նա կողքից:
Նրա մարմինը փշաքաղվեց:

Ավազն եր:

— Ի՞նչ եք անում:

— Ընկեր ավազ, ուզում եմ լամպը թղթով
փաթաթել, ջղերիս վրա ազդում ե...

— Իջեք, իջեք, ջղերի վրա ազդում ե...

Իջեք: Գիտեք, վոր հրամանով լամպը պետք ե

վառ մնա, բացի դրանից ել, ժամի 11-ից անցել
ե 10 րոպե, յերկու ժամ 10 րոպե ուշացել եք:

Վաղը կներկայանաք:

— Լսում եմ, ընկեր ավազ...

— Իսկ հիմա քնեք առանց լամպը փաթա-
թելու:

— Լսում եմ...

Վահան Վարդյանն անկողին մտավ, իբր
հետ նրա տակը մտցնելով իբր զայրույթը:

— Դեռ իրեն հարկավոր ե գրել ու կարդալ
սովորել և ինձ ստիպում ե լուել, փնթփնթում
եր Վարդյանն անկողնու տակ:

Վահան Վարդյանն անկողին մտավ ու չկա-
րողացավ զսպել զայրույթը՝ քնելու:

Իսկ Հովոն ընկեր Վորոշիլյով... ընկեր
Վորոշիլյով...-ով կարծես սղոցում եր Վարդ-
յանի նյարդերը: Մի անգամ, յերբ մի անպի-
տան թուփակ այդպես խանդարում եր Վարդ-
յանի քունը, նա սպանեց թուփակին:

Առավոտյան, յերբ Վարդյանը տուն գնաց,
նման եր նա պարզած, ժպտացող արևոտ որվա:
Թխպոտ որվա պես տխուր դարձավ նա, յերբ
անկողին մտավ: Բնությունն ու մարդու ընա-
վորությունը նման են իրար:

Վահան Վարդյանը քնեց խռովահույզ հո-
գով:

Վահան Վարդյանը խաբեց Լյուբայի մոտ
գնալու համար: Բայց ինչպե՞ս: Նրան, վորին
նա սիրում եր վորպես նկարիչ Վահան Վարդ-
յան, նրան ներկայանար վորպես զինվոր
Վարդյան:

— Վոչ, Լյուբային միայն նկարիչ Վարդ-
յանի կիրթ հագուստով իրավունք ունեմ հան-
պելու, և վոչ ուրիշ կերպ, — վորոշեց Վարդյա-

նը ճանապարհին: Մինչև տուն հասնելն այնպես
եր նեղվում նա, վոր թվում եր թե թաղիքով ե
փաթաթված: Տանը Վարդյանը շորերը փո-
խեց, շինելն ու սապոգները հանելով, հազավ
դարչնագույն կոստյումը, գալուստիկը կապեց
ու ներկայացավ Լյուբային, կատարյալ ջենտ-
լեմենի պես:

— Հլա կարմիր բանակայինիս մտիկ, —
ծիծաղեց Լյուբան և, սատանայական խորա-
մանկությամբ (առանց վորի Վահան Վարդյա-
նի համար մի քիչ պակաս հետաքրքրական
կլիներ նա) մատը թափ տվեց Վահանի վրա

Վահան Վարդյանը կհարձակվեր նրա վրա,
կզրկեր նրան ու կկծեր այդ չարածճի մատը,
յեթե Լյուբայի փոքր յեղբայրը տանը չլիներ:

— Ավելի լավ կլիներ, վոր զինվորական
հազուստով ինձ մոտ գայիր, իզուր ես ժորժի-
կացել, — քնքշաբար հանդիմանեց Լյուբան:

— Լյուբայի փոքր յեղբայրը տանից դուրս յե-
կավ:

Վարդյանը հարձակվեց Լյուբայի վրա, մի
քանի անգամ ամբողջ ուժով համբուրեց, ապա,
թևերի մեջ առնելով բարակ իրանը, տարավ
նրան դեպի մահճակալը:

— Այդ ի՞նչ դողություն ե, 'հե՛յ, — շեմ-
քի վրա յերևաց Լյուբայի մայրը, — գո՛ղ զին-
վոր. այդ յե՞րբ ես յեկել. —

Մի թևը դեռ Լյուբայի իրանին փաթա-
թած, Վարդյանը մոտեցավ Լյուբայի մորը:
Մայրը համբուրեց Վահան Վարդյանին: Իսկ

Վարդյանը նրա ձեռքը: Ներքին անհուն մի ուրախություն զգալով, մայրը կճմթեց Լյուբայի թուչն ու գունաթափ շրթունքներով մրմնջաց.

— Չա՛ր աղջիկ, դո՞ւ ել ես դադատուկ բաներ անում.

Վահան Վարդյանը գնաց տուն, հագալ գինվորական շորերն ու ելլի հանդիպեց Լյուբային:

— Այ, այդպես ավելի յես դուր գալիս ինձ.— քրքջաց Լյուբան: Բայց Վարդյանն ամաչում էր կոպիտ ու մեծ սապոգներից, վատ էր զգում իրեն շինելով ու կոմունարկայով և, վորպեսզի Լյուբայի չար աչքերից ազատվի, ամուր գրկում էր նրան ու դեմքը սեղմում կրծքին:

— Վայրենացել ես, Վահան, եղպես ել կսեղմե՞ն— հատուկ հաճությամբ բողոքեց Լյուբան:

— Տաստասնըհինգ որվա համար այսօր պետք է տեղը հանեմ, Լյուբինկա ջան...

Այդ օրը, յերբ կամանդայի ավազն զդաստ տվեց Վարդյանին և ասաց, վոր նկատողություն է անում նրան ժամի իննի փոխարեն տասնևմեկին զորանոց դայու համար, վորը գինվորական կարգապահության խախտում է, Վարդյանը չէր կարող մտածել, վոր նավելին է սպասում իրեն:

Ավագի նկատողությունից հետո Վարդյանի տրամադրությունը նույնիսկ բարձր էր: Փորձնական նշանառության պարապմունք էր:

Վարդյանը թեք էր բռնում հրացանը: Վորքան ուղղում էլին, դարձյալ նա սխալ էր բռնում:

— Չե, ախպեր ջան, քո բանը թեք ա, դու բայլչեիկյան գծից թեքվել ես,— կատակում էր բայլչեիկ Ասատուրը:

Վարդյանը հրացանը մեկ դեպի աջ էր թեք բռնում, մեկ դեպի ձախ և Ասատուրն ասում էր.

— Քո մեջ աջ ու «ձախ» թեքումները խառնվել են իրար բալա՛մ, դու բայլչեիկյան գծից թեքվել ես...

Բոլորը ծիծաղում էլին Ասատուրի կատակների վրա: Այդ կատակներում անախորժ բան չկար նաև Վահան Վարդյանի համար: Նա իրեն այնքան էր ուրախ զգում, վոր թվում էր թե գեղարվեստական տեխնիկումի ընկերուհիներով է շրջապատված և վոչ թե նրանցով, վորոնցից հաճախ կատաղելու չափ դայրանում է:

— Քաղաքավարի խոսելն ա՞, վոր վոչ վոք չկարա վրադ,— ելի մեջ ընկավ Սարգիսը:

Վարդյանի տրամադրությունը մեկեն փոխվեց:

— Դե, ինչպե՞ս խտերիկայի հասնելու չափ չհուզվես, յերբ քաղաքավարությունն ել է ծաղրվում,— սկսեց զայրանալ Վարդյանը: Յեվ ուղղակի դիմեց Սարգսին.

— Դու ե՞լի սկսեցիր, իսկ յես քեզ մարդ չե՛մ հաչվում, դրա համար ել չեմ պատասխանի քեզ...

Սարգիսն ել վրա տվեց.

— Դու ինդլիկենդ մարդ ես, իհարկե մեզ մարդ չես հաշիւի...

Պետը չեր լսում: Վարդեյանին ու Սարգսին մոտ եր Գարամյանը: Ուղղակի ձևով, մի տեսակ հրամայելու յեղանակով, վորից Վահան Վարդեյանը բնավ դժգոհ չմնաց, միջամտեց Հրայրը:

— Վերջապես վերջ պետք է տա՞ք, թե չե: Վարդեյանն զգաստացավ ու լռեց:

Այդպես: Լյուբայի մոտից վերադառնալուց հետո մի նկատողութիւն ավագի կողմից, աննշան մի անախորժութիւն Սարգսի հետ պարապմունքում և, ուրիշ վոչինչ:

Թվում եր թե ամեն ինչ դա յե, թե ամեն ինչ այդպես թեթևորեն վերջանում է:

Բայց պարապմունքից հետո, պետը ելի գիմեց Վարդեյանին:

— Ընկեր բանակային, ներկայացեք ինձ:

— Լսում եմ, ընկեր պետ, — դարմացած ասաց Վարդեյանը և մոտ գնալով զգաստ կանգնեց:

— Ինչո՞ւ յեք յերեկ քաղաքացիական զգեստով դուրս յեկել փողոց

— Պատասխանեցեք, ընկեր բանակային:

Վարդեյանը կմկմաց: Անակնկալը շփոթել եր նրան: Պետը վո՞րտեղից գիտեր դրա մասին:

— Վոչ մի բանակային, վոչ մի դեպքում իրավունք չունի քաղաքացիական հագուստ կը-

րելու, այդ ձեզ ասված է: Վերջապես պետք է վերջ տա՞ք ձեր այդ քաղաքացիական տրամադրութիւններին թե՞ չե: Կարծում եք շտաբային աշխատողն այրտոնյա՞լ է, կարող է այդպիսի խախտումներ կատարել:

Վորովհետև դուք նոր բանակային եք, դրա համար յես ձեզ միայն զգուշացնում եմ, այլապես տույժի կենթարկվեյիք...

Վարդեյանը փորձեց արդարանալ:

— Վոչ մի խոսք, վոչ մի առարկութիւն, — բարկացավ պետը, — վերջին դեպքը լինի, ազատ:

Վարդեյանն ազատ չնչեց: Ազատ հրամայելուց հետո պետը մոտեցավ նրան ու ձեռքը նրա ուսին դնելով, մտերմորեն սկսեց զրուցել հետը: Պետը բացատրում եր, վոր Վարդեյանն այդ քայլով խախտել է կանոնադիրքը, վոր պարետը նույնիսկ դրա համար կարող եր կայանքի տակ առնել նրան, վոր Վարդեյանը բոլորից գիտակից է և չպետք է թույլ տա իրեն, այդպիսի հանցանքներ գործելու և այլն և այլն:

Վարդեյանը վարժվել եր պետի քարոզներին: Մինչդեռ պետը խոսելիս լցվում եր ուսուցչի հավանութամբ, Վահան Վարդեյանը հաշիւում եր թե յուրաքանչյուր նախադասութիւն մեջ քա՞նի քերականական սխալ է գործում նա, քանի ավելորդ բառ է ասում. —

Պետը վաղուց հեռացել եր Վարդեյանի մոտից, իսկ Վարդեյանը դեռ փնթիւնթում եր.

— Այո, կան մարդիկ, վորոնց անհրաժեշտ

ե գրել, կարդալ ու արտահայտվել սովորել, բայց նրանք շտապում են ամբիոն բարձրանալ... Ի՞նչ արած պետք է յենթարկվել...

Մարգիսն այդ դեպքից հետո անընդհատ ծաղրում եր Վարդյանի դալստուկ կապելը և ներվայնացնում նրան: Հաղիվ կարողանալով դսպել բացահայտ իր արհամարհանքը, Վարդյանը համոզում եր իրեն:

Լավ է, լավ է, վոր չպատասխանեմ, ինձ համար վայելուչ չի նրա հետ վեճի բռնվել, լավ է վոր չպատասխանեմ...

Իսկ յերեկոյան, յերբ պետք եր քնել, շարունակելով ցերեկվա իր մտածումները, Վահան Վարդյանը մտքում խոսում եր.

— Կարող եյի գեղարվեստական ախամեղիա մտնել... կարող եյի ախադեմիա գնալ սովորելու, բայց յեկա ու ընկեր դարձա Սարգսին, Հովոյին...

Այդ որը Վահան Վարդյանը վոչ կարող եր ասել ուրախ ե և վոչ ել տխուր: Մի տեսակ տարտամուխյուն եր մտել նրա սիրտը, վորը նման չեր տխրության:

Այդպես ել նա գրեց իր որագրում:

Յերբ Վահան Վարդյանը բաց արեց զորանոցի դուռը, հանդիպակաց լուսամուտից յերևաց վերջալույսը՝ արյան անափ մի ծով: Աննման ու սքանչելի յե քաղաքի վերջալույսը:

Վահան Վարդյանը լուսնոտ մարդու նման անդգայնության մեջ ե ընկնում, յերբ նայում է նատուրային այդ գեղանկարին: Արշալույսը Վահան Վարդյանը չի սիրում, վերջալույսը՝ դա նրա համար ե միայն, ինչպես մութը՝ չղջկի:

Վահան Վարդյանը նայում է վերջալույսին ու մտածում. «Կուիվ լիներ: Արյուն հոսեր: Վերջալույսին արյունով ներկվելին ծովի պես անծայրածիր դաշտերը: Հետո՝ դադար լիներ, ու մենք արյան այդ ծովում թիկնեյինք ալիքների, այսինքն թումբերի վրա, հանդստանալու»:

— Յնձա՛, ինչ փառահեղ պատկեր ե, — ասում է Վարդյանն ու մտածում, թե ինչպես կկոչեր այդ նկարը: Յեվ ահա գտնում է դա յել: Նկարի տակ նա պիտի գրի. «Կարմիր ասպետների հանդիստը» — գործ՝ նկարիչ Վահան Վարդյանի...

Ապա Վահան Վարդյանը պատկերացնում է, թե ինչպես մուգեյներում պետք է նայեն այդ նկարին ու հիացած բացականչեն. «Замечательная картина», թե ինչպես պետք է աղջիկներն հուզվեն այդ նկարով ու ասեն. «սիրելի նկար ե»...

Վոգեորվելով գեղեցիկ այդ մտահղացումով ու յերևակայությամբ, Վահան Վարդյանը դրամատիկ ձևով արտասանում եր զորանոցի դատարկ սենյակում:

— Ո՛հ, կեցցես դու, հո՛ւյս, յերազի պես

յերջանկացնող հույս, յերազի պես քաղցր: Յես հավատում եմ քեզ ու գիտեմ, վոր պատմության գրքերում արվեստների մարդկանց անունների մեջ կլինի ՎԱՀԱՆ ՎԱՐԴՅԱՆ անունն ել:

Հույս, հույս...

Վարդյանը թիկնեց լուսամուտին ու նայում եր հեռու հորիզոնի դեղին անսահմանությանը: Ապա նա բացեց լուսամուտը: Պաղ ողբ խփեց նրա դեմքին: Նա մտածում եր, ու քիչ եր մնում, վոր բաց լուսամուտից բարձրաձայն արտասանի, ինչպես արտիստը՝ բեմից (այդպես է նա իր հուզումների տարերքի պահերին): Բայց յերբ յետ նայեց, տեսավ, վոր իր մահճակալի վրա լուռ ու մտահոգ նստած է Բայլչևիկ Ասատուրը: Վարդյանը նրան այդպես յերբեք չէր տեսել: Չանձրացնելու չափ կատակներ է անում Բայլչևիկ Ասատուրը: Ու հիմա նստել է այնպես տխուր ու մտահոգ, վոր թվում է թե ուզում է լուծել անլուծելին: Բայլչևիկ Ասատուրը՝ տխուր: Դա է՛ շինձու յե, է՛ բունազրոսիկ, է՛ տարորինակ:

— Իսկ ինձ թվում եր, — մտածում է Վարդյանը, — վոր Հովոն, Սարգիսը և Ասատուրն ու սրանց նմանները տխրել չգիտեն, վորովհետև մտածել, ապրել ու հուզվել չգիտեն. ուրեմն պատահում է, վոր յես ել եմ սխալվում:

Ասատուրը նստել եր տխուր, նույնիսկ՝ մոռյլ: Նրան նայելով, Վարդյանն հիշեց յերազում տեսած Ներոնի արձանը, մոռյլ ու ան-

ժպիտ: Վարդյանը տեսնելով Ասատուրին այդ դուռթյամբ, մոտեցավ ու թեք նրա մեջքին տանելով, մտերմական կարեկցությամբ հարցրեց.

— Դո՞ւ յել ես արդեն բանակից ձանձրացել, Ասատուր...

Ասատուրն այնպիսի մի հայացք նետեց նրա վրա, ինչպես նա կնայեր իր թշնամուն: Այդ հայացքը լիքն եր շարությամբ ու մահառիթատելությամբ: Բայց թե ինչու յեր նա այդպես նայում իր վրա, թե ինչով եր ինքը մեղավոր, այդ Վահան Վարդյանը չէր հասկանում: Նայենթադրեց, թե Ասատուրը չհավատաց իր կարեկցությանը և անկեղծությամբ ամլած խոսքերը չհամարեց այն խոսքերը, վորով ինքը դեմեց նրան: Դրա համար ել նա կրկին թեև Ասատուրի մեջքով տարավ և այս անգամ ավելի քնքշադին, հարցրեց.

— Իսկապես Ասատուր ջան, ի՞նչ է պատահել...

Ելի նույն մահառիթատելությամբ լիքը հայացքով Ասատուրը չափեց նրան: Իսկ Վարդյանն ավելի աշխատեց քնքշանալ:

— Ինձանից հեռացի՛ր, ոպորտունիստ ջան վորդի, — պայթեց մեկեն Ասատուրը:

Վահան Վարդյանին թվաց, թե Ասատուրը դերի մեջ է: Վարդյանը փորձեց կատակել և դրանով ավելի կատաղեցրեց Ասատուրին:

— Քեզ ասում եմ հեռացի՛ր ինձանից, բո...

Վարդյանը յետ-յետ քաշվեց: Ասլա՛ տես-
նելով խաղ կարծածի լրջությունը, փորձեց
ինքն ել լրջությամբ վերաբերվել:

— Հայհոյանքիդ համար պատասխանատու
յես, այդ մասին յես կզեկուցեմ ավագին, —
սպառնաց Վարդյանն ու հեռացավ:

— Գնա՛, քեզանից վախեցող չկա, յես քո
հետ հետո կխոսամ, — նետեց Ասատուրն ավելի
սպառնազին:

Վահան Վարդյանն ի հարկե, ավագին չզե-
կուցեց, մտածելով, վոր դրանով առիթ կատեղ-
ծի Ասատուրի համար իրեն պոչեր կպցնելու:
Վահան Վարդյանը խուսափում էր այդ բնույ-
թի հարցերով իր գլուխն աղմուկի խառնելուց:

Վարդյանը միայն հանդիմանում էր իրեն,
վոր բազմաթիվ դեպքերից հետո ելի ինքը
սրտաբաց ե մոտենում այնպիսի մարդկանց,
վորոնք իր լավ վերաբերմունքին արժանի չեն:

— Յես քննադատում եյի Ռզնեվի հերո-
սին, Կոստիա Ռեարցովին, — դուրս գալով զո-
րանոցից, մտածում էր նա, — վորն ասում էր
թե, «Յես յոթերորդ հարկից նրա ծոծրակին
չեմ թքի» — յես հիմա դոհունակությամբ
կկրկնեմ այդ խոսքերը. —

Այդ ուր Վարդյանն իր որազրում գրեց:

«Ամենագեղեցիկ գեղեցկությունն ինձ հա-
մար դա մեր քաղաքի վերջալույսն էր: Այսօր
յես վայելում եյի այդ գեղեցկությունը և տրա-
մադրությունս Շալիապինի յերգի պես բարձր
էր ու նրա արվեստի պես նրբին: Կոտրվեց

տրամադրությունս և Շալիապինից իջավ մին-
չև Ասատուրը, բարձունքներից՝ հատակը:

Աչնավերջի պաղ շունչն ե ներս փչում լու-
սամուտից»:

Հարափոփոխ ու տարորինակ:

Այսպես են ասել Վարդյանին: Հիմա, յերբ
մտածում ե նա, գտնում ե, վոր սխալ չեն ասել:
Մարտ ամսվա յեղանակի պես փոփոխական ե
նրա ներքին աշխարհի բնությունը:

Այսօր ելի ճիշտ այդպես էր:

Առավոտյան վաղ լավեց ավագի ձայնը:

— Արթնանա՛լ:

Վահան Վարդյանն ել արթնացավ: «Արթ-
նանալ» — ազդանշանից մինչև «Հագնվել» —
հինգ բուպեյի տևողություն ուներ: Անցավ այդ
հինգ բուպեն, լավեց «վերկաց» — և դեռ Վահան
Վարդյանը քնած էր: Ավագը մոտեցավ նրան,
չարժեց:

— Վեր կացեք, ընկեր Վարդյան:

Վարդյանը նստեց անկողնու մեջ ու հո-
բանջեց: Նրա մարմինն այնպես էր թուլացել,
կարծես թմրեցնող շիճուկ եյին սրսկել:

Վեր կացեք ե, ձեզ հետ չե՞մ, ընկեր Վարդ-
յան:

Վարդյանն ելի հորանջեց: Նա ինչ վոր
ծանրություն գգաց գլխի վրա: Ստուգելու
համար շոշափեց խուզված գլուխը:

Վորքան ել Վահան Վարդյանն աշխատեց
շուտ հագնվել, վորպեսզի Փիզկուլտուրայի

պարապմունքից չուշանա, չկարողացալ հասնել:

— Շարվե՛լ, — լսեց նա բակից ավազի ձայնը:

Վարդյանը մինչև դուրս յեկալ բակը, շարքը պատրաստ եր:

— Ընկեր ավազ, թույլ տվե՞ք շարք կանգնել, — խնդրեց նա զգաստ կանգնելով ու պատիվ բռնելով ավազին:

— Կանգնեցե՞ք, բայց ուշացել ե՞ք, — թույլ լատրեց ավազը դժգոհութեամբ նայելով Վարդյանի վրա:

Վարդյանը հիշեց դպրոցական տարիները, յերբ հաճախ վորպես մշտական բեռ, իր վրա կրում եր ուսուցիչների դժգոհութեան արտահայտութեամբ լիքը հայացքները: Պարզ ե, վոր նրա տրամադրութեանն այլևս չեր կարող Շալիապինի յերգի պես բարձր լինել, վորովհետև նա ուներ նաև Շալիապինի յերգից բարձր ինքնասիրութեան:

— Ա՛ջ, դա՛րձ:

Յերբ մարդ անտրամադիր ե լինում: Ֆիզիկապես ել թուլանում ե: Վարդյանն զգում եր, վոր վատ ե ԱՁ ԴԱՐՁ անում:

— Չա՛խ, դա՛րձ: Քայլո՛ւ վ մա՛րչ: Ընկեր Վարդյան, գլուխդ բարձր, ուսդ մի կծկիր, այդպե՛ս:

— Տեղո՛ւմ:

Ֆիզիկական պարապմունքից հետո կամանդայի բանակայինները նախաճաշի զնացին,

վորից հետո՝ քաղպարապմունքի: Լենանկյան դռանը շարքը ցրվեց: Սպասում եյին, վոր պետը դա պարապմունքն սկսելու: Մոտենալով Վարդյանին, Հրայր Քարամյանը դիմեց նրան:

— Վահան, այսորվա թերթն ունե՞ս:

— Այսորվա թե՞րթը, չունեմ:

Այս անգամ Վարդյանը յերկու քայլ մոտեցալ Քարամյանին:

Ամենից սրտակիցը դիվիզիայի շտաբի կամանդայում ելի Հրայր Քարամյանն եր Վարդյանի համար: Վարդյանն իրեն հարազատ եր զգում նրան:

Վարդյանը մոտեցալ, բայց Քարամյանն սկսեց:

— Ինչպես ե նորին պայծառափայլութեան տրամադրութեանը:

— Իհարկե՛ վատ:

— Վա՛տ, ինչո՞ւ:

— Չե՞ս տեսնում, Հրայր Չան, տրամադրութեանն են թողնում:

— Ինչո՞ւ, ի՞նչ ե յեղել:

— Չտեսա՞ր, առավոտը... հաշիփ չեն առնում, թե մարդ ինչ հոգեկան վիճակում ե լինում, ինչ հոգեկան ապրումների մեջ ե...

Վարդյանը նկատեց Քարամյանի հանկարծակի փոխվելը: Ժպիտը թռավ Քարամյանի դեմքից: Նա այնպես նայեց Վարդյանի վրա, վոր Վարդյանին թվաց թե միայն Մասիսը կարող եր այդպես նայել իր վոտքերին, միայն բանաստեղծը կարող եր Պառնասից այդպես

նայել հասարակ հյուսիսներին: Քարամյանը
այդպէս նայեց ու մեկէն դժգոհ դեմքը թեքեց
Վարդյանից:

Վարդյանը չհասկացավ այդ տարրերինակ
փոփոխութիւնը: Նա մտածում էր, թե ահա
սա յեւ մի Սարգիս է, մի Ասատուր, նրանցից
տարբեր միայն նրանով, վոր սրան հասել են
կուտուրահանութեան թույլ շորշովները:—
Տալստոյը, վոր Տալստոյ է յեղել, յերբեք այդ-
պէս չի նայել իր սրերի վորեւէ նկարչի վրա—
մտածում էր Վարդյանը,—իսկ սա դեռ խաղ-
մըզելու փորձեր է անում և արդեն ուրիշի վրա
այդքան բարձրից է նայում:—

Վահան Վարդյանն արդեն վորոշակիորեն
իրեն սխալված էր համարում Քարամյանի
նկատմամբ:

Պարսպմունքն սկսվեց: Վարդյանն ելի չէր
լսում: Ամփոփվել էր նա ինքն իր մեջ: Պետը,
վոր այնպէս սիրում է անձանձիր բացատրել ու
կրկնել, ելի հասել էր Հովոյին:

— Ո՞ւմ դիկտատուրան է մեր դիկտատու-
րան, — հարցրել էր պետը և ելի կրկնում էր
հարցը: Հովոն սովորականի պէս տարուբերում
էր գլուխը:

Ո՞վ է հիմա մեր յերկիրը կառավարում,
ո՞ւմ իշխանութիւնն է մեր իշխանութիւնը:

Վարդյանն այդ բոսիցին մտածում էր, թե
Հովոն ելի չասի՞ Կլտյանի և ահամա, չիմացա՞յ
թե ինչպէս, տեղից հուշեց:

— Հովո՛, ասա Կլտյանի՛:

Հովոն թեքվեց դեպի նա ու համարյա դո-
ուաց նրա վրա:

— Խա՞, քո արևն ել դինա՛, Կլտյանի՛... .

Պետը բարկացած նայեց Վարդյանին, ապա
Հովոյին:

— Տեսնո՞ւմ ես, վոնց են շփոթեցնում
քեզ: Ուրեմն պետք է այնպէս սովորես, վոր
չսխալվես: Ապա՛ ասա, ո՞ւմ դիկտատուրան է
մեր դիկտատուրան:

— Հը՞... .

Պետն ելի կրկնեց հարցը:

— Ում դիկտատուրան ա՞:

— Այո՛, ո՞ւմ դիկտատուրան է մեր դիկ-
տատուրան:

— Ընկեր վորոշիլովի դիկտատուրան ա,
ո՞ւմ դիկտատուրան ա.

Մյուս բանակայինները միայն ժպտացին,
իսկ Վարդյանը չկարողացավ զսպել իր
փութիցը:

Սարգիսը նստել էր Վարդյանի կողքին:
Կամաց, այնպէս, վոր պետը չլսի, Վարդյանի
աղանջին հայհոյեց նա:

Չաթլա՛խ, դու նրանից լա՞վ մարդ ես, վոր
ծիծաղում ես նրա վրա... .

Այս անգամ ել Վարդյանը չպատասխա-
նեց նրան:

Պարսպմունքը վերջացած հայտարարելուց
առաջ պետը դիմեց բոլորին:

— Ընկերներ, ձեզանից մեկին պետք է
կցենք Հովոյին, նրա թե՛ անդրադիտութիւնը

և թե՛ քաղաքական անգրագիտությունը վերաց
նեղու համար: Ամոթ է կարմիր բանակայինի
համար անգրագետ ընկեր ունենալը: Ո՞ւմ կը-
ցենք, հ՞ը, — ասաց պետն ու նայեց Քարամյա-
նին:

— Ո՞ւմ, — հարցրեց Քարամյանը ու, մի
րոպե լռելուց հետո, պատասխանեց, — Վահան
Վարդյանին կցենք, Վահան Վարդյանին:

— Ո՞ւմ, — հարցրեց Ասատուրը, կարծես
չլսելով:

Վահան Վարդյանին:

Չե, յես դեմ եմ:

— Ինչո՞ւ, — հարցրեց Քարամյանը:

— Յես քեզ ասել եմ, ընկեր Հրայր:

— Չե, Ասատուր, դու սխալվում ես, պետք
է դրա համար ել Վահանին կցել:

— Սկի ել չեմ սխալվում:

— Սխալվում ես, սխալվո՞ւմ ես:

— Ե՛, ասում ես ելի...

— Վարդյանին պետք է կցենք, վոր նա
յեւ չծիծաղի Հովոյի վրա, վոր պատասխանա-
տվություն դա:

Վերջին նախադասությունը Քարամյանն ասաց
ժպտալով, նայելով Վարդյանին: Նա
դուր յեկավ նրան: Իսկ թե ինչ էր Ասատուրն
ասել Հրայրին իր՝ Վարդյանի մասին,
Վարդյանը միայն մի բան էր յենթադրում:

— Լավ, ուրեմն կկցենք ընկեր Վահան
Վարդյանին: Վարդյան մի ամիս հետո Հովոն
փոխված լինի, — պատվիրեց պետը:

Վահան Վարդյանը դժգոհ էր: Սեվա-
գործ բանվորի աշխատանքը դրին ուսիս, մտա-
ծում էր նա, — յես ուրախությամբ կդառնայի
սեվագործ բանվոր, կթողնեյի արվեստը, քան
Հովոյի գլուխը կկամենայի գիտություն լըց-
նել: —

Բայց Վարդյանը չգիտեր, թե ինչու չա-
ռարկեց: Յերևի նրա համար, վոր Քարամյանն
ու պետն էյին առաջարկել:

Վարդյանը Քարամյանի նկատմամբ ելի
լցվեց այն վստահությամբ, վորով լցված էր
առաջ: Չնայած այն տարրինակություննե-
րին, վոր Վարդյանի կարծիքով, կար նրա
մեջ, այնուամենայնիվ նրան Վարդյանը շա-
րունակեց չավ ընկեր համարել:

Պարապմունքից հետո Վարդյանն ելի
մոտեցավ նրան ու, ավելի հուզված ցույց տա-
լով իրեն, քան իսկպպես է՛ր, ասաց.

— Գոհ չեմ կարող լինել քեզանից, Հրայր,
ինչո՞ւ առաջարկեցիր:

Քարամյանը զարմացավ:

— Վահան, իսկպպե՞ս:

— Լուրջ եմ ասում:

— Ինչո՞ւ:

— Իմ կարծիքով, Հրայր, միևնույն է նրա-
նից բան դուրս չի գա:

— Ի՞նչ ես ասում, այ տղա:

— Клянусь чем хочешь. նրան բնությունն
ստեղծել է, միայն նրա համար, վոր նա սալ

քչի: Բնությունը չի սխալվում իր վորոշումներին մեջ:

Քարամյանը մի պահ մտախոհ լուեց, ապա բռնելով Վարդյանի թեվից, քաշեց նրան իր յետեվից:

— Արի քեզ բան եմ ասելու:

Վահան Վարդյանը լուռ հետևեց նրան, ինչպես հիպնոսավածը՝ հիպնոսողին: Լենինյան անկյունում մարդ չկար: Քարամյանն արմունկը հենեց սեղանին, ճակատն առաջ ափի մեջ ու սկսեց խորհրդավոր նայել Վարդյանին: Իսկ այդ բույեյին Վարդյանը մտածում էր. «Այս դիրքով յեթե մեզ քանդակեյին, հոյակապ մի մոնումենտ կլիներ, հոյակապ մոնումենտ...»:

— Գիտես ինչ, Վահան, յես քեզ հետ ուզում եմ խոսել, միայն թե՛ չվիրավորվես, խիստ եմ խոսելու:

— Ինչո՞ւ պետք է վիրավորվեմ:

— Միևնույն է, ուզում ես վիրավորվիր, քո գործն է դա, բայց յես, վորպես ընկեր, քեզ հետ խոսելու յեմ չար լեզվով:

— Խնդրե՛մ, խնդրե՛մ, յես շատ ուրախ եմ:

— Գիտես, Վահան, դու մի տեսակ պարոնսավարի յես նայում տղաներին... Նրանց արհամարում ես, այն կարծիքն ունես, թե նրանց բանականությունը բուրթ է, թե նրանք միայն սայլ քչել կարող են և այլն և այլն: Այդ բոլորը, ընկե՛ր Վահան, միայն պարոնի հոգեբանության ու մտայնության արդյունք են,

ուրիշ վոչինչ: Իսկ դու կոմյերիտական ես, դու Լենինյան կոմունիստական յերիտասարգական միության անդամ ես:

— Այո, յես 1931 թվից կոմյերիտական եմ, գեղարվեստական տեխնիկումումն եմ ընդունվել, — պատասխանեց Վարդյանը: Բայց Քարամյանն ուշադրություն չդարձնելով նրա պատասխանի վրա շարունակեց:

— Դու կարծես թե չես սիրում ու հարգում ընկերներիդ, վորոնք այն դասակարգի անդամներն են; վորի յերիտասարգական կազմակերպության մեջն ես դու ել: Այդպես չի՛ կարելի... Ի՛նչ անենք, վոր յես ու դու մի յերկու գրքույկ կամ վեպ ավել ենք կարդացել նրանցից, մի քանի արձանագործի ու նկարիչի անուն դիտենք, վոր նրանք չդիտեն, քերականական որենքներից ավելի քիչ ենք շեղվում, քան նրանք: Յես որինակ, յերեք-չորս տարի առաջ ճիշտ այնպես եյի, ինչպես նրանք՝ այսօր: Բացի դրանից, դու մանր բաներից շատ ես դժգոհում, թե ինչու ավագը քեզ այսպես կարգադրեց, նույն բանն ուրիշին կարգադրելու փոխարեն, թե ինչու նա բարկացած խոսեց հետդ և այլն և այլն: Յես հասկանում եմ քեզ: Դու կարծում ես, վոր յեթե ավագը տառասխալով է գրում, իրավունք չունի քեզ հրամայելու, վորովհետև ստեղծագործությունից արդեն թանգարանում բան կա գրված... Այդպես չպետք է մտածել, սիրելիս: Մենք վստահել ենք ավագին մեր կա-

մանդայում ղեկավարելու պրոլետարիատի դիկտատուրայի պաշտպանութեան գործը, ուրեմն պետք է կատարենք նրա հրամանը, վորը բղխում է դասակարգի շահերից և վո՛չ թե իր՝ ավագի քմահաճույքից: Ով չի կատարում նրա հրամանը, դժգոհում է, նա պրոլետարիատի դավաճանն է, այո, պրոլետարիատի դավաճանը ...

Վահան Վարդյանը փորձեց արդարանալու վորեմէ բան դտնել ասելու, բայց կմկմալ իսկ չկարողացավ:

Լենանկյունից դուրս գալով, Քարամյանը շարունակեց:

— Վորպես ընկեր, իրավունք եմ համարում ինձ, քեզ նախազգուշացնել: Նոր կոմյերիտական ես, բայց այդպիսով կարող ես քեզ դուրս դնել կոմյերիտությունից...

Վարդյանը փշաքաղվեց: Նրա ձեռքն ինքնիրեն գնաց գրպանը: Կոմսոմոլի տոմսը գրպանումն էր: Նա շոշափեց տոմսն ախտեղ ու հանգիստ չնչեց:

— Վոչ միայն կոմսոմոլից, այլև կարող ես բանակից ել քեզ դուրս դնել, բանակից ել... Յերկրի պաշտպանությունը վստահվում է նրան, ով իր վողջ հոգեբանութեամբ ու զգացումներով է նվիրվում այդ պաշտպանութեանը: Իսկ մեր գործն այժմ ուրիշ բան չէ, քան յերկրի պաշտպանությունը...

Վարդյանը գլուխը կախած լսում էր:

Այդ ոբը յերեկոյան Վահան Վարդյանն իր որագրում գրեց.

«Ուշ յերեկո յե, բայց քնել չեմ կարողանում: Միտքը կանգնեցնել չի լինում: Կինո-ժապավենի նման անցնում է նա մի պատկերից մյուսին, բայց յերբեք չի կտրվում կինո ժապավենի նման: Այն, ինչ վոր Քարամյանն ասաց այսօր, հասարակ բաներ էյին, ԱՅՖ ու ԲՆՆ. Քարամյանը նույնիսկ ԳԻՄ-ին ել չհասավ: Բայց այսօր, յերբ նա կրկնեց դրանք ինձ համար, և, այնքան բարեկամի նման (դա նրա հատկությունն է), յես հանկարծ հասկացա այդ հասարակ բառերի ու նախադասությունների լրիվ իմաստը: Նրա նույնիսկ ամեն մի բառը լիքն էր իմաստութեամբ, ինչպես լիքն է լինում սերմի հատիկը: Յեվ ահա այդ հատիկները ծիլեր են արձակում ուղեղիս բոլոր խորշերում ու չեն թողնում, վոր քնեմ...»

Ճիշտ է, Քարամյանը մի քիչ ել սպառնաց, բայց յես վոչ վախեցա և վոչ ել վիրավորեցի: Քես հենց վաղը անպայման պետք է խնդրեմ Քարամյանին, վոր թույլ տա իրեն նկարեմ...

Մատիտը տետրակի մեջ փաթաթելով՝ Վահան Վարդյանը բարձի տակը գրեց այն և աղյալը քաշեց գլխին: Նա կարծում էր վոր այս անգամ գոնե անմիջապես կքնի, բայց ձիշտ հակառակը դուրս յեկավ: Մտքերն հաջորդում էյին իրար:

Մտածելով Քարամյանի մասին, Վարդ-
յանը հարցրեց իրեն:

Բայց վերջապես Հրայրն անձնական կյանք
չունի, վորոնք են նրա «գաղտնիքները»: Մի-
այն քաղաքակրթ խնդիրների մասին ե խո-
սում և ուրիշ վոչի՞նչ: Յե՛վ Վարդյանն ելի հի-
շարով Կնուտ Համսունի «Պան»-ի պատմու-
թյունը, քիչ մնաց ծիծաղեր: Իս Բարամյա-
նի «գաղտնիքներից» մեկն եր, վոր Վահան
Վարդյանը կարողացել եր իմանալ և միշտ հի-
շեցնում եր նրան, յերբ ուզում եր կատակել:

Շտարի հեռախոսը հաճախ զրնդում եր և
աղջկային մի ձայն հարցնում եր.

— Ասացե՛ք խնդրե՛մ Հրայրն այդտեղ ե:

Վարդյանը բոլորից շատ եր հետաքրքրվում
իմանալու, թե ով ե Հրայրին հեռախոսողը:
Վերջապես հաջողվեց իմանալ: Մի անգամ
բարձրահասակ, մուգ շեկ մազերով մի աղջիկ
յեկավ Հրայրին կանչելու: Նրա մանր աչքերը
փոսիկների միջից փայլում եյին սիրո ու չա-
բության արտահայտությամբ:

Պատրվակով դուրս գալով շտարի դուռը,
Վարդյանը բարեկեց Հրայրին ու կանգնեց:

— Ծանոթացե՛ք, ընկերս ե, նկարիչ—ներ-
կայացրեց Քարամյանը Վարդյանին:

Վարդյանը սեղմելով աղջկա ձեռքը, աշխա-
տեց չմոռանալ նրա անունը, Լիդա Ազարյան:

— Լիդա Ազարյան, — ապա գննեց Լիդայի
վոսքից մինչև դուրսը: Նկատելով Լիդա Ազար-

յանի քիթի վրայի կոռ խազը, հետադառնում
Վարդյանը կատակում եր.

— Ճիշտն ասա, Հրայր, դա հո քո կծածի
հետքը չի՞:

— Նու, թող, Վահան, — չուզե՛նալով լսել
այդ կատակները, կտրում եր Հրայրը: Բայց
«Պան»-ի պատմությունը Վարդյանի համար
սենսացիոն կատակի նոր նյութ եր:

Հանգստի որ եր: Քարամյանը թուլլովու-
թյուն ուներ քաղաք դնալու: Որապահյ:
Վարդյանն եր.

— Յես տուն եմ գնում, յեթե ինձ կհարցնեն,
զանգահարի՛ր 7-81:

Մի ժամ հետո Վարդյանը զանգահարեց.

— Հրա՞յրն ե, բարև, Հրայր:

— Բարև ո՞վ ե:

— Վահանն ե, ի՞նչ ես անում:

— Վահան Վարդյա՞նն ե, հա՞. կարդում
եմ, Վահան ջան:

— Ի՞նչ ես կարդում:

— «Պանն» եմ կարդում, վաղուց կարդացել
եմ, ելի՛ եմ կարդում:

— «Պան»-ը յես ել եմ կարդացել: Մենա՞կ
ես, վոչ վոք չկա՞ մոտդ...

— Վոչ վոք, մենակ եմ:

— Վոչ վոք, մենակ հարյո՞ւր տոկոսով:

— Մենակ եմ ելի՛, ասում եմ:

— Խազով քիթ ունեցողը մոտդ չի՞...

Վարդյանի այդ հարցի վրա Հրայրն անմի-

Ղապեօ կախեց հեռախոսի փողը: Իսկ Վարդ-
յանը մի քանի րոպե հետո ելի զանգահարեց:

— Ո՞վ ե խոսում.— հարցրին 7-81 համա-
րէց:

Դա մի աղջկա ծանոթ ձայն եր:

Լիդա Ազարյանի ձայնը:

Հետեյալ որն արդեն Վահան Վարդյանն
արտակարգ ուրախության մեջ եր, մանավանդ
վոր Քարամյանը չեր արդարանում:

Եղպեօ ելի, Հրայր, ասում ես վոր «Պանն»
եյիր կարդում... Չորս ժամ մնացիր տանը,
չորս ժամում քանի՞ անգամ «կարդացիր»:

Հետո այլևս Ազարյանը վոչ զանգահարում
եր և վոչ յերեվում:

— Ո՞ւր ե Լիդան, չի յերևում,— հարցրեց
Վարդյանը մի անգամ:

— Ամուսնացա՛վ, — պատասխանեց Քարամ-
յանը կարճ և այնպես, վոր կարծես թե ուրա-
խացել եր Լիդա Ազարյանի ամուսնության հա-
մար:

— Ուրիշի խրատում ես, բա վոր չեյիր
ամուսնանալու, ինչո՞ւ եղքան «Պանն» կարդա-
ցիր...

— Այդ մասին ել չխոսենք, — կտրեց Քա-
րամյանը, և դրանով ել վերջացա՛վ «Պանն»-ի
պատմությունը:

Վարդյանի աչքերն արդեն փակվում եյին:
Նա քնում եր: Բայց հանկարծ թռա՛վ ու նստեց
անկողնում:

— Վահ, մոռացել եյի... Յես Լյուբային
պետք ե բացիկ գրեյի այս յերեկո...
Ապա մի րոպե մտածելով, վորոչեց.

— Վոչինչ, կգրեմ հետո... ու պառկեց
քնելու...

— Բանվորի դիկտատուրան ա, վի՞ր գիկ-
տատուրան ա...

• Գնի մեջ խոսում եր Հովոն:

Վահան Վարդյանն արդեն սկսել եր կա-
տարել իր պարտականությունը՝ պարապել
Հովոյի հետ: Առաջին յերկու որը նա դեռ տա-
տանվում եր, համաձայնի մշտապե՞ս պարա-
պելու, թե՞ ուղղակի հրաժարվի: Յերբորդ
որն արդեն չեր մտածում հրաժարվելու մա-
սին:

Չարմանալի բան: Հովոն, այն Հովոն,
վորը, Վարդյանի կարծիքով միշտ ել բու՛թ
պետք ե մնար, այնպես եր հետաքրքրվում
Վարդյանի ասածներով, վոր Վարդյանը նույ-
նիսկ վողեվորվում եր իր կատարած գործով:

Յուրաքանչյուր խնդրի մասին Հովոն մի
քանի հարցեր եր տալիս և ամեն մի հարցը մի
քանի ձևով:

— Բուրջվածի տղեն ել հասարակ գինվոր
եղնի:

— Բանվոր շատ ա բուրջվածից, ըբա ին-
չի՞ բանվոր չեյնի հաղթա:

— Վոր բուրջվածներու յերկրներու մեջ
անոթի կմնան, թող մի որ հելին ու սպանեն
բուրջվածներուն, մե խետ ընդոց քոք կտրեն...

Ու այսպէս՝ հարցերի շարան:

— «Բանից պարզվում է, վոր յես ել կարող եջի սխալվել: Նա նույնիսկ մտածում է ու հետաքրքրվում, ուրեմն՝ նշանակում է, վոր անհուսալի չի, կարող է միշտ բուժ բանակա-նութեան տեր չմնալ» — մտածում էր Վահան Վարդյանը:

Այդ օրը, յերբ Հովոն ելի հարցնում էր, թե ինչու բանվորները հեղափոխութիւն չեն կատարում բուրժուական յերկրներում, Վահան Վարդյանը, փոխանակ հարցին պատասխանելու, հիշեց իր բլոկնոտում գրած մի գրքից վերցված քաղվածքը: Բլոկնոտան գրք-պանից հանելով, նա այդ քաղվածքը կարդաց Հովոյին:

— Տես, ետեղ ի՞նչ է գրված, Հովո:

— Ի՞նչ ա գրուկ:

— Լսի՛ր, կարդամ:

— Ը՛խ, կարդա, լսում եմ, Վահան ջան:

«Գիտութիւնը դադարել է միայն մտաչե-լի մնալ նրանց, վորոնք ծնվել են դոյակների հայելապատ սենյակներում, դաշնամուրի նը-վազ են լսել և հայրական սեղանների վրա տե-սել են արձաններ ու պատերին՝ հանճարների ստեղծագործած նկարները՝ դնած վոսկով ու դուրարներով: Գիտութիւնը կարող են ու աի-րապետում են գյուղերից, հյուղակիներից ու գավոզներից յեկածներն էլ: Յե՛վ մեզ մոտ դը-րանք են գլխավորապէս, վոր համառ ու ան-

վհատ մտազլցում են դեպի գիտութեան դա-դաթները»...

— Տեսնո՞ւմ ես, ինչ լավ բան է, յերեկ կարդացի մի գրքում:

— Ը՛խ, լավ բան ա, — համաձայնեց Հովոն այն անիմատ ու հիմարական ժպիտով, վորը վաղուց էր, ինչ նրա դեմքին չէր տեսել Վարդյանը:—

— Լավ բան է, իհարկէ, — կրկնեց Վարդ-յանը՝ մտքում ելի կարդալով քաղվածքը: Խոսքը դեղեցիկ էր, իհարկէ: Յե՛վ հիմա, յերբ Հովոն հարցերի տարափ էր տեղում նրա դիտին, թեկուզ պրիմիտիվ հարցերի, նա ա-վելի խորութեամբ էր ըմբռնում իր բերած քաղվածքի միտքը: Վարդյանը դանում էր, վոր ինքն, իսկապէս հարափոփոխ է իր կար-ծիքների մեջ էլ:

Այսօր, յերբ Վարդյանը մտով լեռան-կյուն, այնտեղ էր միայն Հովոն:

— Մե-ե-ր — մեր կ-ու-ս-ա-կ-ց-ու-թ-յ-ու-ն-ը — կուսակցութիւնը, բ-ա-ն-վ-ո-ր — բանվոր դ-ա-ս-ա-կ-ա-ր-դի, դասակարգի կ-ու-ս-ա-կ-ց-ու-թ-յ-ու-ն է կուսակցութիւն ե...

Միտքինակ, ու առանց կետադրական կա-նոններն հարգելու, կարդում էր Հովոն:

Ներս մտով Բայլչիկի Ասատուրն էլ:

— Ամոթ քո բատրակութեան ստածին, Հովո, մինչև հիմա հլա կարդալ չես կարում,

— քաչեց նա Հովոյի կոմունարկան աչքերի վրա:

— Սուս կաց ե՛, քյոփողլի Բայլչեիկ Ասատուր, — հրեց նրան Հովոն առանց աչքը գրգռել վրայից հեռացնելու, ու շարունակեց կարդալ:

— Ի-ս-կ-ի-սկ կարմիր-կարմիր Բ-ա-ն-ա-կ-ը-բանակը, հ-ա-մ-ա-չ-խ-ա-ր-հ-ա-յի-ն-համաշխարհային, պ-ր-ո-չ-ե-տա-ր-ի-ա-տ-ի-ս-պրոլետարիատի բանակն է:

Ապա Հովոն ծալեց գիրքը մտածեց մի քանի րոպե ու թեքվելով դեպի Վարդյանը, հարցրեց:

— Վահան ջան, ի՞նչ կեղնի, ասես, դիկտատուրիա ի՞նչ ա.

Ապա՝

— Ֆաչիզմ ի՞նչ ա:

— Ենտուզիզմ ինչի՞ն կսեն:

— Տրամվա ի՞նչ ա:

— Աջ թեքումն ա լա՞վ, թե՞ ձախ թեքում...

Վարդյանը յերբեմն ճանձրանում էր: Ավելի դժվար բան, քան քսանյերկու տարեկանին գրագիտության, գիտության ու քաղաքականության այբուբենն սովորեցնելը, նա յերեվակայել չէր կարող: Բայց յերբ Վարդյանը տեսնում էր, վոր Հովոն ո՞ձի գլխի նման իր քիթը շարժում է ողում, կարծես ցանկացած բառը հոտոտելու միջոցով այնտեղ դտնելու համար, յերբ Վարդյանը տեսնում էր այդ, չէր կարող հանձն չառնել վորոչ տանջանքներ,

վորովհետև տեսնում ու զգում էր, վոր Հովոն էլ է տանջվում:

Բայց ամենից զարմանալին այն էր Վարդյանի համար, վոր այդ մարդն զգացումներ էլ ունի, նույնիսկ լիրիքական զեղումներ: Զեղումներ, իհարկե, վոչ թե քառյակներով ու հանդերով արտահայտված, այլ դուռոցով ու մկանների ուժով:

Յերեք չորս որ հետո, այն որվանից, յերբ հանձնարարվեց Վարդյանին պարապել Հովոյի հետ, արդեն մի քանի անգամ մարտական պատրաստականության պարապմունքներ էյին յեղել կամանդայում: Մի որ էլ, յերբ նոր էր վերջացել «Մեռյալ-ժամ»-ը, Հովոն արդեն զորանոցում չէր: Վարդյանը նրա յետևից գրեաց լենանկյուն, վոր կարդա «Պրոլետարակոյե Իսկուստովո» ժուռնալը: Յերբ Վարդյանը ներս մտավ, տեսավ, վոր Հովոն ցուցամատը ձախ աչքի վրա սեղմած, քարի պես լուռ կանգնել էր սեղանի մոտ, իսկ սեղանի վրա լցված էյին հրացանի փակադակի և տվիչ մեխանիզմի մասերը: Հովոն չղցաց Վարդյանի ներս մտնելը:

— Ի՞նչ ես մտածում, — հարցրեց Վարդյանը հանկարծակի:

— Վա՛յ դու ըստե՞ղ ես:

— Հա՛, ի՞նչ ես մտածում:

— Հ՞ը...

— Ի՞նչ ես մտածում:

— Ըսկի բան էլ չեմ մտածում, ես անտեր պաչի անուն մտես դացեր ա, չգիտամ ի՞նչ ա,

- Վորդի:
- Եստոր, ես անտեր պոչի:
- Մասածիր, կգտնես:
- Թու, անտեր իմալ մտես գնաց.
- Հրահանն իր...
- Վա՛յ, խա՛, խա՛, հրահանն իր կոճա-
կով...

Հովոն շարունակում էր հավաքել փակա-
դակի մասերն ու ելի միացնել, իսկ Վարդյանն
սկսել էր կարդալ, «Պրոլետարսկոյե իսկուստ-
վոն»: Հետո կամանդայի բոլոր բանակայիննե-
րը լցվեցին լենանկյուն և նրանցից յուրաքան-
չյուրը վրա պրծավ մի թերթի: Ամեն անգամ,
յերբ բոլորով այդպես լցվում էին լենանկյու-
նը, Վարդյանին թվում էր, թե վորեւէ հան-
րային գրադարանում են գտնվում: Տիրում էր
չատ հաճելի ընդհանուր լուսթյուն:

«Պրոլետարսկոյե իսկուստվոն»-ի տեսու-
թյունը բանվոր սկսնակ նկարիչների մասին,
Վարդյանը վերջացրեց այն ժամանակ, յերբ
բանակայիններն արդեն Փիզկուլտ դահլիճ ե-
յին գնացել: Լենինակրթում մնացել էին մի-
այն Ասատուրն ու Հովոն:

Վերջացնելով հոգվածի ընթերցումը, Վարդ-
յանը շուտ ավեց որվա թերթի վերջին յերեսը:
Հայտարարությունները նայելուց հետո՝ հե-
ռագրերի բաժնում նրա աչքն ընկավ Հիալերի
նկարին, վոր ատամների մեջ բռնել էր մի
մերկ սուր: Այդ ժամանակ, բարկացած շուտ

տալով թերթի մյուս յերեսը, Ասատուրը
փնթփնթում էր.

— Եան վորդի, շան վորդի Փաշխտներ,
տեսնում եք ի՞նչեր են անում, յես ձեր են...

Հովոն, ձեռքում ելի փակադակի մի մաս
բռնած, մտածում էր, ապա մոտեցավ Վարդ-
յանին:

— Վահան ջան, եստոր անունն ել մտեա
գնաց, իմ լեզվի վրեն ա, հմա չի գա միտս:

— Զարդանն...

— Ճիշտ ա, ճիշտ ա, զարդանն իր ասե-
ղով: Վա՛, քո խոքուն մեռնեմ, Վահան ջան,
ախպեր ջան, ազիզ ջան...

Զարդանը սեղանին դնելով, Հովոն ամուր
գրկել էր Վարդյանի մեջքն ու սեղմում էր,
քիչ էր մնում վոսկորները ջարդի: Հովոն սեղ-
մում էր նրան իր ոսմիկ մկանների ամբողջ
ուժով ու գոռում:

— Ախպեր ջան, քո խոքուն մեռնեմ: Ախր
դու կցվեր ես ընձի ե՛... կցվեր ես ընձի, հա՛
հա՛, հա՛, հա՛, ... գինա՞ս կցվել ինչ ա՞... մենք
կցվեր ենք իրար, հա, հա, հա...

Սեղմում էր Հովոն՝ ամբողջ եյությամբ
գարձած ուրախություն:

Վորքան տարրինակ ու արտառովոր թը-
վաց Վահան Վարդյանին, յերբ առաջին ան-
գամ Հովոն այդպես սեղմեց իր մեջքը, այժմ
այնքան Վարդյանը հասկանում էր նրան: Ա-
ռաջին անգամ Վարդյանը հեռ վանեց նրան ի-
րենից: Այժմ այդ չարավ:

Գրկելն ու գոռալը, սեղմելն ու ցավացնել՝ դա Հովոյի սերն է առ ընկերը, դա նրա գեղումների արտահայտութեան ձևն է: Ամեն մարդ իր զգացումներն արտահայտելու մի ձև ունի: Հովոն արտահայտում է մկանների ուժով ու գորոցով, իսկ յեթե նա պոետ լիներ, յերևի կարտահայտեր քառյակներով ու վոտանավորներով:

— Ինչ ծիծաղելի բան է, Հովոն պոետ, բանաստեղծ, իսկապես վոր ծիծաղելի յե...

Ծիծաղեց Վարդյանը: Չհասկանալով այդ ծիծաղի իմաստը. Հովոն ելի ձեռքերով ողակեց նրա մեջքը:

— Շատ պինդ ես սեղմում, Հովո, բա վոր սիրածդ լինի, ինչպե՞ս կսեղմես...

— Ե՛... խուսափեց Հովոն գեղջուկի ամոթխածութեամբ:

— Իսկապես, Հովո, վոր սիրած լինի ինչպե՞ս կսեղմես...

— Ե՛, յես սիրած չունեմ, դու ունես, են որ չտեսա՞, վոր են սև աղջիկ եկավ քո մոտ:

Վարդյանը մտածում է:

— Հովո, վոր կոխի լինի մարդ կսպանե՞ս:

— Ինչի չեմ սպանի, ըբա ել ընչի եմ եկե կարմիր բանակ:

— Մեղքը չե՞ն, Հովո, վո՞նց կսպանես:

— Ինչի՞ են մեղք, թշնամի յա չե, գուշման ա, որ ձեռեն դա, են ել մեղի կսպանա. — պատասխանեց Հովոն հաստատակամ ու կռպիտ:

Այդ բուպեյին Վահան Վարդյանը նկատեց, վոր Ասատուրը թերթը թողած, խոժոռ հայացքով իրեն է նայում:

Ելի ի՞նչ վորդ է շարժվում նրա ուղեղում՝ հարցնում եր Վարդյանն իրեն ու վորևէ բան չեր յենթադրում:

— Ինչո՞ւ յես այդպես նայում, Ասատուր:

Ասատուրը, պատասխանելու փոխարեն, ինչ վոր բան լինի լինի:

— Ի՞նչ է, ե՛, ի՞նչ էս ասում, ընկեր, — վրա տվեց Վարդյանը:

Այդ ժամանակ Ասատուրը վոտքի կանգնեց ու ձեռքը սեղանին զարկելով գոռաց.

— Են եմ ասում, վոր վերջ տաս քո ոպորտունիստություններին, հասկանալի՞ յա... Վահան Վարդյանը զայրույթից դողում էր:

— Ինչ ոպորտունիզմ գառանցանքի մե՞ջ էք, ինչ է:

— Չառացանք, մառացանք չեմ իմանում, բոլ ա ոպորտունիստություն անես:

Դողում էյին Վարդյանի բոլոր մկանները: Նա կորցնում եր իր հավասարակշռությունը:

Հիմար, դմբո, յես կարիք չեմ զգում քեզ հետ խոսելու, — պոռթկաց Վարդյանը և գեմքը թեքեց Ասատուրից:

— Շնորհակալ եմ, շատ չնորհակալ եմ, — պատասխանեց Ասատուրն հանդիստ ու դուրս յեկավ լենանկյունից:

Վարդյանը աշխատում էր հաղթահարել
էր բարկությունը, բայց չէր կարողանում: Նա
զգաց, թե ինչպես արտասուքի կաթիլները
ցած դուրսվեցին աչքերից:

Վահան Վարդյանը լաց էր լինում:

Մի քանի րոպե հետո, յերբ արդեն չորա-
ցել էլին արտասուքի կաթիլները, Վարդ-
յանը խոսում էր ինքն իր մեջ ու ինքն իր հետ:

— Սատանան տանի ինձ, ինչո՞ւ յեմ յես
այսպես դուրսզգաց ու փխրուն սրտով ստեղծ
վել: Հավատում եմ, վոր ուրիշներն այդպիսի
դեպքերում կկարողանան տիրապետել իրենց,
ինչպես թեկուզ Սաստուրն իրեն տիրապետեց:
Իսկ յես լաց եմ լինում, այո՛ իսկական որիոր-
դի նման:

Յե՛վ նա հիշում էր իր մասին ասած Քա-
րամյանի խոսքերը:

— «Բավական է մի փոքր պատճառ և դու
հուզվում ես ու տխրում, նույնպիսի փոքր ա-
ռիթով ել ուրախանում ես ու խանդավառվում:
Նման ես դու հանկարծակի բռնկվող բամբակի,
դա խառնվածքի անկազմակերպվածություն է,
դա տարբերացնություն է».—

Վորքա՞ն ճիշտ է հասկանում Քարամյանը
մարդկանց: Չե՞ վոր այս անգամ ել հենց դրա-
նից էր, վոր Վարդյանը կատարելապես հի-
մար դրության մեջ էր, վոր լաց էր լինում նա
որիորդի նման:

Իսկ սրտի ու հոգու այդ տարբերացնու-

թյան համար Վահան Վարդյանը չի ների
իրեն, յերբեք չի ների:

— Բան չկա, բան չկա, Վահան ջան մի
մտածա, ամոթ ա, լա՞լ ինչա... .

Հանդիմանում են Վարդյանին և այն ել
ո՞վ—Հովոն: Վարդյանը վայրկենապես սթափ-
վեց նրա խոսքերից, արտասուքները դադա-
րեցին և այդ վայրկյանին էր, վոր սկսեց մտա-
ծել, թե ինչ է ասել Քարամյանը իր խառնը-
վածքի մասին:

— Հրա իչկա, իմ աչքեր կխփում ու փակա-
դակը կհավաքեմ, սարքի բջեմ,— բռնազբոսի-
կորեն ծիծաղում էր Հովոն ու հավաքում փա-
կազակի մասերը,— ճիշտ ա՞, լավ հավաքե-
ցի՞... .

Վարդյանը հասկանում էր, վոր Հովոն
ուզում է շուտ մտաոցնել տալ Սաստուրի հասց-
քած վիրավորանքը: Բանից պարզվում է, վոր
Հովոն վոչ միայն զգացումներ ունի, այլև՝ ու-
րիշի զգացումներն էլ է հասկանում: Ինչքան
պաղանիքներ կան մարդկանց հոգում ու սրտի
խորքերում, վոր հետո, շատ հետո յես միայն
զգում ու հասկանում:

— Գինա՞ս, Վահան ջան, թե ինչի յես լավ
չսորվի հրացանի մասեր,— հանկարծ հարցրեց
Հովոն:

Վարդյանը չհասկացավ:

— Կսեմ՝ դինա՞ս ինչի՞ զոռ էր հրացանի
մասեր յես չսորվի, հը՞:

— Ինչո՞ւ:

— Կվախենի, Վահան ջան, իմ ջան կդո-
ղեր:

— Վախենում եյի՞ր, ինչո՞ւ:

— Իմալ չվախենի, Վահան ջան, մոր գի-
նաս ի՞նչ ա եղե իմ գլուխ... պատկուց եմ վա-
խեցե, հլա չուրի մկա յել եղ վախ իմ որտի
մջից չեյեր ա:

— Ինչ վախ, Հովո ջան, պատմիր:

— Յես պտիկի ի, Վահան ջան, վեց տարե-
կան: Իմ խոր խեա գացերի չու տավար կար-
ծուցի: Կովեր ու յեղներ փովել ին չայիրի մեջ,
կարածին: Մար տեղ եր: Հլա ձուեն ել լավ
չխալել եր: Պաղ քամին կիչեր ու կզարկեր իմ
խոր բեղերուն: Յես իմ գլուխ գրել ի իմ խոր
չոքերուն ու ենդոր բեխերու խեա կխաղի, են
ել թիղնել եր մի ջոջ քարի ու իրա գլուխ
վերեմ կբարձրացուցեր, որ իմ ձեռներ չխասին
իրա բեղերուն: Մեկել վը՛գ՛գ՛ — մե բան վզզաց
հնցամ իմ անգըճի մոտով: Վգ՛գ՛ — եղ վզզոց,
մոր չուրի մկա ել իմ անգըճի մեջն ա, չուրի
մեռնիմ ել, եղ վզզոց չմոռանամ... Եղ ձեն որ
իմ միտ գուքա, իմ ջան կդողա... Խա՛, իմ
ախար որ վոր ասեմ, Վահան ջան, մեկ ել վգ՛գ՛
մի բան հնցամ իմ անգճի մոտով, յես գիցա
թե բզեզ եր դզաց ու գնաց: Մեկ ել վգ՛գ՛
... Ես անգամ յես տեսա, որ իմ խեր քարի
վրեն թինդնուկ ել մնաց ու ել իրար չեկամ:
Մենակ մեկ քիչ խոխոաց: Գյուլլեն, թու չե,
գնդա՛կ, գնդակ կպեր եր իմ խոր վզին, վիզ
ծակեր եր ու գացեր եր: Ախ, Վահան ջան...

Հովոն այնպես եր զգացվել իր պատմա-
ծից, վոր քիչ եր մնում լաց լիներ:

— Հայրդ առողջացա՞վ — հարցրեց Վա-
րյանը:

— Չե, Վահան ջան, իմ խեր եղ գնդակից
ել մեռամ: Մե անգամ խուաց ու ձեն կարեց
իմ խեր: Մեկ ել տեսա պատրոնդաչերով, ջոջ-
ջոջ փափախներով, խինդ-վեց մարդ եկան մեք
տավար թողվեցին որ տանեն: Յես յացի ու
փախա: Որ փախա, եղոնք թվանք պարզեցին
ընձի: Մեկ ել տեսա իմ ձուռ ծանդրցամ ու
տաքցամ: Յես ընկա դեռնին: Եղոնցից յերկու
խողի յեկան իմ վրեն: Յես ճվացի ու իմ խելք
գնաց: Որ իմ խելք մե քիչ եկերեր տեղ, լսե-
ցի որ եղոնք խայեվար կխոսան: Որ իմ աչ-
քերը բացեցի, եղոնք ես անգամ թուրքեվար
խոսացին, յանի թե թուրք ենք: Հմա սութ,
խային: Վահանին որ ըսեմ, իմ եարեն լավ-
ցամ: Յես մացի յեթում: Իմ խեր նախորդ եր,
ես ել ընդոր պես հորթարած դարձա: Հմա
վորտեղ վոր թվանք կտենի, իմ ջան կդողեր...

Իմ խեր որ մեռամ, ընդոր նախորդության
հախ մե եղ հորթիկ եր մնացե: Իմ խոր մեռնե-
լուց խինդ տարի հնցամ, եղ հորթիկ դարձամ
կով: Եղ կով թաղա հղի յեր, յես ել ենքան
հաղ կենի եղ կովուց, ենքան կախրի: Են վախ-
արն եր, որ բալչեիկուլթուն գուքեր ու դաշնա-
կըն ել կփախեր: Մի որ ել, դաշնակներ
պախկովուկ բալչեիկներուն չուռ գուքին ձո-
րերուն մեջ, մեկել թրխ- թրխկոցի ձեն լավամ:

Թարսի պես եղ շան սղի գնդակ եկավ ու մեր
երնջու հղի փորին կպավ: Երինջ մզգած ու
նստավ: Ելի իմ խոր մեռնելու որվա պես իմ
ջան դողաց... Վահան ջան, աղնիվ խոսք,
ըսկի եղոնք իմ մտեն չերթան: Հլա ենոր ըն-
կեր պես կխարցի, կսա՝ կուլակին ինչի՞ բա-
նակ չրերենք: Գինա թե՛ յես չգինամ որ կու-
լակ մեր դուշմանն ա... Եղ հմենն ըսեցի են-
դոր խամար, որ գինաս, թե ինչի յես հրացա-
նից կվախենի: Չե, ըսենք՝ չվախենի հմա իմ
զգվալ գուրեր...

Մկա կմտածեմ, որ յես սխալի, պտի սով-
բեմ հրացանի մասեր, որ կուլակներուց իմ
գրեժ խանեմ:

— Չե, Վահան ջան, պտի սովբեմ:

— Ի հարկե, պետք ե սովորես:

— Ի հարկե Վահան ջան, ի հարկե, յես
քո խորուն մեռնեմ Վահան ջան:

Հովոն ելի փաթաթվեց Վարդյանին:

— Աղիղ ջան, ախպեր ջան... Հմա որ
տխրես, ել իմ ախպեր չես, հա՛, ամոթ ա,
տղամարդ ինչ ա՛, լա՛լ ինչ ա...

Վահան Վարդյանը վոչ մի հանդիմանու-
թյունից այնքան չեր ամաչել, վորքան այդ
պահին: Նա ամաչեց Հովոյի հանդիմանու-
թյունից: Վարդյանը կցվել ե Հովոյին՝
նրան սովորեցնելու, դաստիարակելու ե ահա,
պարզվում ե, վոր ինքն ել դաստիարակվելու
կարիք ունի: Յեվ ահա նախատող ու հանդի-

մանական խոսքեր ե լսում նա... Հովոյից ել,
Հովոյից, վորին ինքը մարդ չի հաշվել:

Ինքն իրեն ճնշող մտածումներից ազա-
տելու համար, Վարդյանը գիմեց Հովոյին:

— Իեր, Հովո, գիրք կարդա:

Հովոն գիրքը բռնած մտտեցավ նրան ե
նա ողնեց Հովոյին կարդալուն:

Փիղկուլա դահլիճից բանակայինները վե-
րադառնում եյին: Նրանցից վոչ վոք չնկատեց
Վահան Վարդյանի ընկած տրամադրությունը:
Վարդյանը ե Հովոն գրքի վրա կուացած ան-
տարբեր շարունակում եյին սկսած հողվածի
ընթերցումը:

Սարգիսն անցնելով նրանց կողքով, Վարդ-
յանի մեջքին խփեց:

— Կեցցես դու, կեցցես, ընկեր ինտելե-
գենտ, արդեն բայլչեիկյան թեքում ես ստա-
նում...

Վարդյանն արդեն սկսել ե չատեղ Սար-
գսին: Յերբ Վարդյանը պրպտումներ ե կա-
տարում իր սրտի բոլոր անկյուններում, չի
դտնում մի խորշ, ուր ատելություն լինի Սար-
գսի նկատմամբ: Իսկ որեր ստաջ ճիշտ հակա-
ռակն եր:

— Չե, ի հարկե, Սարգիսն իր անտակտու-
թյան մեջ ել չարություն ու թշնամություն
չունի, — համոզում եր իրեն Վարդյանը: Նա
յել այդպիսի բնավորություն ե:

— Բոլ ա, բոլ Վահան ջան, — հորանջեց
Հովոն — եսոր բոլ կարգացինք — ու գիրքը ծա-
լեց:

Պարզված առաջատար Վահան Վարդյանի մաքի նավը քշում է դեպի հեռու, բայց ծանոթ ափեր: Յեվ ահա Վարդյանը հիշում է Ակորին-Քարամյանի ձեռագրի հերոսին: Ու մի գարնանային յերեկո յե հիշում Վարդյանը:

Ի՞նչ էր սովորել Ակորը ցարի բանակում: Ինչպե՞ս ուրեմն յերանուխթուն չհամարեր նա Հովոնների ու յերգոյ բանակ գնացող պղնձահանքերի նորակոչիկների բախտը:

Վահան Վարդյանը այդ որվա ամենից յերկար որագիրը վերջացրեց այսպես.

«Լսվեց ավազի ձայնը «շարքի»...»

Շարքը պատրաստ է: Գնում ենք ընթրելու: Ընթրիքի ժամանակ յես ատելու թյամք եմ նայում Ասատուրին: Նա կարծես դիտմամբ նըստել է ուղիղ դիմացս: Այո, յես նրան լավ տղա եյի համարում, բայց այժմ չեմ սիրում նրան, ու նկարիչ Վահան Վարդյանի արհամարանքն է խոսում մեջս:

Ասատուրը հետախուզյի նման հետևում է ինձ»...»

Նա յերբ նկարիչ Վահան Վարդյան էր, տիեզերքի բոլոր մարմինները պտտվում էյին նրա ՅԵՍ-ի շուրջը: Կարծես աստիճանաբար այդպես չի լինում: Կարծես մի բան փոխվում է: Թե ի՞նչ է փոխվում, ինչո՞ւ, և, ի՞նչպես, այդ ինքն էլ չգիտի: Վարդյանը չի նկատում այդ փոփոխությունը, ճիշտ այնպես, ինչպես շնկատեց, թե յերբ իր գեմքի աղվամազն իսկական առնական տղամարդու մազերի յեր

փոխվել, յերբ առաջին անգամ վարսավիրի դեմեց: Փոփոխությունը չես դիտում, բայց նա կա, նա կատարվում է: Յեվ հենց հիմա փոփոխություն է կատարվում Վարդյանի մեջ, նրա հոգու մեջ:

Վարդյանը հավատացած էր, վոր այդ փոփոխությունը կա:

Վահան Վարդյանը վորոշել էր վոչ մի առիթ չտալ ավագին, կամ պետին՝ իր վրա վաս աչքոյ նայելու: Վարդյանը վորոշել էր այդ և զարմացած հարցնում էր:

— Արդյոք սա հենց փոփոխության մոմենտներից մեկը չի՞:

Նկարիչ Վահան Վարդյանը չի կարող ճիշդեր դործ դնել հաճոյանայու մարդկանց, վորոնք հարգել չգիտեն մարդու մաքի թռիչքներն ու սրտի զգացումները, վորոնք մի աչքոյ են նայում արվեստի բարձր գեղեցկություններով ապրող և սովորական մարդկանց վրա, իր, Վահան Վարդյանի և ասենք Հովոյի ու Ասատուրի վրա:

Յեվ Վահան Վարդյանը վորոշել էր առիթ չստեղծել իր վրա վաս նայելու ու զարմացած հարցնում էր. արդյոք սա հենց հաճոյանայու վորոշում չի՞: Բայց Վահան Վարդյանը հիշում էր և հիշում է Քարամյանի խոսքերն այն մասին, թե պետերի հրամանները վոչ թե նրանց անձնական, ինչպես ասում են, սուբյեկտիվ տրամադրություններից են բղխում, այլ հեղափոխության շահերից... ու դրանով Վարդ-

յանը մխիթարում է իրեն, վոր իր վա-
րոշումը հաճոյանալու վորոշում չի յե-
ղեւ, վոր հրամանները կատարելով նա
հեղափոխութեանն է ծառայում... Յեւ,
բացի դրանից, արդէ՞ք ինքը յեղակի մի
բացառութեանն է: Չե՞ վոր Քարամյանը
նույնպէս արվեստի աշխատավոր գառնալու
ճանապարհն է բռնել, իսկ նա, մյուսների
նման հրամաններ է լսում, կրկնում է լսած
հրամաններն ու կատարում:

Յեւ ինչո՞ւ Վարդյանն էլ չի կարող այդ-
պէս լինել:

— Թող յես ել այդպէս լինեմ, — մտածում
էր Վարդյանը — թող յերեք յեռանկյունի,
կամ նույնքան քառակուսի նշաններ ունեցող-
ները, անկախ նրանից, թե նրանք գիտեն ո՞ր
քեր են յեղել Միքել Անջելոն, Ալֆարդոյսիին
ու Սարյանը, թե չեն, հրամայեն ինձ: Յես
միամյակ եմ, մի տարի յեմ ծառայելու րա-
նակում... Մի տարի յետո, վոր զորացրվեմ
և քաղաքացիական կյանքում բախտ ունենամ
հանդիպելու նրանց, վորոնք այսօր հրամայում
են ինձ, այլևս հեղափոխութեանը չի ստիպի
նրանց ինձ հրամայելու...

— Չե՛, չե՛, յես պարտավոր եմ կատարելու
նրանց բոլոր հրամանները, — խոսում է ինքն
իր հետ Վարդյանը և հանկարծ նկատում է,
վոր դա փոփոխութեանն է, ինչպէս հանկարծ
ես զգում, վոր յերեկվա աղվամազ ունեցող
դեմքը այսօր մազակալի է:

Հրաճգութեանից հետո Վարդյանը դորա-
նոցի լուսամտուից դուրս եր նայում հորիզո-
նի վերջին ծայրին, ուր յերկիրը միանում էր
յերկրի հետ, ուր յերկիրը ծածկող կապույտ
վրանի փեշերը քալում էին գետնին: Վարդ-
յանը դուրս եր նայում յերազուն հայաց-
քով և մտածում էր, թե ինչ գաղափարներ
դնի Քարամյանի նկարի մեջ. ի՞նչ արտա-
հայտութեաններ տա նրա դեմքին: Յերբ
գործում է ստեղծագործող միտքը, այլևի
վատ բան չկա, քան նրա ընթացքը խանգարելը:
Այդպիսի դեպքում Վարդյանը մոլեգնում է,
կատաղում: Կատաղում է, բառի իսկական
իմաստով:

Վարդյանը կապույտ վրանի՝ յերկրին հա-
սած փեշերին նայելով, աշխատում էր պատ-
կերացնել Քարամյանի գլխագծերը, յերբ հան-
կարծ լսեց իր անունը:

— Վարդյան:

Վարդյանը թեքվեց:

Ավագն եր:

— Լսում եմ, ընկեր ավագ:

— Ասատուրի հետ գնացեք լեռանկյունը կա-
հալորելու, այսօր շեֆերի հետ հանդիսավոր
նիստ ե, մեխանիկական գործարանից մեզ մտտ
են գալու:

— Թող ուրիշն անի, — պատասխանեց Վարդ-
յանն անփույթ և զայրույթ զգաց, վոր այն-
քան գեղեցիկ հորիզոնին նայելն ու Քարամ-
յանի նկարն ստեղծագործելու իր մտքերն
ընդհատվեցին.

— Յես գործ ունեմ, ընկեր Այագ:

— Ի՞նչ գործ:

— Նկարում եմ:

— Հետո կնկարես, հիմա գնա:

— Յես, ընկեր այագ... Յես... Ասատուրի հետ չեմ գնա—

Այագը բարեկությունից կարմրեց: Նա անմիջապես զգաստ կանգնեց ու հրամայեց Վարդյանին:

— Ձդա՛ստ:

Վարդյանը փայտացալ տեղում:

— Յե՛տ, դարձ, մա՛րշ, առաջ:

— Յե՛տ, դա՛րձ, մարշ:

— Կա՛նգ, ա՛ռ:

— Վերջին անգամը լինի, ընկեր բանակային. սրանից հետո յեղ ձեզ նորակոչիկ չենք հաշվելու, վոր միայն բացատրելով փորձենք դաստիարակել... տույժեր կան, նարյադ կա. ինչ ա նշանակում՝ Ասատուրի հետ չեմ գնա, սա ի՞նչ արամադրություն ա.

— Վորովհետև, ընկեր այագ... Վորովհետև տե՛վ...

— Վոչ մի «ընկեր այագ», — կտրեց փաղը:

Վահան Վարդյանը Ասատուրի հետ գնաց բենանկյունը կահավորելու: Բայց հետո մի ժամ հետո, յերբ նա մտածում էր դեպքի մասին, փնթփնթում էր իր վրա, «Թո՛ւ... չե վոր յես վորոշել եյի առիթ չտալ, վոր ինձ վատ նախն: Թո՛ւ, սատանան տանի...»

Յե՛վ Վարդյանը կրկին անդրադարձալ այն մտքին, վոր հիրավի փոփոխություն է կատարվում իր մեջ: Ել չսպասելով որվա վերջանալուն, Վահան Վարդյանը հենց լենանկյունում բռնկնտար բացեց ու մանրիկ տառեր նկարելով դրեց այդ որվա իր ապրումները, դրածն առնելով կարմիր գծերի ու ծաղկանկարների ու շրջանակի մեջ:

«Իսկապես վոր փոփոխություն է կատարվում մեջս: Յես վախենում եմ այդ փոփոխությունից: Վախենում եմ վոր կարող եմ հասարակ մահկանացու դառնալ, կորցնել ստեղծագործելու ձիրքս: Այդ դեպքում հնից կմնան միայն նկարիչ Վահան Վարդյանի խարտյաչ մազերի փնջերը (յերբ բանակից ազատվեմ, առաջին գործս ելի յերկար մազեր Թողնելը կըլինի) և, ուրիշ վոչինչ:

Այո, յես ել եմ փոխվում, յես ել եմ փոխվում, ինչպես փոխվում է ամեն ինչ կյանքում: Դիակեկտիկայի որենքն է դա»:

Իսկ յերեկոյան չեֆերի հետ կազմակերպված միացյալ ժողովում Վահան Վարդյանի տրամադրությունը վատ չեր:

«Յերկրի պես կյանքով լեցուն իմ Լյուբա, դարնան արեի պես սիրով արբած, իմ Լյուբա. յուանի պես գողարիկ ու յուանի պես սիրելի Լյուբա, յես քեզ մոռացե՞լ եմ:

Իսկապե՞ս, դու այդպե՞ս ես հավատացած: Ձեմ կարծում: Դու սատանայի պես խարում

ես, դու ծիծաղելով՝ ես գրել բացիկդ, վոր հու-
ղես ինձ, վոր ինձ հուղես ու ծիծաղես: Ու ծի-
ծաղես սատանայի խորամանկությամբ: Դու
չար ու սիրելի Լյուբա:

Բայց գիտեմ, վոր դու իրավունք ունես այդ-
պես վարվելու: Չորրորդ բացիկդ է և յես նոր
եմ պատասխանում քեզ: Ուշ եմ պատասխա-
նում քեզ, իմ Լյուբա, բայց ՆՈՒՇ-ով եմ պա-
տասխանում:

Հինգ որ առաջ, յերբ դու ինձ մոտ յեկար,
յերբ Սարգիսը կանչեց ինձ, թե՛

—Վարդյան, մի ինտելիգենտ, թուխ ու սի-
րուն աղջիկ քեզ ա կանչում— սիրտս տազնա-
պով արտփեց: Յերբ դու յետ գնացիր, Հրայր
Քարամյանը մոտեցավ ինձ ու իրեն հատուկ
ծպիտով ասաց.

—Սիրուն ու լավիկ ընկերուհի ունես, Վա-
հան...

Այդ բոպեյին յես ինձ զգացի յոթերորդ
յերկնքում: Բայց այդ բոպեյին ել զգացի,
վոր անշնորք եմ յեղել: Ուրախությունից մո-
ռացա քեզ նրա հետ պաշտոնապես ծանոթա-
ցնել: Կարծեմ, հենց այնպես դուք սկսեցիք
իրար հետ խոսել չե՞: Իմ սիրելի Լյուբա,
այդ բոպեյին եր նաև, վոր յես ավելի հա-
վատով լցվեցի դեպի մեր վաղվա շողշողուն
յերջանկությունը: Ո՛ր, քաղցր վաղ: Քաղցր,
վորովհետև վաղվա որերին քեզ հետ պիտի
լինեմ յես: Մենք միասին պետք է մի՞նեցնենք
որերը: Աչքերս խփում եմ ու սեղանի վրա տես-

նում եմ մեր գանգրահեր փոքրիկին: Վեր-
ցնում եմ վրձինը նկարելու նրա գանգուրնե-
րը, վորոնք, ի դեպ, չգիտեմ ինչ գույնի կլի-
նեն. Ձե վոր դու թուխ ես, իսկ յես՝ շեկ:
Գուցե այդ յերկու գույների խառնո՞ւրդը...
Բայց ո՛ւր հասավ միտքս: Գիտեմ, վոր յեթե
քեզ մոտ ասեյի այդ բոլորը՝ ծիծաղելով ու-
սիս կիսիեյիր ու կպատասխանեյիր.

— Ուրիշ նյութ չունե՞ս խոսելու, անա-
մո՛թ...

Յես կարմիր բանակում լավ կաշխատեմ:
Կարմիր բանակը ինձ համար ստեղծագործա-
կան վոզեվորության աղունք կլինի: Քայլում
է ահա դիվիզիայի հրամանատարը: Քայլում
է հպարտ, բայց անշուք: Նկարելու հիանալի
հասակ ու դեմք, վորը ծով համեստություն
է արտահայտում: Քայլում է ահա քաղբաժնի
պետը: Նրա դեմքը խորթ ու բորթ է, խոր-
շոմներ ու կնճիռներ ունի, նրա դեմքը նրա
լեռնաշխարհի քանդակն է: Յես արդեն սկսել
եմ նկարել նրան: Իսկական հերոս մարդ է,
իմ քնքուշ Լյուբրինկա, գրողի համար ել հե-
տաքրքրական ու կենդանի նյութ է: Մանկու-
թյունը լեռնային մի դյուղում անցկացնելով,
հետո նա գնացել է Բագու: Այդտեղ պաղ-
հետո նա գնացել է բայլչեվիկներին հետ,
Լյուբա ջան, հետո մասնակցել է քաղաքացիա-
կան կռիվներին, ու, հիմա, դիվիզիայի քաղ-
բաժնի պետն է: Նրա կուստոմսում, պաշտե-
լի Լյուբրինկա, գրված է «1906 թիվ»: Տես-

նո՞ւմ ես, սիրելիս, ինչ գերոյ ե, ինչ հերոս: Յեւ նրա նկարի վրա շատ կաշխատեմ և կանմահացնեմ նրան, չեմ թողնի, վոր տարիներէ ու հիշողութ՛յուններէ մշուշում կորի նա, այնպես պետք ե նկարեմ, վոր նա մնա կյանքում վորպէս պատմական Փիզուրա:

Յեւ այս բոլորը, Լյուբա ջան, ամենից շատ նրա համար, վոր փայլես դու քո Վահանի փառքով, նկարիչ Վահան Վարդյանի փառքով հպարտ:

Այսոր հրաձգութ՛յուն եր: Ավելի ուրախ բան չկա զինվորական մարդու համար, քան կրակելը: Նույնիսկ յես, վորի իրեան վոչ թե հրացանն ե, այլ վրձինը, նույնիսկ յես, խանդավառվել եյի: Բացիկդ նոր եյի ստացել ու նրա մասին եյի մտածում: Նշանառութ՛յան ժամանակ նշանակետից դու ժպտացիր ինձ ու ցնցեցիր մազերիդ դեզը. ձեռքերս թուլացան նշանառութ՛յան ժամանակ և գնդակներս վրիպեցին...

— Ի՞նչ ե պատահել քեզ, Վարդյան, խոմ սիրահարված չե՞ս... ձեռք առավ պետը:

Հինգ գնդակով յես միայն 15 աչոզ եյի խըփել:

Յերկրի պես կյանքով լեցուն իմ Լյուբա, դարնան արևի պես սիրով արբած իմ Լյուբա. լուսնի նման չքնաղ Լյուբա, տեսնո՞ւմ ես, վոր յես քեզ չեմ մոռացել, վոր յես քեզ չեմ կարող մոռանալ»...

Վահան Վարդյանը, նամակը վերջացնելով,

ազատ շունչ քաշեց, ապա ժպտաց Վորոչիլովի նկարին, ժպտաց այնպիսի ինքնագոհ ժպտով, վորը ցույց եր տալիս նրա հոգու անսահման խնդութ՛յունը: Այդպէս խինդով եր լցվում նա, յերբ վերջացնում եր վորեւե նկար և վոչ մի կասկած չեր ունենում այդ նկարի հաջողութ՛յան մասին:

Նամակը ծալելով, Վահան Վարդյանը ինչ վոր հանդատութ՛յուն զգաց: Իր սիրտն այնքան եր դատարկել նամակում, վոր վոչինչ չեր մնացել այնտեղ, որագորի համար:

Այդ յերեկո Վահան Վարդյանը որագրում վոչ մի տող չգրեց:

Երեկտրական լույսը վողողել եր լեճանկյունը: Ստալինի, Վորոչիլովի, Մմոլինի դիվիզիայի և քաղբաժնի պետի նկարները փայլում եյին դեղին լույսի աակ: Վարդյանը նայում եր այդ նկարներին դեղազետի հայացքով, վորոչիլու թե նրանց մեջ արվեստի տեսակետից ինչ թերութ՛յուններ կան, ու մտածում եր, թե ավելի չա՞յլ չի՞ գնահատվի դիվիզիայի Քաղբաժնի պետի՝ իր՝ Վարդյանի նկարը:

Լենինյան անկյունը լցվում եր բանակայիններով: Կոմյերիտական բջջի բյուրոյի նիստ կար: Բյուրոն նիստ եր հրավիրել ակտիվի հետ միասին: Կանչել եյին նաև Վարդյանին: Բայց թե ինչու եյին կանչել, նա այդ չգիտեր: Վարդյանը մտածում եր, թե քննադատութ՛յունն ինչպե՞ս կգնահատի Քաղբաժնի

պետի՝ իր նկարը: Մտածում եր այդ մասին և հանկարծ անդրադառնում այն հարցին, թե ինչո՞ւ յեն իրեն կանչել բյուրոյի նիստին. չե՞ վոր դա բյուրոյի ու ակտիվի նիստ ե: Իրե՞ն ել են ակտիվ համարում:

Քարամյանը, ավազն ու Ասատուրը նստել եյին իրար կողքի: Նրանք հաճախ մոտենում եյին իրար ու փսփսում: Յերբ Ասատուրն ել եր խառնվում այդ փսփսուկին Վարդյանը լավ բան չեր գուշակում դրանից: Նա այնքան հավատաց իր նախազգացումին, վոր արդեն վախենում եր դրանից:

Նիստը հայտարարվեց բարցված: Յերբ Վարդյանը տեսավ վոր նիստին նախազանգում ե Քարամյանը, նրա բորբոքված մտքերն հանդրստացան:

Հրայր Քարամյանը հայտարարեց որակարգի հարցերը:

Առաջին հարցը յերկու կոմյերիտականների խնդիրն ե. այդ մասին զեկուցելու համար խոսքը տրվում ե բյուրոյի անդամ ընկեր Ասատուրին:

Յերբ Ասատուրը Վարդյանի կողմը նայելով վտառքի կանգնեց, Վարդյանը յենթադրեց, թե ինչ հարց կարող ե լինել այդ յերկու կոմյերիտականներից մեկի հարցը: Մինչ այդ ժողովը, նա Ասատուրից ակնարկներ եր լսել, վոր իր հարցը ժողովում կքննեն: Բայց թե՛ ինչպես Ասատուրը պետք ե ապացուցի Վարդյանի «սպորտունիստությունը», ինչպես այդ ասում,

եր Ասատուրը, Վարդյանն այդ յենթադրել չեր կարողացել:

— Ընկերներ, — սկսեց Ասատուրն իր հեղինակության վրա վստահ դասախոսի պես, — առաջին հարցն ընկեր Վահան Վարդյանի հարցն ա: Նա մի քանի անդամ տրամադրություններ ա ունեցել, վոր միանգամայն անթույլատրելի ա, հարյուր տոկոսով սպորտունիստություն ա, չեղվում ա բայլչեկիյան դժից: Այդ տեսակետով ել մենք պետք ե մոտենանք հարցին: —

Վարդյանն ապուշ կտրած հետեւում եր նրա ամեն մի բառին: Բայց Ասատուրը հետըհետե ավելի վողեւորվելով իր խոսքերով, — շարունակում եր:

— Խայտառակ փաստ ա, ընկերներ, պետք ա բայլչեկիյան զգոնությամբ խփենք:

— Փաստեր, փաստեր ավեք, — ել համբերել չկարողանալով, կանչեց Վարդյանը տեղից:

— Առաջին փաստն են ա, ընկերներ, — շարունակեց Ասատուրն առանց ուշադրություն դարձնելու Վարդյանի վրա, — առաջին փաստն են ա, վոր անցյալ որը յես նամակ եյի ստացել, վոր մեր կոլխոզի պահեստը գեշերը դասակարգային թշնամին թալանել ա: Ճիշտ ա, վոր բայլչեկիյան հողին չպետք ա տիրի, բայց մի քիչ ել յես թեքման մեջ ընկա, վոր տիրեցի. պետք ա բայլչեկիորեն խոստովանեմ: Քեֆս մի քիչ կտրվել եր ու

նստել էյի զորանոցը: Մեկ էլ ընկեր Վարդեյանը յեկավ ու ասում ա, թե՛ դե՞ռ էլ ես բանակից ձանձրացել, Ասատուր ջան... Առաջինը սա նշանակում ա, վոր ինքը ձանձրացել ա, յերկրորդը, նշանակում ա, վոր ուզում ա ուրիշների մեջ էլ իր ոպորտունիստություններն ու տրամադրությունը տարածի, վորը միանգամայն դատապարտելի ա: Յերկրորդ փաստն են ա, վոր անցյալ որը նա Հովոյի հետ պարապում եր ու յես էլ լսում էյի: Հովոյին հարցնում ա թե՛ «Հովո, վոր կռիվ լինի մարդ կսպանե՞ս, բա մեղքը չե՞ն»: Սա յեւ սխալ տրամադրություն ա: Բուրժուաների սուտ տեսակետ ա, վոր մարդ սպանելը մեղք ա: Իրենք եղպես են ասում, բայց հարյուր հազար հոգու մի դրբի յեն սպանում, հարյուր հազար բանվոր ու գյուղացիներին: Ուրեմն սխալ ու անտեղի կածիք ա, թե բուրժուաներին սպանելը մեղք ա: Մենք, ընկերներ ընդհակառակը յեկել ենք կարմիր բանակ, վոր բուրժուաների՛ն սպանելու տեխնիկան տիրապետենք, վոնց վոր ընկեր Ստալինն ա ասել... Յես առաջարկում եմ միանգամայն խիստ վերաբերվել:

Վարդեյանը շջմել եր: Վոր այդ խոսքերն իսկապես ինքն ասել եր, դա ճիշտ եր: Բայց դրանք ոպորտունիստական էյին թե չե, նա չեր զգացել, նա չեր էլ յենթադրում, թե իր այդ խոսքերից կարելի յե ոպորտունիզմ դուրս բերել:

— Ուրիշ ո՞վ ե ուզում խոսել, — դիմեց Հրայրը ժողովին:

— Յես, ընկեր նախագահ:

— Ձա՛յն տուր ինձ:

— Մի ձայն:

Ձայնը տրվեց ավագին: Նա ասաց, վոր Վարդեյանը մարտական դժով էլ արդեն նկատողություն ու զգուշացումներ ունի, վոր յեթե Վարդեյանն իրեն այդպես պահի, հրամանատարությունն ավելի խիստ կվերաբերվի, վորովհետև առաջին որերը վաղուց են անցել և 1910 թվի ծնվածները վոչ թե էլի նորակոչիկներ են, այլ կարմիր բանակայիններ: Ավագը հիշեցրեց, վոր նա գրեթե միշտ այս կամ այն կերպ առարկում է իրեն, ապա նոր հրամանը կատարում: Դառնալով Վարդեյանին ավագն ասաց.

— Ընկեր Վարդեյան, պետք ա քո նկատմամբ ավելի խիստ լինեն թե բջիջը և թե հրամանատարները, վորովհետև դու գիտակից ընկեր ես, բարձր կրթություն ունես, վոր դու եղպես բաներ ես անում, անդրադետներն ի՞նչ կանեն:

— Խոսեց Սարգիսը:

— Ընկեր Վահան, — սկսեց նա, ուղղակի Վարդեյանին դիմելով, — պետք ա քո աչքերի մեջ ու քո յերեսին ասենք, շատ ես ինքլիկենատի նման մարդու մտիկ անում, հենց գիտաս թե դու յես, վոր կաս, ուրիշները հե՛ջ...

Սարգիսը մի քանի անգամ կրկնեց, վոր

Վարդյանը պարապմունքում ծիծաղել է Հոփոյի վրա, վոր իրեն՝ Սարգսին միշտ ասել է. «Յես քեզ մարդ չեմ հաշվում, չեմ պատասխանի քեզ»:

— Բայց պետք ա ընդդժել,— շարունակեց նա, այս անգամ դիմելով Ժողովին—վոր ընկերը վորոշ չափով ուղղվում ա, ինդլիկենտական թեքումից դուրս ա դալի, պետք ա խոստովանել:

— Ներողութիուն,— նետեց տեղից Ասատուրը:

— Վոչ մի ներողութիուն,— պատասխանեց Սարգսին ու անվրդով շարունակեց,— պետք ա ընդդժել, վոր ընկերը ուղղվում ա և ուղղում ա իր ինդլիկենտական հոգին:

Հրայրը բոլորից հետո խոսեց: Վարդյանը քիչ բան կարողացավ հիշել նրա ասածներից: Նոր բան չապաց Հրայր Քարամյանը: Այն, ինչ վոր նա ասել էր բազմիցս և հատկապես Վարդյանի համար, այս անգամ կրկնեց: Բայց այդ բոլորից մի բան մնացել է Վարդյանի հիշողութիան մեջ:

— Իզուր էք կարծում, ընկեր Վահան,— ասաց Քարամյանը,— վոր մենք՝ յես ու դու, ավելի գրագետ լինելով, սովորելու բան չունենք մյուսներից: Մենք կարող են սովորել վոչ միայն Ասատուրից, Սարգսից, այլև՝ յեթե կուզես, Հովոյից ել, Հովոյից, վորի հետ պարապում եք դուք: Մի մտածեք, թե դեղարվեստական տեխնիկում եք ավարտել,

յակ նրանք լրիվ գրագետներ ել չեն: Բայց այն, ինչը վոր պահանջում են հեղափոխության, դասակարգի ու յերկրի շահերը, նրանք ավելի շատ ունեն, քան մենք. ահա թե ինչ պետք է սովորել նրանցից:

Չայնը արվեց Վահան Վարդյանին: Նա ասաց այն, ինչ մտածել էր ու մի քանի անգամ մտքում կրկնել:

— Ընկերներ,— սկսեց նա կարծես վախժարելով,— յես անկեղծ եմ ասում, և հուսով եմ, վոր իմ անկեղծությանը կհավատաք: Ազնիվ խոսք եմ ասում, վոր յես չեմ իմացել, թե իմ այդ խոսքերը, վոր ընկեր Ասատուրն ասաց, ոպորտունիստական են յեղել, ազնիվ խոսք եմ ասում, չեմ իմացել, ինչո՞ւ չեք հավատում:

Ամբողջ Ժողովը հռհռաց: Վարդյանն ավելի հիմար դեռության մեջ էր զգում իրեն, քան Հովոն այն որը, յերբ պետի հարցին պատասխանեց, թե ռազմահեղափոխական խորհրդի նախագահը կլտյանն է ու բոլորը ծիծաղեցին նրա վրա:

— Չի՛ իմացել... տղեն չի՛ իմացել, վոր ոպորտունիստական բաներ ա ասել...— փնրթփրնթում էր Ասատուրը տեղից:

Ժողովն անցավ առաջարկութիւններին: Ասատուրն առաջարկեց՝ Վարդյանին հեռացնել կոմյերիտիստական շաքերից:

Վարդյանի մարմինը վայրկենապես փառազավեց: Հեռացնե՞ն, այդ յերկու հասարակ

խոսքերի համար: Ինչ խիստ մարդիկ են: Չբողավի՞, չճշա՞, վոր նրանք քյալազոյոզներ են, իսկական քյալազոյոզներ, իսկ ինքը հարցը կըհասցնի Իիվիդիայի Կուսհանձնաժողով, Բանակի Կուսհանձնաժողով կհասցնի, այնտեղ իրեն կհասկանան:

Բայց ավելի լավ չի՞ լինի արդյոք, վոր լսի, վոր կըքեր չբորբոքի իր դեմ և այսպես հեշտ պրծնի:

— Ասատուրն առաջարկում է հեռացնել, տեղին է, շարունակեց Քարամյանը:

Վարդյանը դարմանքից սառեց: Չէ վոր այդ որն առավոտյան, յերբ ինքը նկարում էր Քարամյանին, նա շատ սիրալիր էր իր հետ, ինչպե՞ս է, մոռացել և հիմա չի պաշտպանում իրեն:

— Տեղին է Ասատուրի առաջարկը, բայց յես կարծում եմ, ի նկատի ունենալով, վոր Վարդյանը նոր կոմյերիտական է, վոր նա կարող է բջիջի և ընկերների ազդեցությամբ դաստիարակվել, վոր մինչև բանակ գալը նա քաղքենիական շրջապատ է ունեցել, չի չփոխել քանվոր յերիտասարդության հետ և դեռ անհուսալի չի, յես առաջարկում եմ անել խիստ նկատողություն վերջին նախազգուշացումով. . Իրանով մենք վերջին անգամ կփորձենք դաստիարակել նրան:

Այդպես ել վորոչիեց: Խիստ նկատողություն, վերջին նախազգուշացումով:

Ժողովից հետո Քարամյանը Վարդյանի

հետ դուրս յեկավ բակում խոսելու, կարծես նախապես սլայմանավորված լինելով դրա համար: Վարդյանին նա հուսադրում էր չհուսալքվել, լծվել ռազմական-քաղաքական աշխատանքներին, լավ կատարել կոմյերիտական պարտականությունները:

— Յեվ այդպիսով՝ դու հեղինակություն կունենաս թե՛ ընկերներիդ և թե՛ պետերիդ մոտ. . .

Վարդյանն ուզում էր վիճել Քարամյանի հետ միայն մի հարցում, վոր՝ ինքը քաղքենի չէ, վոր այդ շրջապատն իր վրա վոչ մի ազդեցություն չի գործել: Բայց վորովհետև Քարամյանը դա ասել էր իրեն պաշտպանելու համար, Վարդյանը հարկ չհամարեց դրա մասին վիճել:

Ավելի լավ է՝ լռել:

Ժողովի յերկրորդ որն ել դեռ Վարդյանը տխուր էր: Յերեկոյան, յերբ պետք է գնար միջազգային ժամի պարապմունքին՝ հանկարծ հորիզոնի ծայրին նկատեց հրդեհվող մի անհունություն: Ծանոթ մի զգացում, սովորական մի տխրություն ամբողջովին համակեց Վահան Վարդյանին: Իր բլոկնոտում նա գրեց:

«Յերեկոյանում էր: Սիրելի վերջալույսն էր յերևում լեռնալատարների կիսաված ամպերի ծիրանագույն քուլաներով, արյան անհուն ծովն էր փռվել, արյան անհուն ծովը՝ տխուր ու գրավիչ» . . .

Այդ յերեկո Ասատուրն ելփորձեց կա-

տակել Վարդյանի հետ, բայց յերբ տեսավ, վոր Վարդյանը վոչ մի կերպ չի ժպտա, կատակելն ավելորդ համարեց:

Արդեն մի քանի օր եր անցել այն օրից, վոր Վահան Վարդյանը բջիջի բյուրոյի նիստում խիստ նկատողութուն եր ստացել: Այդ օրերի մասին Լյուբային գրած նամակում նա ասում եր, վոր ինքը հոգու խկաական տրագեդիա յե ապրել:

— Յես, վոր դպրոցում այնքան ըմբոստեյի մտքերով, — մտածում եր Վարդյանը, — վոր կարդացել էյի մեծ մտածողների գործերը, ու հետևաբար՝ ավելի ինքնավստահ պետք ե լինելի, բյուրոյի նիստում ծաղրվեցի Ասատուրի ու մյուսների կողմից: Ինչո՞ւ ախար ե՞, ինչո՞ւ պետք ե այդպես լիներ»...

Բյուրոյի նիստից հետո Վարդյանը գլխացավ ունեցավ: Յերկրորդ օրն արդեն չուներ, բայց չգիտեր ինչու համար, տառապում եր: Իսկ մի քանի օր հետո ահա յեղավ մի օր, վոր Եվերեստի գագաթն եր հասնում նրա տրամադրութունը: Իրա համար Վարդյանը յերեք պատճառ գիտեր և միշտ աշխատում եր չմոռանալ, վոր իր տրամադրության բարձրանալն այդ պատճառների հետևանքն ե:

Առաջին պատճառն այն եր, վոր նա ցույց եր տվել Քարամյանին նրա նկարի եսքիդն ու եսքիդը նվիրել նրան, իսկ Քարամյանը կարդացել եր նրա համար իր մի արձակ բանաս-

տեղծութունը: Յերկրորդը՝ վոր վերջացրել եր Քաղբաժնի պետի նկարը: Քաղբաժնի պետը, Վարդյանի ուսին խփելով, հաստ բխեքի տակից ասել եր.

— Ա՛, — բալամ, եդ հո հենց յես եմ, վոր կամ...

Բայց Վահան Վարդյանը առանձին մի կարեւորութուն եր տալիս յերրորդ պատճառին: Իրանից մի շաբաթ առաջ այդպիսի մի բանի համար նա թեթև մի ժպիտի համար ել ժլատ կլիներ: Բայց հիմա այդ պատճառը նույնիսկ ցնծությամբ ե լցրել Վահան Վարդյանի վողջ եյութունը: Սկզբում Վարդյանը չգիտեր, վոր իր այդ օրվա ուրախության պատճառներից մեկն ել, այն ել հիմնական պատճառն այդ ե: Չգաց ու հասկացավ հետո:

Բյուրոյի նիստից հետո Վարդյանը Քարամյանից քաշվում եր, իսկ Քարամյանն անընդհատ բացատրություններ եր տալիս նրան ինչպես ուսուցիչն իր տհաս աշակերտին:

Յեւ Վարդյանը մտածում եր «Իժվա՞ր և արդյոք այդ բոլոր պահանջները կատարել: Ինչո՞ւ յես չպետք ե կարողանամ կատարել դրանք: Վորեւ սկզբունքի համա՞ր եմ գլանում. վոչ այդպիսի սկզբունք ու պատճառ չկա, չի լինի, յեթե յես ուզենամ: Հարկավոր ե միայն վորոշ չափով թողնել նկարիչ Վահան Վարդյանի խառնվածքի առանձնահատկությունները, կամ կարող եմ մի տարով արձակուրդ տալ այդ առանձնահատկություններին»...

Յերեկոյան ժամի 11-ին Վարդեանը քնեց։ Անկողնում արթնուն մնաց միայն մեկ ու կես ժամ։

— Արթնանա՛ւ, — լսվեց առավոտյան և Վարդեանը յերկրորդ, թե յերրորդն եր, վոր արդեն հագել եր շորերն ու պատրաստովել։ Ամեն որվա պես վոչ վերջինն եր նա, վոչ ել նախավերջինը։

Շարքի՛, — լսվեց նախաճաշից հետո։ Յեվ Վարդեանն ել մյուսների նման վազելով հասավ շարքի տեղը, դոտին ամուր կապած, արտաքին տեսքը՝ իսկական բանակային։ Քոյլելիս ել նա ուշադիր եր իր բոլոր շարժումների նկատմամբ։ Հրաձգութեան ժամանակ ել հինգ զնդակով անցյալ անգամվա 15 աչոգի փոխարեն 21 աչոգ խփեց, յերրորդ տեղը բռնելով կամանդայի բանակայինների մեջ։ Առաջինը Քարամյանն եր։

Պարապմունքից հետո՝ ավազը մոտեցավ Վարդեանին ու մտերմութեամբ մանր աչքերը պսպղացնելով, ասաց.

— Ընկեր Վարդեան, արդեն իսկական կարմիր բանակային եք դառնում...

Նա ասաց՝ դա այնքա՛ն խորը նշանակութուն տալով իր ասածին, այնքան բազմախորհուրդ, վոր միանգամից բարձրացավ Վարդեանի տրամադրութունը։

Ահա յերրորդ պատճառը։

Ավազի ժպիտը։ Ժպտալիս նրա ամբողջ դեմքի հետ կարմրում ե թի ծայրն ել և կար-

ծես ժպիտը դեմքից ներքև ե հասում նրա քթի կարմրած ծայրով։

Այդ եր յերրորդ պատճառը, վոր Վահան Վարդեանի տրամադրութունն ինչպես նա դրեւ եր իր բլոկնոտում, հասել եր «Յվերեստի դադաթին, Շալիապինի յերդի կարկաչուն բարձրութեանը»։

Վահան Վարդեանն ամուր փակել եր լուսամուտը, վոր պաղ ուր ներս չխուժեր ու չխանդարեր նրան մտածելուց։ Յերբ կտրվում ե նրա մտքի թելը, նա զայրանում ե ինքն իր վրա։ Իսկ այդ ուր չեր ուզում զայրանալ։ Այդ ուր Վարդեանը չեր ուզում, վոր անդորրութեան փոխարեն աննորմալ կերպով խփի իր զարկերակը։

Վարդեանը հոգու կատարյալ անդորրութեան եր հասել։ Կրկեսի արենայում ջրտնքակալած արտիստը յերբ արենայից փափուկ անկողնու մեջ ե ընկնում, չի կարող այնքան ինքնազոհ լինել տանջանքից հետո դտած իր այդ հանդստի համար, վորքան Վարդեանն եր այժմ ինքնազոհ։

Նրան թվում եր, վոր մինչև այդ որն ինքն ավելի յե տանջանքի մեջ յեղել, քան կրկեսի արենայից ուշ յերեկոյան անկողին վերադարձող ըմբիշը։ Ըմբիշն ինքն ե իրեն յենթարկում ամենորոյա տանջանքի։ Յեվ դա միայն Փիղիքական տանջանքն ե։ Վարդեանն ամենևին չի դժգոհում Փիղիքական տանջանքից։

Այժմ Վահան Վարդյանը հոգու կատար-
յալ անդորրութեանն եր հասել և այդ անդոր-
րութեանը յենթադրում եր հավերժական:

Աչնավերջի քամիները սիրամերժ արու
կատունների խմբերի պես վռոնում եյին փո-
ղոցում, կամանդայի գորանոցի լուսամուտի
տակ: Վռոնում եյին կատվային զայրագին ու
հուզումի վռոնոցով:

Վարդյանը լսում եր նրանց ու խորհում:

Վարդյանը նայում եր զորանոցի բոլոր
մահճակալների վրա քնած բանակայինների
դեմքերին: Վարդյանին շատ եր հետաքրքում,
թե բացի պոչտոնական հարցերից՝ նրանցից
ո՞վ ինչի մասին ե մտածում, ո՞վ ինչ զաղտ-
նիքներ ունի իր հոգում: Բայց Վարդյանի հե-
տաքրքրութեանը հաղիվ եր գոհացում ստա-
նում: Նա զգում եր, վոր ինքը դժվարութեամբ
ե կարողանում ճանաչել նրանցից շատերին:

Ելեկտրական լամպը Վարդյանն այլ ևս
թղթով չի փաթաթում...

Հրամանով դա արգելված ե:

Ելեկտրական դեղին լույսի տակ յերևում
են բոլոր դեմքերը: Վարդյանը նայում ե բո-
լորի վրա հերթով: Կարծես առաջին անգամն
ե տեսնում նրանց:

Ահա Հրայր Քարամյանը: Ժպտալ, հայե-
լուց ընկած սպիտակ ցուլի նման, խաղում ե
նրա շրթունքների վրա: Քնած ե նա, բայց
Վարդյանին թվում ե թե նա խոսում ե իր հետ
և ժպտում, ժպտում սիրալիր ու համակրելի,

կամ, ինչպես Լյուբան ե սիրում, ասել Քարամ-
յանի մասին, СИМПАТИЧНЫЙ է:

Ահա Սարգիսը: Նա կարծես յերազի մեջն
ել ուզում ե բուժ մատը ցուցամատի ու միջա-
մատի մեջը մտցնել ու հայհոյել:

— Չաթլա՛խ ծնողա...

Այսպես եր պատասխանում նա Վարդյա-
նին որեր առաջ: Իսկ հիմա ել այդպես չի խո-
սում: Յե՛վ անգամ կառապանին հատուկ այդ
արտահայտութեանների հետ միասին, Վարդ-
յանը սիրում ե նրան: Սարգիսը պարզ ե, ինչ-
պես թափանցիկ ողբ: Ծիշտ ե, վոր նախվ ե նա:
Բայց սրանցից ո՞վ նայիվ չի, — պատասխա-
նում ե Վարդյանն իրեն:

Ահա ավազը: Ինչպես ելեկտրականութեան
լիցքը կոնանման մետաղի սուր գագաթից,
դեմքի ժպտալը ցած ե հոսում նրա թթով:

Հովոյին Վարդյանը չի տեսնում: Նրան
տեսնելու համար նա պետք ե շրջի մյուս կո-
ղի վրա: Բայց լավում են Հովոյի փսիսուկա-
յին մենախոսութեաններն ու խոսվոցը:

Դա նրա սովորութեանն ե քնի մեջ:

— Հրա-հանն իր կոճակով... Չար-գանն
իր ասեղով... խը՛ր՛ո... խը՛ր՛ո...

— Միա-ցնող քանոն... ըր՛ը՛ր՛խ... մար-
տական փակ-ո՞Ք...

— Որ՛ը՛ր՛խ... խը՛ր՛ո... ծիծիկ... սվիչ
մեխա... խը՛ր՛խ... նիզմ...

Մարդու մտքի իներցիան ե դա, հավի-
տենական շարժման որենքը մարդու ուղեղի

մեջ: Ու այսպես ամեն ոք Հովոյի ուղեղը շարունակում է աշխատել: Ուղեղի խոսելու կենտրոնը քնի թմիրի մեջ հրամայում է լեզվին ու ձայնալարերին՝ կատարել իրենց ֆունկցիան:

Ելի ծանրանում են Վահան Վարդյանի կոպերը՝ Հոգնություն, թմրեցնող նյութ դու, վոր թաղիքի նման թուլացնում ես մտքի արձակած սլացիկ նետերի թափը, յերբ նրանք քեզ են կաչում:

Ծանրանում են Վարդյանի կոպերը: Նա պառկում է մեջքի վրա ու նայում առաստաղին: Ճերմակ, հարթ մակերևույթ: Բայց վառ սպիտակությունը խաժամուժվում է, յերբ Վարդյանը խփում է իր աչքերը: Ուստամուժ գուլյների մեջ սևը հաղթում է բոլորին, ապա սև գույնը կլորանում է ու դառնում նշանակետ, սև խնձոր՝ թվանշաններով՝ չափերով: Վարդյանը պառկում է նշանաուլթյան: Սիրտը չի տրոփում: Վարդյանը նեղվածք չի գգում: Նա դանդաղությամբ ու աստիճանաբար ձգում է ձգանը: Արձակած գնդակն ուղիղ խնձորի կենտրոնին է կաչում: Աչքերը բացվում են: Ճերմակ առաստաղն է լամպի թելից նրա վրա ընկած սուպերի մի գծով:

Ելի յեն ծանրանում Վարդյանի կոպերն ու ելի նույնը: Յեվ հանկարծ, ինչպես մութը՝ առավոտյան, Վարդյանի աչքերից փախչում է քունը: Յերեկվա լույսի հստակությամբ մըտքերն են լցվում նրա ուղեղի մեջ:

Իր կյանքի այդ նոր օրերից յուրաքան-

չյուր օրվա մանրամասները, իր տեսած սիրելի նկարների նման, թարմ են Վարդյանի գլխում: Նա լսում է դեռ Հրայր Քարամյանի՝ յերաժշտության պես քաղցր խոսքերը:

— Այսպես, Վահան Չան, մենք դառնում ենք իսկական կարմիր բանակայիններ:

Նույն բանն ասում են բոլորը: Բոլորը նույնն են ասում, ուրեմն՝ այստեղ ճշմարտություն կա:

Քարամյանը «մենք» ասաց: Բայց Վարդյանը նրա ախարկը հասկացավ այնպես, վոր դա միայն իրեն՝ Վարդյանին կարող է վերաբերվել:

Քունն ելի սկսեց հաղթել Վարդյանին: Ելի նայում է նա առաստաղի սպիտակությանը, վոր չքնի, վոր հիշի հենց նոր մոռացած լավ մտքերը:

Սև խնձորը:

Կարծես քնել է Վարդյանը, բայց արթուն է: Մի հաճելի թմրություն է իջել նրա վրա:

Ահա սև խնձորի փոխարեն՝ Պիլսուզսկու՝ ծիծեռնակի ջարդված թեվերի նման բեխեր ունեցող, և, Հիտլերի պես լերկ քարե մկաններ ունեցող գորավարներ գրոհում են կարմիրների գնդի հրամանատար Վահան Վարդյանի վրա: Պիլսուզսկու բեխերի ծայրից լուսանք է ծորում, իսկ Հիտլերի դեմքից թույն է արձակվում:

Վարդյանը կրակում է և նրանք չեն ընկնում: Սվինահարում է և նրանք չեն ընկնում:

Նա քաշում է իր փայլելիող սուրբը, ճոճում նրանց դլխին: Վարդյանը տեսնում է նրանց յեակից յեկող զինվորներին, վորոնք հաշտության թաշկինակ են պարզում կարմիրների բանակին, Վարդյանին, ու, մերկացնում են սրերն իրենց զորավարների թիկունքը խրելու:

— Ուռուս'... Ուռուս'... Բղավում է Վարդյանն ու առաջին անգամ ինքն է արթնանում իր ձայնից, ապա՝ ավազը, Ասատուրը, Գարամյանն ու մյուսները:

Վարդյանը նայում է առաստաղին ու ինչ վոր մի միտք, ամիսներ առաջ լսած առվակի խոխոջի պես անուշ, ելի չի թողնում նրան քնելու:

Հա, գտավ նա, թե վորն էր ամիսներ առաջ լսած առվի խոխոջի պես անուշ միտքը: Չե վոր մի շարաթ առաջ նա այս սպիտակ առասպաղի վրա տեսնում էր թուխ խոստպներով թխաչյա մի աղջկա՝ ամպերի տակից փախչող լուսնի պես կոկետ դեմքը...

Լյուրային էր տեսնում նա: Իսկ հիմա նըշանկեան է այնտեղ յերևում:

— Ուրեմն, իսկապես վոր, յես փոխվում եմ, — չնչաց նա յուրովի, — բայց լավ է քնեմ, քնեմ, վոր շուտ արթնանամ: Չե վոր վաղը մի քանի ժամ անընդհատ շարային վարժություններ ենք անելու:

Կամանդայի զորանոցում խորը քնի մեջ էյին, յերբ շտաբի շենքի միջանցքում լավեց

տազնապի սուրոցը: Բոլոր քնած բանակայիններին վրա էլ կարծես սառը ջուր լցրին: Մի քանի վայրկյանում բոլորն արդեն հազնվում էյին:

Անուշ յերազից հանկարծ վեր թռավ Վարդյանը և տրորելով քնատ աչքերը, առաջին պահ չղգաց, վոր դա յերազի շարունակությունը չի: Նա ուզում էր կանչել այնքան քաղցր յերազում տեսած իր սիրելիին, բայց սուլիչի տազնապային ճլգլոցը սթափեցրեց նրան: Ձգալով, վոր տազնապ է հայտարարվում, Վարդյանն արագությամբ սկսեց շորերը հագնել: Յերկու բոպեյում նա արդեն հագել էր: Թեթև ու արագ հայացքով նայեց մյուսներին ու զգաց, վոր ինչ-վոր հրձվանքով լցվեց իր սիրտը:

Նա յերկրորդն էր շուտ հազնվողներին մեջ: Բայց, յերբ դեռ նոր պետք է դուրս վազեր զորանոցից, տեսավ վոր շարվարի առաջի կոճակները չկան: Կոճակները պետք է կոճկվեյին յեակից...

Շարվարը հագել էր նա հակառակ կողմից: Մինչև հանեց ու նորից հագավ, արդեն բոլոր բանակայինները դուրս էյին վազել: Դատարկ մնացած զորանոցը չփոթեց Վարդյանին: Մի քանի անգամ պտավելով տեղում, ինչպես դլխին հարված ստացած հավ, նա կրկին սթափվեց: Նայեց ժամացույցին: Սլաքները կարծես թուվում էյին ժամացույցի շրջանակի մեջ: Վարդյանը ցուցամատի հողերով տրորեց աչքերը:

Ժամի 4-30—նն եր: Արդեն հինգ բոպե եր
անցել այն վայրկյանից, յերբ տաղնապ հայ-
տարարվեց: Հինգ բոպե... Ինչքան ժամանակ,
իսկ Վարդյանին թվում եր, թե կես ժամից
ավել ե անցել: Հինգ բոպե... Յեվ այդքան
ժամանակում Վարդյանն ինչքան բան մտա-
ծեց: Իզուր չի ասված, վոր ամենաարագ աշ-
խատող մեքենան մարդու ուղեղն ե, մարդու
մտքի ընթացքն ե ամենաարագ շարժումը:

Մտնելով որպահի սենյակը, Վարդյանն
այնտեղ տեսավ պետին ու պատիվ վերցրեց.

— Լսում եմ, ընկեր պետ:

Պետը նայելով ժամացույցին, ինչվոր նը-
նչանակում արեց բլուկ-նոտում: Վարդյանը
կարմրեց մինչև կոմունարկայի ծանրությու-
նից կախված ականջները:

— Մեր պահեստի յերկրորդ սենյակում
խիստ հրդեհ ե, անմիջապես անցնել այնտեղ—
կարգադրեց պետը: Վարդյանը դուրս թռավ:

Այդ բոլորը տեսց մի քանի վայրկյան մի-
այն:

Մինչև վերևի հարկի միջանցքից Վարդ-
յանը պատից կախված կրակմարիչը վերցրեց
ու վազեց պահեստը, արդեն այնտեղ ելին բո-
լորը, վորոնց թվում նաև պետը: Մյուսները
գնացել ելին պահեստի աշխատողներին ու հը-
րամատարներին կանչելու:

— Գործել, գործել արագ, — հրամայում
եր պետը:

— Այ, այտեղ Վարդյան: Տեսնում ես բո-
ցերը վոնց են լիզում, այտե՛ղ:

Վարդյանը կրակմարիչի կափարիչը զար-
կեց դետնին և բռնելով ճիշտ այնպես, ինչպես
կրակմարիչի վրայի նկարում հրդեհաշեջն եր
բռնել, նրա անցքից ուժով դուրս նետվող հե-
ղուկի ձողն ուղղեց դեպի «լիզող բոցերը»:
Կրակմարիչի անցքից նետվող հեղուկի սպի-
տակ փրփուրը անկյունի գերաններից թափ-
վում եր ցած:

— Ես կողմ, այ, ես կողմի բոցերը դու ես
անում — և Վարդյանը կրակմարիչի անցքից
դուրս ձգվող հեղուկի ձողն ուղղում եր այն
կողմը: Մի յերկու բոպե հետո կրակմարիչից
դուրս յեկավ ամբողջ հեղուկը: Յերկրորդ
կրակմարիչը բերելով, Վարդյանը պետից հրա-
ման ստացավ, ուղղել դեպի հատակին նոր
թափված նավթի լճակը:

— Այ, սա յա, — վոտքը դետնին խփելով
ցույց տվեց պետը, — նավթի գյուլը սա յա, և
բոցերն ել բարձրանում են:

— Լավ — ասաց Վարդյանը, և անմիջա-
պես հիշեց, վոր վո՛չ թե լճակին պետք ե ուղ-
ղել կրակմարիչի հեղուկը, այլ պատին, վոր
լճակի յերեսին իջնեն փրփուրները և բոցը
հանդցնեն, այլապես լճակին ուղղելով, խփող
հեղուկը կցրեր նավթը և հրդեհը կծավալ-
վեր:

— Վո՛տ, մարդեց, լավ եր չմոռացար, —
խրախուսեց պետը:

— Վարդյան արդեն հանդերձ, թող:
— Հանդերձ եք հաշվում.
— Հա', հա', հանդերձ եմ հաշվում,
հիմա յեւ ա'յ ետեղ են բոցերը մոտենում:
— Վորտեղ են բոցերը, փորն ե՞ք հաշ-
վում բոցը:
— Ա'յ սա', ետեղ, բոցն եւ ետեղ ա
հասել:

— Դե, դեն գնացեք...
Վերջացավ յերկրորդ կրակմարիչի հե-
ղուկն եւ: Արդեն հասան բանակայինները՝
նոր բերած կրակմարիչներով:
Ի՞նչ անել հիմա դատարկաձեռն: Բայց
առանց վայրկյան կորցնելու, իրերը դուրս
հանողների հետ Վարդյանը վազեց դուրս քա-
ղելու այնտեղի իրերը, փորտեղ բոց հայտա-
բարվեց: Մինչդեռ իրերը դուրս հանող մյուս
5 բանակայինները սապոզների կապոցներն
եյին դուրս հանում, Վարդյանի աչքն ընկավ
լիքը արկղների: Ծանր մի արկղ փորին դնե-
լով նա սկսեց արագ-արագ դուրս հանել:

— Վո՛ւ, մալադեց Վարդյան, այդպե՛ս, —
ելի խրախուսեց պետը: Այնուհետեւ ծանր ար-
կղները մեկ-մեկ փորերին օղնելով, բանակա-
յինները դուրս եյին տանում ու անմիջապես
յետ գալիս: Պահեստն լիքն եր հրչեջ բանակա-
յիններով: Յեւ կանոնավոր կազմակերպված ու
արագ շարժման մեջ լավում եր պետի բարձր
ձայնը.

— Բոցն ա՛յ, ետեղ ա՛, ետե՛ղ — ու ձեռ-

քի յերկար փայտով ցույց եր տալիս տեղերը, —
սա հենց բոցն ա:

— Եդ կողմը հանդերձ եմ համարում,
թողնել եդ կողմը:

— Արա՛դ շարժվել, արա՛դ:

— Վո՛ւ, մալադեց.

— Ձե, եդ չեղալ, ընկեր բանակային, չե-
ղավ:

— Արա՛դ կրել:

Վարդյանը ծանր արկղները կրում եր
այնքան դյուրին կերպով, կարծես թե դրանք
թեթև բաներ եյին:

Վերջացան արկղները: Այս անգամ եւ
նույն արագաշարժութեամբ Վարդյանը սկսեց
կրել առջայինների հակերը: Վերջին հակը դուրս
տանելուց վերդառնալով Վարդյանը լսեց պե-
տի շատ խիտ հրամանը:

— Պաժարը տարածվում ա, ազնետուչի-
տեխները չեն ողնում, նաստաներով ջուր բերել,
մա՛րջ:

Վարդյանը դուրս վազեց: Նրանից առաջ
վազում եր մի հողի — Ասատուրն եր: Հաստ
ջրահանը միացնելով բակի ծորակին, Վարդ-
յանն, Ասատուրն ու Բարամյանը ջրհանը
քարշ տվին դեպի պահեստը: Բաշե-քաշ պահես-
տին մոտեցնելուց հետո, Վարդյանը ջրհանի
ծայրը բռնելով ուզում եր պահեստ մտնել,
յերբ ջուրը դուրս թռավ ջրահանից:

Ասատուր, վազիք կռանաղ փակիր, թե չե
պահեստը կլցնենք ջրով, — բղավեց Վարդյա-
նը:

— Լալ չի փակվել հա՞, վայ ըս գործի թե-
քումին ինչ ասեմ:

Ջուրը կտրվեց: Վարդյանն ամբողջ ուժով
ծանր ջրհանը քաշելով մտավ պահեստ:

— Ո՞ւր ե բոցը, ընկեր պետ.

— Այ, առաստաղի են անկյունումը.

— Լալ— ու Վարդյանը ջրհանն ուղղեց
այն կողմը → Հրայր, տուր դա, ծանր ե:

Ջուրն ուժեղ շատրվանի պես դուրս գցեց
ջրհանից:

— Вот безобразно, — բարկացավ պետը, —
տեսնո՞ւմ եք ինչ արիք, պահեստը ջրով պիտի
լցնեք:

Ասատուրն դուրս նետվեց: Չնայած մի
քանի բոպե հետո Ջուրը կտրվեց, բայց պա-
հեստի հատակի ցածր անկյունն արդեն ջրով
լցվել էր:

— Ես կողմ, ես կողմ յեկան բոցերը, —
սխալը մոռանալով, պետը շարունակում էր
հրամաններ արածակել: Վարդյանն անմիջա-
պես ջրհանն այն կողմն էր ուղղում, ուր հրա-
մայում էր պետը: Իրեր կրողները նույնպես
վազում էին դեպի այդ կողմը:

— Պաժարը հանդցրած եմ հայտարարում, —
հանկարծ հրամայեց պետը և նրա շրթունքնե-
րը, վոր հրամանների ժամանակ ամուր իրար
էյին սեղմվում, այս անգամ իրարից բաժանվե-
ցին: Նա ժպտալով նայեց հողմած բանակա-
յիններին, վոր նույնպես ժպտացին պետին:

— Հիմա դո՛ւրս, բակում շարքի:

Դուրս յեկան բակը: Նոր յեկած թարմ
ձյունը տրորելով՝ վաղեցին շարքի: Յերեկո-
յան ձյունելուց հետո յերկինքը պարզել էր:

Չմեռվա առաջին որն էր դա:

Ասատուրն ջրհանն արձակեց ծորակից ու
ջուրն սկսեց անուշ դլլլոցով թափվել դռան
մեջ:

— Չգա՛ստ:

— Չա՛խ, դա՛րձ:

Չախ դառնալով շարքը նայեց ուղիղ դե-
պի արևելք: Լուսաստղը փայլելում էր արե-
վելքում: Մյուս աստղերը դժգունանում էյին:
Ջուրը զրնգուն ձայնով դեռ թափվում էր դռան
մեջ:

— Քայլո՛ւվ, մա՛րշ:

— Դեպի ա՛ջ, մա՛րշ:

— Տեղո՛ւմ:

— Կա՛նգ, ա՛ռ:

— Ա՛ջ, դա՛րձ:

— Ազա՛տ:

— Ընկերներ, յերկու խոսք և ցրվենք,
քրտնած եք: Եստրվա փորձը ցույց տվեց, վոր
դեռ չեք վարժվել: Եստեղ վոր ետքան սխալներ
արիք, փորձնական պաժարի տրեվողին, բա
վոր իսկական պաժար լինի, ի՞նչ կանեք: Մի
քանի ընկերներ փոխանակ առաջ փամփուռտի
յաչչիկները դուրս հանելու, սապողներն էյին
հանում: Մենակ Վարդյանը ճիշտ արեց: Որի-
նակ կրանտը բաց էյիք թողել ու քիչ էր մնացել
վոր պահեստը ջրով լցնեյիք: Ով դիտի իսկա-

կան պատարի վախտն եւ կռանտը փակ պահեք: Բայց ընդհանրապես պիտի ստեմ, վոր հաջող եր: Մի յերկու ընկեր շիտթիւեցին, համա իրենց գտան: Որինակ՝ ընկեր Վարդյանը չնայած ուշ հագնուեց, բայց լավ աշխատեց և պետք ա ստել, գերազանց դնահատականի յարժանի:

— Յրվել, բայց հիմա չվազվեք, քրտնած եք:

Շարքը ցրվեց:

Վարդյանը թաշկինակը հանեց ճակատի ու դեմքի սառած քրտինքը սրբեցու: Չնայած բոլորից շատ նա յեր չարչարվել, բայց իրեն բնավ հոգնած չեր զգում: Նա այնքան ուրախ եր, վոր կարծես թե հենց նոր եր ավարտել նոր մի կար:

Նախաճաշից հետո շարքը կրկին պատրաստ եր:

— Զգա՛ստ:

Ընկերներ յերկու ժամով ետոր դնում եք դաշտ պարապմունքի, պատրաստվել տա՛րոպելյում:

— Զգա՛ստ,—

Շարքն արդեն պատրաստ եր:

— Քայլո՛վ, մա՛րչ:

Քաղաքի կենտրոնական փողոցով, այն փողոցով, վորի վրա ուշ յերեկոններին կամանդայի զորանոցի լուսամուտից նայում եր Վարդյանը, շարքն առաջ եր շարժվում:

— Մե՛կ, յերկո՛ւ, յերե՛ք:

— Մե՛կ, յերկո՛ւ, յերե՛ք:

Գլուխները բարձր, կեցվածքները հպարտ, բանակայինները վտաքերն ամուր խփում էյին նոր յեկած թարմ ձյունի մեջ: Վտաքերն ամուր խփում էյին նրանք թարմ ձյունի մեջ և՝

«Մե՛կ, յերկո՛ւ, յերե՛ք»—ին վորպես արձագանք, նույն ռիթմով լսվում եր տրորվող թարմ ձյան ձայնը:

— Խը՛շ-խը՛շ, խը՛շ,

— Խը՛շ խը՛շ խը՛շ:

Քայլում եր շարքը հպարտ կեցվածքով և շարքի գորշ շինեւթոնների մեջ հեռվից Վահան Վարդյանը չեր ջոկվում մյուսներից: Վարդյանն ե այն մեկը, թե Ասատուրը, Վարդյանն ե, թե Հրայր Քարամյանը, տարբերել չեր կարելի:

Չեր ընում Վահան Վարդյանն այդ որն ել, բայց նրա սրտում այդ որը տարբեր զգացումներ էյին յեռում: Նա զգում եր, վոր ինքն այլևս այն չե, ինչ վոր եր յերեկ: Իսկ նկարիչ Վահան Վարդյանի վրա նայում եր ներդամտաբար:

— Գրեմ վերջին որագիբը նկարիչ Վահան Վարդյանի տետրակում— սոսայ նա և տետրակը հանեց գլխի տակից:

— Այսպե՛ս, այսպե՛ս... չչնջած նա մըտաղբաղ, և արդեն մատիտը շարժվում եր տետրակի բաց կապույտ տողերի վրա:



«Յես Վերջին անգամ եմ գրում նկարիչ Վահան Վարդյանի որագրի տեսարակում: Մինչև հիմա գրածներս իմ նոր կյանքի առաջին որերի մասին էյին...

Առաջին որե՛ր... չատ քաղցր էյին...

Վաղը յերբ բացվի առավոտը, առավոտվա նման պայծառ ու սուր մտքով յես հրաձգության ու քաղպարամունքի կգնամ ու վաղվանից հետո կգրեմ նոր որերիս մասին...

Առաջին որերին ինձ ներվում եր, նոր որերին այդպես չի լինի...

Չորանոցում միայն շնչառություններն են լավում: Յեվ Հովոն քնի մեջ ելի կրկնում է փափաղակի մասերը:

Յես պետք է նկարեմ զորանոցի գիշերը...»:

1933 թ. հունվար-ապրիլ

Յերևան-Կարմիր բանակ

Խ Ա Ջ Ե

1

Որայից հեռու, կանաչավուն մարգագետնի կողքին, բարձր ու լայն ժայռի վրա կանգնած, չորս յեղզուհիներ իլիկ էյին մանում: Սպիտակ թելերը յերկար վոլորելով՝ թողնում էյին իլիկը, մինչև հասնի դեմնին և անհամարձակ, հազիվ լսելի ձայնով յերգում էյին «Ոորձակ, հազիվ լսելի ձայնով յերգում էյին «Ոորձակ թե բազավ» յերգը ու կասկածով փսփսում իրար հետ, ապա նորից յերգում մեզմ ձայնով:

Բոլորի ձակատներին ել կապված կային տարբեր մեծության ու գույնի մետաղե պլիկներ՝ դրամներ, թևերին հաստ ու ծանր ապարանջաններ, վորոնցից նույնպես մետաղե մանր զնգլիկներ էյին կախված: Պարանոցներին կապել էյին մի քանի փաթով հուլունքներ, նույնպես մետաղե զնգլիկների հետ: Այնպես վոր յերբ շարժվում էյին նրանք, լավում եր այնպիսի զրնգտոց, ինչպես կառքին լծած դանդուլակավոր ձիերի վազքի ժամանակ:

Յերկուսի քթերի կողքից անց էյին կացված արծաթե դարաֆիլներ², մեկն ել վոսկե,

¹ «Գեղեցիկ յերիտասարդ» քրդական յերգ եւ
² Կոճակի նման մետաղե մի նշան, վ.բ մանուկ հասակից քիթը ծակելով նրա մեջ են անցկացնում:
 Վ. վարդյան — 10

վորի հետեանքով մաքուր չեյին խոսում նրանք: Չորրորդի քթին զարաֆիլ չկար, բայց զարաֆիլի նեղլիկ անցքը յերեւում եր նրա քթի վրա:

Մի քանի որ եր, վոր նրանք հաճախ եյին գալիս ու բարձրանում ժայռի վրա իլիկ մանելու: Յուրաքանչյուր շարժումն ի ժամանակ, յերբ զնգուտոցի ձայնն եր լսվում, նրանք կենսուրախ քրքիջներով հրհրում եյին իրար, յերգում եյին Արագածի զեփյուռնի հետ, յերգում մեղմ ձայնով: Ապրում եյին նրանք իրենց կյանքի զարնան որերը՝ հուզերի ու կրքի տարերքը: Մեկը նրանցից՝ Չայնեն, վորի վուկե զարաֆիլը արեւի տակ վայրում եր, — որայի աղայի աղջիկն եր: Նա մյուսներից ավելի շատ եր խոսում ու հուզմունքով թափ տալիս կրծքի զգեստը:

«Կյավրե խուլի բա, կյավրե խուլի բա»¹ — կրկնում եյին նրանք ամեն քչիչոցից հետո ու խորհրդավոր կերպով լռում, ավելի արագ պտտեցնելով իլիկները:

Արեւ բավական բարձրացել եր: Լսվում եր միայն լեռան հողմի շաչյունը: Մանում եյին նրանք ու յերբեմն աչքի տակով նայում վերեւի ժայռի կողմը, վորի տակ նստած եյին յերկու աղջիկ՝ առանց զնգլիկների: Մի գիրք ծնկներին դրած՝ այդ աղջիկներն հափշտակված կարդում եյին և չեյին հետաքրքրվում շրջապատով: Գալիս եյին նրանք ամեն որ,

նստում եյին վերեւի ժայռի հովի տակ ու սկսում խոսել: Ստում եյին ու կարդում: Ուրախ եյին նրանք, ինչպես այդ որվա անամպ, արեվոտ որը: Նրանց ժպիտները լի եյին բերկրությամբ: Համարձակ եյին նրանք և ծիծաղները նրանց ավելի հնչեղ եյին քան առաջինների:

Այսպես, չորս աղջիկ կալանավորներ, անհամարձակ ձայնով յերգում եյին, բամբասում ու վոլորում իլիկները, զնգուտացնելով իրենց մետաղե զարդարանքները, իսկ մյուս յերկուսն առանձին նստած, խոսում եյին ու կարդում, խոսում եյին ու կարդում կյանքի և նրա հուզող հարցերի մասին...

2

Կանաչ մարգագետնի սեղավետ թմբերի վրա հաճությամբ, բավականությամբ թավալվելուց հետո, գիրքը թեփի տակ դրած, Արամը դանդաղ քայլերով սկսեց զնալ դեպի այն ժայռ, վորի տակ նստել եյին իր քույրը՝ Հասմիկն ու Սաջեն: Յերբ նրանք իրար տեսան, Հասմիկը ծիծաղելով ասաց:

— Յերեւակայիր, Արամ, ծիծաղում են Սաջեյի վրա. բամբասում են, վոր գալիս և մեզ մոտ կարդալու...

— Իսկ Սաջեն խոմ չպետք է նրանց ասածներին ուշադրություն դարձնի, — պատասխանեց Արամը ժպտալով ու նստեց քրոջ կողքին:

¹ Անեծք, վոր գործածական է կանանց սեջ.

Իսկ Խաջեն, վոր հայերեն լավ հասկանում եր, ամոթխած դեմքը խոնարհեց գրքի վրա:

— Դեռ ինչքա՞ն, ինչքա՞ն աշխատանք կա. Արամ... ինչքա՞ն, դժվարություններ են կապված մեր հաղթանակների հետ... փշոտ ե մեր ճանապարհը, բայց քայլում ենք մենք յերկաթե կոշիկներով... Այստեղ, յեզդիների մոտ, դեռ կյանքն ինչքա՞ն հետ ե, ինչքան... Չքավոր յեզդիք ու հովիվները հնազանդ դեռ կոանում են աղաների հարվածների տակ, իսկ կանայք, կանայք դեռ վորքա՞ն անպատվաբեր վիճակի մեջ են, վոտնահարվում են, ճընջվում վորպես ստրուկներ...

Հուզմունքից Համիկի կուրծքը բարձրանում ու իջնում եր: Քրոջ հուզմունքն ու վոպեվորությունը վարակում եյին նաև իրեն՝ Արամին: Նա համակրական ժպիտով լսում եր Համիկին: Իսկ Խաջեն, խուսափելով Համիկի հայացքից, շառագունած դեմքը գրքից վեր չեր բարձրացնում:

Իսկ բարձր ու լայն ժայռի վրա դեռ մանում եյին այն չորս յեզդուհիները, դեռ բամբասում եյին...

— Աղջի, հլա տեսեք, հլա տեսեք ինչպես ե հայի տղան են անամոթի մոտը նստել, վայ,— հրում ե Չայնեն ընկերուհիներին ու չորսով մխատին նայում են դեպի վերեվի

ժայռ: Բայց Արամը նստել եր Խաջեյից հեռու Համիկի մոտ:

— Թո՛ւ, նալլաթ քեզ, բեաբուռ, կյավրե խուլի բա,— մի քանի անգամ կրկնեցին մանողներն ու ցած իջնելով ժայռից, դնացին բամբասելու Խաջեյին:

— Կորեք, շուտ յեկեք ձեր տունը, ձեր մազերը կտրեմ,—որայից դուրս դալով բղավում ե Չայնեյի մայրը՝ Խանումը:

— Կյավրե խուլի բա, դո՞ւք ել եք ուզում Խաջեյի նման «սուռներ թռնել», կորեք ձեր տունը, մեկ ել ձեզ այնտեղ չտեսնեմ— բարկացած ավելացնում ե Խանումը:

Չայնեն լուում ե և ընկերուհիների հետ մտնում որան:

— Թող դուրս անեն, դուրս անեն որայից այն հայի աղջկան, անամոթը Խաջեյին էր որին հասցրեց, մեր աղջիկներին ել ե ուզում իր նման փչացնել,—գիմում ե աղայի կնոջը հարեվանուհին; վորն իր աղջկան անից դուրս դալ իսկ չի թողնում, նրան նամուտով դաստիարակելու համար:

— Թու, թու, թու,—կրկնում են բոլորը: Մաթոշղան, ոուսի մաթոշղան, բոլ չի վոր հազար տեղ ման ե դալիս, հիմա յել հայի տղայի հետ զնարի՞ տակն ե նստում:

Թքած քո նամուսին, նալլաթ քո ծծած կաթին,—կրկնում եյին յեզդի կանայք ու ամեն խոսքի վրա ծեծում իրենց կուրծքը:

Բոլորը հուզված դեռ բամբասում եյին Խաջեյին, յերբ նրա մայրը յեկավ: Նա հիսունն անցկացրած, նվաղած պառավ էր, հագած ճլպտուն, կտրված մի դեյրա, մեջքին կտրտված ցնցոտիներ ընդ հին, կարմիր շալ: Դեյրան չէր ծածկում նրա վարտիկի լայն փողերը, վոք իջել եյին նրա բորիկ վոտքերի վրա: Իսկ ճակատին նա կախել էր հին ու ժանգոտ մետաղների մի քանի պլիկ:

— Բարո՞վ յեկար, բալաք շան կնիկ,— հեզնանքով դիմեց նրան աղայի կինը:

— Բարով յեկար, խանըմ,—կրկնեց նա, յերբ Խաջեյի մորից պատասխան չստացավ:

Ինչո՞ւ յես պապանձվել, Սայրե խանում,— վերտին կրկնեց Խանումն ավելի կծու հեզնանքով,—վաղը կվերցնես ջուլ ու մուլդ ու դուրս կգաս մեր որայից: Չմնաք, հարկավոր չէք, աննամուսներ: Գնացեք, գնացեք Թիֆլիս, ուստի մաթուշեք սովորել եք, սովորել, թո՛ւ, թո՛ւ...—փրփրաց Խանումը, գազազած եզ փաղրի պես:

— Չտեսնվի, չտեսնվի եղմալ բան, թու, թու քո նամուսին, թու,—վրա բերեց մեկ ուրիշը:

— Անամոթ շուն, թողնում ես աղջիկդ բոլորի հետ լկուսվում ա, բա չե՞ս ամաչում,— ավելացրեց յերրորդը:

Սայրեն լուռ էր:

— Վերքոտ շուն, կեղտոտ անտեր, կորեր, կորեր այստեղից,—բարկացավ ելի աղայի կինը նրա վրա և ուժգնությամբ հրեց: Խեղճ պառավը դետին գլորվեց և ապա վեր կենալով տեղից, արտասուքն աչքին վերադարձավ փալասներից կարած իրենց վրանը:

Մտնելով վրանը, Սայրեն յերկար լաց յեղավ: Արտասուքները թրջեցին նրա վոսկրոտ, չոր այտերը...

Յերբ Խաջեն տուն յեկավ, մայրը տխուր մոտեցավ նրան ու գլուխը շոյելով հարցրեց:

— Վորտե՞ղ եյիր, Խաջե...

— Հասմիկի մոտ եյի, դայե ջան:

— Ե՞լ ով կար այնտեղ, լաո:

— Հասմիկի յեղբայրը՝ Արամը, ինչո՞ւ, դայե:

Սայրը թշվառ ու խեղճ կերպարանք ընդունելով, աղաչական ասաց.

— Ղուբբան քեզ, Խաջե ջան, չե՞ վոր յես ել եմ խեղճ, ինձ հայհոյում են, թքում են, մրում, դուրս են հանելու մեզ որայից: Ին՞չ դործ ունես, մի գնա եդ հայի աղջկա մոտ, ելի, ինչպես մյուս աղջիկները, այնպես ել դու յեղիր, չե՞ վոր ամոթ ե, լաո, չե՞ վոր ամոթ ե...

Խաջեն հուզվեց:

Մոր անկեղծ հոգատարութիւնը շարժեց նրա սիրտը: Գիտեր Սաջեն, վոր մայրը չափազանց սիրում էր իրեն, այն որվանից մանավանդ, յերբ հայրը մեռել էր: Հայրը մեռնելուց առաջ պատվիրել էր կնոջը—«Սաջեյին ուսումի կտաս, Մայրե, մեր քրդերի աղջիկների նման չմնա, իսկ ուրիշներն ինչ ուզում են, թող ասեն»: Բայց մայրը չէր կարողացել Սաջեյին դպրոց ուղարկել, կարիքից հարկադրված նա Արագած էր յեկել, վոր խանութների համար իլիկ մանի՝ իրեն ու Սաջեյին պահելու համար:

Մի պահ վերապրելով հինը՝ հիշելով հորն ու իրենց թշվառ կյանքը, և մոր թշվառ դրութիւնը, Սաջեն հառաչեց:

— Չե՞ վոր յես վատ բան չեմ անում, դայե, յես կարդում եմ, իբի դա վատ չե: Հիշո՞ւմ ես հայրս ինչ ասաց քեզ... Ինչո՞ւ յես ուրիշներին լսում, — ու մոտենալով փաթաթվեց մորը: Մայրը խորը հառաչանքով զրկեց նրա գլուխը, համբուրեց վարսերը և կամաց հեկեկաց:

— Մի լա, դայե ջան, թող ինչ ուզում են խոսեն: Խելք բան չեն խոսում նրանք: Նրանք մեր թշնամիներն են, մեզ միշտ էլ ծեծեց են, ճնշել են: Մի լա, դայե, յերկու ամիս մնաց, սարից գլուղ կիջնենք և լավ կլինի: Ասում ես «հայի հետ ի՞նչ գործ ունես»... դայե, չե՞ վոր բոլոր քյասիր հայերը, թուրքերը, ուսաները մեր՝ քյասիր յեզդիների,

քրդերի բարեկամներն են, իսկ մեր թշնամիները հարուստներն են, մեր աղաները: Իսկ դու, դայե, դեռ կարծում ես, թե աղաներն ու խանութները բարի յեն, յերբ լցնում են ամանդ թանով: Մի լա, դայե, աղիզ դայե, մի՛ լա, լավ կլինի, լավ դայե, դլե մն դայե... .

Լռեցին մայր ու աղջիկ, գորովանքով իրար փարված: Սաջեն կախել էր իր գլուխը: Մտորումների— հուզող, ալեկոծ մտքերի մեջ էր: Տակն ու վրա յեղավ նրա սիրտը, յերբ մոր դեմքին նայեց, յերբ մոր արասուքները տեսավ, հարազատ մոր առատորեն հոսող արտասուքները, չոր այտերի վրայով, քթի զարաֆիլի անցքի վրայով գլգլող արտասուքի կաթիլները... .

Պոռթկաց նրա լացն էլ, նա յել հեկեկաց: Ու տիրեց քար լուռթիւն, լուռթիւն, վոր այդպիսի պահին քարից էլ ծանր է, մղձավանջային, անտանելի: Ապա հիշեց նա հորը, Թիֆլիսում անցկացրած իրենց կյանքը, զըրկանքների շղթան:

Նրա հիշողութիւնն մեջ դեռ թարմ էր այն որը, յերբ հայրը ծանր բեռի տակ, Թիֆլիսի շուկայից աղայի տունը իրեր էր տանում: Սաջեն հիշում էր: Հայրը դանդաղ ու անբալով էր քայլում ծանր բեռի տակ, հանտնալով էր քայլում ծանր բեռի տակ, մեջքի կարծ հեծանիվը նրան դեռին գլորեց, մեջքի բեռի հետ: Հոր քթից հոսող արյունը ներկեց դեռինը... .

Սաջեն ճչաց, վորքան ուժ ուներ:

Աղջիկը հիշեց և այն, վոր հայրն ուզում էր իրեն դպրոց ուղարկել, իսկ նրա բեռնակիր ընկերները ծիծաղում էին նրա վրա, նախատում էին: Բայց հայրը համառ էր, վճռահան: Նա ասաց, վոր իր աղջկան՝ դպրոց կուղարկի, ասաց և կատարեց հետեվյալ որը, տեսարակներ դնեց ու դպրոց ուղարկեց Սաջեն: Բայց միայն մեկ ամիս, մեկ ամիս միայն նա ամեն որ հաճույքով դրկեց ու համբուրեց դպրոցից վերադարձող աղջկան: Մեկ ամիս հետո արդեն նա չկար:

Հիշեց Սաջեն նաև իր՝ վորբանոցում յեղած ժամանակը, յերբ բորբը ծիծաղում էին իր վրա, քաշում փեշերից ու միշտ կանչում «քրդի կյաճե, քրդի կյաճե»... Սաջեն շատ անգամ էր լսել դպրոցում իրենց՝ քրդերի մասին: Դպրոցում ասում էին, վոր քրդերը դեռ կիսավայրենի յեն, նրանց դեռ պետք է կարդալ սովորեցնել: Իսկ հիմա, աղայի կինը, կիսավայրենի այդ կինը ծիծաղում է իր վրա, նրա համար, վոր ինքը կարդալ է սովորում: «Չե, յես վոչվոքի, վոչվոքի չեմ լսելու, պետք է կարդամ, սովորեմ: Իսկ աչնանը՝ սարից իջնելուց հետո, պետք է կոմսոմոլի մեջ դրվեմ, կոմսոմոլ դառնամ: Սեյրք բաներ են ասում Հասմիկին ու Արամը, յես նրանց կլսեմ, նրանց կհավատամ յես, վոչ թե Չայնեյին ու նրա մորը, — վճռեց նա մտքում ու դառնալով մորը, վճռականությամբ ասաց:

— Չե, դայե, դու նրանց մի լսիր, մեր դուշմաններին մի լսիր, յերկու ամիս հետո դյուղ կիջնենք և լավ կլինի...»

Սրինգը սուլելով Չայիգը վոչխարը տուն էր բերում: Վոչխարն ազահությամբ արածում էր ու դանդաղ շարժվում դեպի տուն: Սրինգի ձայնը մեկամաճոտ ու հուզող էր և վոչխարներն այդ ձայնից դերված՝ արածում էին ավելի ազահ ու սվսվում, քլքլում այնպես, վոր կարծես պառավ կանանց բամբասանքի փսփոցներ լինեյին:

Տաս որ էր, վոր Սաջեյին չեք տեսել նա: Տաս տարու չափ յերկար ժամանակ: Յեվ դրա համար էր, վոր ավելի ավյունով էր փչում սրինգն ու յեռանդով էր սուլում: Մի տարի յել հովիվ կլինեք, վեց դառ կստանար և այնուհետև կապրեր այնպես, ինչպես շատերը առանց ուրիշի ձեռքը նայելու:

Վոչխարները փսփոցով արածում էին ու ամեն մի ձայնի, կամ խշշոցի ժամանակ իրար անցնում, հավաքվում իրար շուրջ:

Վոչխարի յետև, հովվական կուլան ուսերին՝ Չայիգը կաթնեց մի ժայռի: Նրա գոյխում միշտ այն միտքն էր պտտվում, վոր յեթե Սաջեյի հետ չամուսնանար, ուշ, շատ ուշ կնշանվեր՝ չորս հինգ տարի հովիվ կլինեք, վոր ձեռք բերեք բան, յերեսուն վոչխար՝ դալիմ տալու:

Ապա սուբելով, վոչխարը քչեց դեպի աղ-
լը. աղլի դուռը շարեց ու կուլարն ուսերին՝
մտավ աղայի վրանը:

— Բարի իրիկուն, — ասաց և կամենում եր
նստել, բայց պատասխան չստանալով, նորից
կրկնեց կարծելով, թե չլսեցին առաջին ան-
գամ:

— Բարի իրիկուն, — ելի վոչ վոք չպատաս-
խանեց նրան: Աղայի դեմքը թթվել էր, Չմչի-
դըն գզաց, վոր մի անախորժ բան է պատաս-
հել: Նա ուզում էր նստել, յերբ Նազո աղան
մեղմ ձայնով, կարծես սիրալիբ, բայց հեզ-
նանքով ու զսպած բարկությամբ ասաց.

— Գլխիս վրա՞ յեկար, աղա...

Չմչիդը կանգնած մնաց վրանի սյունի
մոտ, սպասելով, թե ինչ կլինի:

— Քեզ ասել եմ, վոր կնոջդ սանձը քա-
չես, իսկ դու ե՞՞չ ես, քեզ պետք է բզե՞ն, վոր
նամուս ունենաս: Կնիկդ իմ անունն էլ կստ-
րեց, իմ որայինն էլ: Թո՛ւ, թո՛ւ, թքած հորդ
յերեսին. բա դու մարդ չե՞ս, դու նամուս չու-
նե՞ս, — ու լեզվով «ծկ, ծկ, ծկ» անելով, գլու-
խը տարուբերեց ու լռեց:

— Բոյդ դեախնը մտնի, բոյդ, կնիկն իր
աչքի առաջ հազարի հետ նստում կանգնում ա,
իսկ ինքը սուս ա կենում, մեռնի քեզ նման
մարդը, մեռնի, — սկսեց Խանումը, բայց ա-
ղան նրան ընդհատելով այս անգամ ավելի
բամբ ձայնով գոռաց:

— Շուն շան վորդի, ելի ասում եմ քեզ,

ելի յեմ բղում, կամ կնոջդ կարգի բեր, կամ
հեռացեք, հեռացեք իմ որայից. չներն ու լա-
կոսները թող իմ անունը չլեղտոտեն:

Չմչիդը չափազանց հուզվել էր: Շատ
ծանր էր նրա համար աղայի ու նրա կնոջ
թուքն ու մուրը: Ինքնասիրությունից խայթ-
ված նա այդ պահում ուզում էր Խաջեյին
կտոր—կտոր անել, ցույց տալ, վոր «իբ նամու-
սի համար» ինքը կին ծեծել դիտի:

Չմչիդը դուրս յեկավ աղայի վրանից,
դանդաղ քայլերով, մտածկոտ ու քարի նման
լուռ: Արագածի յերեկոյան դուրեկան քամին
փչում էր նրա քյաքուլին, սլոկում կուլարը
նրա թևերից: Բայց նա վոչինչ չէր զգում:
Ինքն էլ չիմացավ, թե ինչպես Խաջեյնց վրա-
նը մտավ: Լուռ կանգնեց վրանի սյան մոտ,
մինչ Խաջեյի մայրը նրան նստելու հրավիրեց:

— Չմչիդ, լաո, նստիր, ինչո՞ւ յե քեֆդ
խարար յեղել, — դիմեց նրան մայրը, իսկ Չմ-
չիդն առանց պատասխանելու նրան, առանց
կուլարն ուսերից վեր առնելու, նստեց անկող-
նու վրա, գլուխն արիերի մեջ առավ ու հենվեց
սյանը:

Խաջեն հասկանում էր բանի եյությունը:
Նա վրանի մյուս կողմում նստած, արհամար-
հանքով ու կարեկից զգացմունքով էր նայում
Չմչիդին: Այդ բոայեյին Չմչիդն այնքան, այն-
քան մանուկ ու անզոր յերեխա յեր թվում նը-
բան: Յերկար ժամանակ լուռ էյին յերեքն էլ.
վոչ վոք նրանցից չէր ուզում խոսել: Յուրա-

քանչյուրն ամփոփվել էր ինքն իր մեջ և ուզում էր, վոր խոսքի ընթացքն ինքն իրեն ըսկավի: Յեվ Սաջենն ու Ջմշիդն ուզում էյին, վոր այդ ընթացքն իրենց կամքի հակառակ չգնա: Առաջինի մեջ խոսում էր վճռականությունը, նրա դատողությունն էր վճռում այդպես վարվել, իսկ յերկրորդը կամայականության ու կամակորության մոլեռանդ մի ասպետ էր: Նրանք, վոր այնքան սիրում էյին իրար, այդ պահին տարբեր բեմեռներից իրար էյին հակադրվում: Յերկու կողմերն էլ անզիջող էյին: Դեռ յերկար կլուէյին Սաջենն ու Ջմշիդը, յեթե վերջապես մայրը չխոսեր:

— Ի՞նչ է յեղել քեզ, Ջմշիդ, ինչո՞ւ չես խոսում, դուրբան քեզ, ասա տեսնեմ, լաո, ելի ի՞նչ է պատահել քեզ:

Ջմշիդը խորր շունչ քաշեց, ուզեց խոսել, ելի լոեց: Մի անդամ էլ խորը շունչ քաշեց, նա, գլուխը ծանրությամբ կռացրեց ու մի պահ լռելուց հետո ասաց.

— Ի՞նչ ասեմ, դայե, ինչ ասեմ: Աղջիկդ թե ինձ, թե քեզ ու թե հոր պատիվը գեանովն է տվել: Յես էլ գլխիս փափախ դնելու իրավունք չունեմ, բոլորը մեզ վրա ծիծաղում...

Այս ասելուց հետո գլուխը կախեց Ջմշիդը ու ելի հառաչեց խո՛րը, սրտի խորքից:

— Յեսի՛մ...— հաղիվ դուրս պրծավ մոր բերանից ու նա յել լոեց:

— Ի՞նչ եմ արել յես, Ջմշիդ աղա, վոր

իրավունք չունես փափախ դնելու գլխիդ, կիտահեգնական տոնով ասաց Սաջեն: Այդ ժամանակ Ջմշիդը շղաճորեն փափախը վերցրեց գլխից և այն ուժեղ գեանին խփեց:

— Փափախս գեանին տվեցիր, ուրիշի յես նայել չեմ կարող, — ասաց նա հուղիած, լացահամած ձայնով, — ես ի՞նչ փորձանք էր գլխիս յեկավ. եսպես էլ կրա՞կ...

— Փորձանք է գլխիդ յեկե՞լ... Յեթե կըրակ ես ընկեր, կարող ես ազատվել, էլ ինչո՞ւ յես Նադոյի խոսքով ու նրա հրամանով շարժվում, — վրա տվեց Սաջեն վրդովված, վիրավոր ինքնասիրությունից:

— Արածս ի՞նչ է, — շարունակեց նա, — ի՞նչ եմ արել... Գո աղայի աղջի՞կն է նամուսով, Չայնե՞ն, վորի սիրտն այրվում է ամեն ջահելի սև աչքերը տեսնելիս, վորը քարերի վրա կանգնած ամբողջ ուրը դադտնի «Սորթե բաղավ» է յերգում, վորը գիշերը ծպտյալ կերպով անկողնուց դուրս գալով, մարգագետիններում հովիվների հետն է թավալվում, վորի ալինում բոլորինը: Նա՞ յե նամուսով, վորի սիրտինի մանկան գերեզմանը ձորում չները փորեցին: Իսկ հիմա վոր ցերեկները տնից դուրս չի գալիս, դրա՞ համար է նամուսով: Նամուսո՞վ է նա, վոր տիրոջը տեսնող շան պես գալարվում է, յերկտակվում ու քծնում, յերբ գաղտուկ մի անկյունում յերխառասարդի յե հանդիպում: Ի՞նչ յես աննամուս եմ...

Թող այդպես լինի, Զմշիդ աղա. քո գործն է,
կարող ես այդպես համոզվել...

Զմշիդը վոչինչ չասաց: Լուռ եյին և՛ մայրը, և՛ Զմշիդը, և՛ Խաջեն... Մի քանի ըուպե հետո, առանց վորևէ բան ասելու, Զմշիդը կուլարը թեկերին առավ, ու դուրս յեկավ վրանից: Սայրեն նրա յետևից յերկար նայելուց հետո, մեկ ել հառաչեց ու նայեց աղջկան...

4

Հետևյալ առավոտ Խաջեն յեղելությունը Հասմիկին պատմեց: Նա հուզմունքից կրծոտում եր իր չրթունքները: Մի քանի ըուպե լուռ մնալուց հետո Հասմիկը սթափվեց ու պատասխանեց Խաջեյին.

— Դու չպետք է ազդվես այդ բամբասանքներից, Խաջե, դու պետք է անվհատ լինես, համառ: Առաջին քուրդ պայքարող կիներ դարձիր ու հավատա, Խաջե, վոր կհաղթես: Մի՛ մտածիր:

— Բայց չե՞ վոր հիմա մեզ ճնշում են, ի՞նչ անեմ,— հարցրեց Խաջեն տխուր:

Նրա սիրտն աշնպես եր նեղացել, վոր քիչ եր մնում լաց լիներ, յերբ մտածում եր, թե ինչ կլինի մոր վիճակը, յեթե ինքը գյուղ գնա:

— «Շարունակիր ճանապարհը, Խաջե՛, և թող մարդիկ խոսեն, ինչ կուզեն», դու այս խոսքերը պետք է լսես, Խաջե՛: Կրկնում եմ,

դու պետք է շինես առաջին քուրդ հերոս կինը: Մի մտածիր, դրությունդ լավ կլինի ու կմոռանաս, այս բոշորը հետո կմոռանաս,— կրկնեց Հասմիկը:

Չե՞ վոր Զմշիդը համաձայն չեր լինի նրա գնալուն, առանց նրա ցանկության ինչպե՞ս գնար, կամ ինչպե՞ս վարվեր մոր հետ, յեթե նա չկամենար բաժանվել նրանից,— մտածում եր Խաջեն.

Իր բացակայությունից հետո մորը կքրքրեյին, կհայհոյեյին, ի՞նչպես տաներ խեղճ կինը այդ բոշորը... Ու Խաջեն հեկեկաց, հենվելով ժայռին:

— Մի՛ լա, Խաջե, մի լա. կարող ես հիմա չգալ. վոչինչ, աչնանը կգաս, լաց մի լինի,— հուսադրում եր նրան Հասմիկը:

Խաջեն կամաց-կամաց կարողացավ գոպել հեկեկոցը: «Շարունակիր քո ճանապարհը և թող մարդիկ խոսեն, ինչ կուզեն»,— կրկնեց նա մտքում: Յերկար լսելուց հետո, դիմելով Հասմիկին, ամաչկոտ ու բեկբեկուն ձայնով ասաց.

— Կգամ, Հասմիկ, իսկ մայրս թող ուրիշ որա տեղափոխվի...

5

Քոլոզի թեւերն աչքերի վրա եյին իջել: Բեխերը լցվել եյին բերանը ու հայհոյում եր նա:

— Պառավ՝ չուն, դուրս կորիր իմ որսից, սատկած մարդուդ գերեզմանը, քո լիրբ վ. վարդյան— 11

աղջկա հերը... Շատ եք յերես առել. ել չգիտեք, վոր մի որ կայրեմ ձեզ ու ձեր փալասե կոնը...

Նազո աղան հայհոյանքի տարափ եր թափում իմաջեյի մոր գլխին: Հայհոյում եր նաև Զմչիդը: Նրա «սիրտը յեթե խանչալ տային, այրուն չեր դուրս գա», ինչպես ինքն եր ասում:

Խաջեն հավաքեց իր փալասները ու տեղափոխվեց մոտակա հայերի որան:

Նրա գնալուց հետո, թքում ու բանբասում եյին:

— Նամուսով քրդերը պեաք է սպանեն, սպանեն դրանց: Դրանց քոքը կտրվի,—ասում եր նախրապանի կինը:

— Սովորել են հայերի ու ուսաների հետ...

— Կրկնում եր մի ուրիշը:

— Լավ եր. վոր կորան և իմ ոճիքը դրանցից աղատվեց,— ասաց Զմչիդը աղային դուր գալու համար:

— Արխային կաց, յես քեզ լավ ու նամուսով աղջիկ կուզեմ, վոր ըսկի նրանց մասին չմտածես,— հույս եր տալիս նրան աղան:— Ափսոս եյիր դու լաո... Նամուսը քցել են շանը, շունը չի կերել:

Խաջեն գյուղ եր գնացել:

Կես ճանապարհին եր նա Հասմիկին ու Արամին հասել, ուշանալով մոր մոտ: Նա յերկար ժամանակ չեր ուզում մորից բաժանվել, լաց եր լինում ու գրկում մոր գլուխը, համբուրում նրա չոր, դուրս ցցված աչտերը:

— Մի տխրիր, դայե... Լաց մի յեղիր, դայե, չե՞ վոր յես քո Խաջեն եմ, չե՞ վոր յես քեզ չեմ մոռանալ,— լալիս եր նա բաժանման ժամանակ:

Մայրն ել եր լալիս: Մա համաձայն չեր, վոր աղջիկը բաժանվի իրենից: Յերկար խընդրում եր, վոր մնա: Չե՞ վոր փեսան կարող եր հրաժարվել, չե՞ վոր բոլորը ամոթանք կտային նրանց, կնախատեյին: «Հեյ գիդի, Հասո, դերեզմանումդ շարժվես, մի վեր կաց, վեր կաց տես աղջիկդ՝ Խաջեն ինչ որի յե հասել... Կորցրել է նամուսը», ասել եր մի քանի որ առաջ որայի քուրդ կանանցից մեկը և այդ խոսքերը կտրել եյին Մայրեյի սիրտը:

— Կերթաս, լաո, նամուսդ մի՛ մոռացիր, մեռած հորդ պատիվն աչքերիդ առաջ թող լինի,—պատվիրում եր նա աղջկան:

Հողեկան ծանր դրուժյան մեջ եր մայրը, տխուր ու դժգոհ, անհաշտ Խաջեյի գնալու մտքին: Բայց նահանջեց: Մի աղջիկ ունեւր, միայն մի աղջիկ, վոր իր սրտի սփռփանքն եր աշխարհում և ուրիշ վոչինչ, իսկ իր ամբողջ կյանքում տանջանք եր տեսել ու միայն տանջանք:

— Մի տխրիր, դայե ջան, հետո քեզ լավ կպահեմ, քեզ չե՞մ մոռանա,— ասաց Խաջեն վերջին անգամ և բաժանվեց մորից: Մայրն անկարող յեղավ իր հավասարակշռությունը պահել, ծալվեցին նրա ծնկները և նա գետին ընկավ ու յերկար լաց եր լինում: Որայում

հետո միայն խմացան, վոր Խաջեն գյուղ է
գնացել:

Կեսորին, յերբ Զմչիզը վոչխարը տուն
բերեց, այդ լուրն խմանալով, լաց յեղավ, ծե-
ծեց իր մորը, թափելով իր բարկութունը նրա
վրա, իսկ հետո յեւ հայհոյեց: «Աղան ճիշտ եր
տտում, Խաջեն աննամուս եր, անպատիվ, յե-
թե այդպես չլինեիր, ինչո՞ւ հայի աղայի հետ
գյուղ կերթար, ի՞նչ ասես չի լինի ճանապար-
հին:

— Պտուսով շուն, շուտ ասելիք ինձ, շուտ
ասելիք, մոր գնայի ճանապարհին յերեքին ել
սպանելի, մոր խմանային Զմչիզն ով է... —
բարկացել եր Զմչիզը իր մոր վրա:

— Յես պրա ծծած կաթը... — վերջին ան-
գամ գայրացած կերպով հայհոյեց Զմչիզն ու
մահակը վերցնելով աղայի վրանը գնաց:

— Յես քեզ լավ, նամուսով աղջիկ կու-
ղեմ, լատ, յես քեզ եյի ափսոսում, քե՛զ: Նա
անասեր աղջիկ, մորբանոցումն ապրած աղջիկ
եր, նա քեզ կին չեր լինի, չե, — կրկնում եր ա-
ղան շողոքորթ ու կեղծավոր յեղանակով:

6

Խաջեյի գնալուց հետո, մայրը հայերի ո-
բայում մի կերպ պահում եր իր գլուխը: Նա
ցան եր հավաքում, խնոցի հարում, ուրիշի հա-
մար եր իլիկ մանում: Սակայն արտասուքը
մշտապես անպակաս եր նրա աչքերից: Նրա
բորիկ վոտքերը ճաքճքել էյին ու մրմուռ
էյին, յերբ մի կաթիլ թան եր թափվում նը-

բանց վրա: Նա ավելի խեղճ, շատ խեղճ կին
եր դարձել: Ազատ բուսներին նստում եր,
հարյուր անգամ կարկատված դեյրայի վրա ելի
կարկատաններ ավելացնում ու «Իալալե՛» յեր-
գը քթի տակ մեղմ յերգելով, լաց լինում: Լացը
նրա համար մշտական եր դարձել, դրանով եր
նա դատարկում իր սրտում կուտակված թա-
խիծը, մի բուսե հանգստանում հոգեպես, տար-
վելով անդորր մոռացությամբ: Ամեն անգամ
լաց լինելիս, վերհիշում եր նա իր ամուսնուն...
Այս բոլորը սրած թրի նման կտրում էյին նրա
սիրտը և նա վերհուշերի այդ սպանիչ մղձա-
վանջին չգիմանալով, հեկեկում եր, անվերջ
հեկեկում... Ու արտասուքներն քարից կաթիլը-
թող ջրի նման, ցած էյին թափվում նրա չոր,
վոսկրացած այտերից, թրջում նրա փեշերը:

Այստեղ ել հանգիստ չէյին թողնում նը-
բան, ծաղրում էյին, արհամարհում:

— Պիրե՛, գյուղ գնա, աղջիկդ այնտեղ
հայ ջահելներին հետ «ախատում» է... Նա
դրանով քեզ խանումի նման կպահի, — ամեն
անգամ այսպես էյին խոսում նրա հետ: Սկզբում
որայի աղան՝ Յեգորը, Սայրեյին չեր թողնում
որան մտնելու, իր քերվա Նաղոյի պատվերը
կատարելու համար, բայց ուրիշները միջամը-
տեցին ու Սայրեն այդտեղ մնաց:

Գյուղերից Արագած յեկող ամեն մարդու
մոտ վազում եր նա ու հարցնում Խաջեյի մա-
տին, իսկ նրանք պատասխանում էյին անլուրջ

կողպերատիվում առևտուր ա անում և ամսա-
կան քառասուն մանեթ փող ա առնում, ամսա-
կան քառասուն մանեթ, բա՛:

— Ամսակա՞ն ա առնում:
— Հա, դայե, քառասուն մանեթ...
— Ե, ել վո՞նց եր, լա՞վ եր...

— Շատ և անչափ լավ եր, դայե ջան,
դու հեջ մի մտածի:

— Ասում եր մորս ե՞լ կբերեմ:
— Հա, դայե, ինձ ել ասեց, յեթե դու

կգաս, հետդ բեր:
— Լավ եր հա՞...
— Շատ, շատ, դայե, շատ և անչափ լավ

եր:
Դայեն դուրբան նրան, դայեն մատաղ
նրան, մատաղ...» կրկնում եր մայրն անվերջ,
առանց ընդհատումի:

Յերբ վերադարձավ նա Փոփոլի մոտից
Դիրբար խանըմը նրան հայհոյեց ու թքեց,
վոր խնոցին այնպես թողել ու դնացել եր:
Բայց Սայրեն, վոր հայհոյանքներ լսելու
սովոր եր յեղել իր ծնված որից, լռեց ինչպես
միշտ: Բոլորն ել յեթե հայհոյեյին ու թքեյին
նրան այդ բոպեյին, նա չեր տխրի, նրա սիր-
տըն այնպիսի ուրախությամբ եր լցվել: Իր
փալասե վրանը գնալուց հետո, յերկար
ժամանակ շոյում եր նա չթի կտորը, սեղ-
մում կրծքին ու աչքերին: Ուզում եր իր ճաք-
ճաքված վոտքերը չստերի մեջ դնել, բայց ավ-
սոսալով հանում եր վոտքերից, համբուրում

ու կտորի հետ ամուր, ամուր սեղմում եր կըրծ-
քին:

Առաջին անգամ, կյանքում հիսունից ա-
վելի տարի գլորվելուց հետո, առաջին անգա-
մըն եր նա նոր վոտնաման ու նոր կտոր ունե-
նում: «Դայեն քեզ դուրբան, լատ, քեզ մատաղ
դայեն, լա՞ո»—կրկնում եր նա իրար վրա:
Մինչև ուշ յերեկո, մինչև քնելը, նա այնքան
ուրախ եր, վորքան չեր ուրախացել իր կյանքի
բոլոր տարիներում միասին:

Մի քանի որ հետո, մի առավոտ, նա իրե-
դենները շալահն առավ, մնացածներն ել որա-
յի հովվի կնոջ մոտ թողեց ու ճամբա ընկավ
Փոփոլի հետ գյուղ գնալու, Մաջեյի մոտ գը-
նայու համար...

Յերբ անցնում եր նա Նադոյի որայի կող-
քով, բոլորը վրաններից դուրս թափվեցին նը-
րան նայելու:

— Կյավրե խուլի բա, կյավրե խուլի բա,
ինքն ել աղջկանից դաս առավ ու հայերի հետ
մենակ ճամբա յե դնում, անամոթ, աննա-
մուս,—բարձրաձայն կանչում եյին որայի կա-
նայք:

— Նալլաթ, հազար նալլաթ քեզ...
— Սովորել են դրանք, իմ քույր, սովո-
րել ե՞ն... Չեն ամաչում չե՞...
Բամբասանքին ել ծայր ու վերջ չկար:

Արդեն աշուն եր: Թոչնեկ էյին Արագածի

բոլոր ծաղիկները: Սարի վերևից սկսեցին փռ-
չել քամիները: Արագածում զգացվում էր
ձմեռվա շունչը՝ պաղ ու սառեցնող: Յերկու
անգամ առավոտները նույնիսկ ձյուն տեսան:
Ամառվա խուզելուց հետո վոչխարների մար-
մինները նոր էյին ծածկվում բրդով: Նրանք
մրսում էյին, կծկվում, ուրեմն դաշտ իջնել էր
հարկավոր: «Բարձե՛նք աղա՛, բարձե՛նք, ժա-
մանակն ե»—խորհուրդ ավեցին մի քանի ծե-
րունիներ, և մի որ որան շարժվեց տեղից, քո-
չեց:

Առաջին որը, յերբ քոչերը հեռացան, դա-
տարկ մնացած վարում¹ զգացվում էր այնպի-
սի ամայություն, վոր թվում էր թե հազար
ամյակներ առաջ է այդտեղ անմարդաբնակ ու
ամայի դարձել:

Քոչը դեպի ցած էր իջնում: Կանայք, վո-
րոնց թեերի վրա փայլում էյին դարաֆիլինե-
րը, յեղներն ու եչերն էյին քշում: Կարմիր
չալերը, տասնյակ փաթ, մեջքերին փաթա-
թած, նրանք շարժվում էյին արագ, վորպես
խսկական, աշխույժ լեռնցիներ: Ջահել աղջիկ-
ները, կորած մետաղե դարդարանքների ու հու-
լունքների մեջ՝ զնգրտոցը ձորերն ու քարափ-
ներն էյին դցում, յերբ առույզ վազքով քշում
էյին քոչը: Արագ շարժումից քրտինքը կա-
թում էր նրանց ճակատների զնգլիկների տա-
կից: Մի քանի կանայք էլ արեխներով էյին ու

յերեխաները մեջքներին կապած: Նրանք հով-
վուհիներն էյին, որայի աղքատ կանայք:
Միայն աղայի կինն ու աղջիկն էյին ազատ
քայլում, խանումի պես: Նրանք էլ զարդար-
ված էյին մյուսներից ավելի ու շքեղ: Հագել
էյին նրանք նոր ու խայտաբղետ չթից ճպլտուն
դեյրաներ, կարմիր ու ավելի լայն վարտիկ-
ներ, վորոնք իջնում էյին մինչև վոտքերի սև
չատերը, վորոնց վրա փայլում էյին կարված
սաղաֆները: Նրանց գլուխները կորել էյին
վոսկե ու արծաթե դրամների դարդարանքների
մեջ: Յերբ հոգնում էյին, կանչում էյին հո-
վիվներին, նրանք անմիջապես բերում էյին
ձիերը և նրանք ձիերի վրա նստած, հպարտ
վորպես արձաններ, քոչից առաջ էյին դնում:

8

Գյուղ դալուց հետո նրանք ամեն որ խո-
տում էյին Սաջեյի մասին ու յերբեմն էլ տես-
նում նրան: Սաջեն Նադոյի և յուրայինների
հետ խոտում էր մի տեսակ հպարտությամբ,
իսկ Ջմչիղի քոչ, մոր ու մյուս հովվուհիներ-
ի հետ՝ հարդանքով, ու սիրալիր վերաբեր-
ի հետ՝ հարդանքով, ու առաջինները և թե՛
մունքով: Սակայն թե՛ առաջինները և թե՛
յերկրորդներն ամեն կերպ աշխատում էյին
խույս սալ նրանից: Առաջվա նման էլի բամ-
բասում էյին Սաջեյին ու հայհոյում, բայց
այդ բոլորը հիմա միայն նրա բացակայու-
թյամբ էյին կատարվում, իսկ նրա ներկայու-
թյամբ՝ բամբասողները լուռ էյին: Վախե-

¹ վար — վրաններ խփելու տեղ

նում էյին մանավանդ՝ Նազոն ու նրա ընտանիքը:

Սմեն անգամ, յերբ տեսնում էյին յեզդիները Սաջեյին, ներս էյին մտնում ու կրկնում սովորական բառերը. «Կյավրե խուլի բա՛, կյավրե խուլի բա»:

— Ձեր մեջն ել պահաս աննամուսներ չկան, հա՛, — բամբասանքի ըոպեներին նրանց էյին գիմում հայ կուլակ կանայք, ահնարկելով Սաջեյին:

— Կեզտոտ կովը նախրի անուսն ե կեզտոտում, — պատասխանում էյին յեզդիները, ճնշված նրանից, վոր իրենց մեջն ել «աննամուսներ» կան ու լուում էյին կոտորված ինքնասիրությամբ: Նրանց ինքնասիրությունը կոտորվում էր, վոր Սաջեն, իսկական յեզդի Սաջեն բայլչևիկ էր: Նազոն շատ անգամ էր իր հայ կուսակիցների կողմից նախատինքի արժանացել դրա համար, նրան միշտ ասում էյին. «Մեր հայ ազգը հլա ասենք թե լուսավորված ա, դրա համար փչացած ա, ըրա ձեզնից ինչո՞ւ առանց լուսավորվելու փչանում են, են ել՝ սլթա կանայք»:

— Եդպես ա, — պատասխանում էր Նազոն, ասում են հայը վոր խաչը մոռացավ, սունի (մոլեռանդ) մուսուլման կզառնա, իսկ դուրոնը մոռացող մուսուլմանն ել՝ սունի խաչապաշտ: Հիմա մերն ա, յեզդուց վոր բայլչևիկ ա դարձել, սունի ա, հիմա դե հո կեզտոտ կովը չպիտի ամբողջ նախրի անուսնը կեզտոտի:

Մի որ, յերբ Սաջեն կոմսոմոլի ժողովում խոսել էր յեզդի հովվուհիների մեջ աշխատելու և նրանց կին պատժողովին մոտեցնելու մասին, իսկույն այդ լուրն յեզդիներին էր հասել, ու նրանք զայրացել էյին: Յեվ յերբ դրանից հետո մի անգամ Սաջեն հովվուհի Ջարեյի մոտ գնաց խոսելու, Ջարեն վրդովված պատասխանեց.

— Գնա՛, գնա՛... մենք քո ընկերը չենք, դու ճամբեդ ու նամուսդ կորցրել ես, դու անամոթ ես. —

— Սաջեն իր վորձում ձախողման հանդիպելով, դուրս յեկավ նրա մոտից, ծիծաղը դեմքին:

— Գնա՛, հայերի աղաները ճամբեդ են սպասում, — կանչեց նրա հետևից Ջարեն:

9

Կոոպերատիվը լիքն էր հաճախորդներով: Գործակատարներն արագ շարժման մեջ էյին: Խանութը լիք լցված էր: Գնորդների պահանջներն շտապ կատարելու համար՝ արագ աշխատանքից նրանք հոգնել ու քրտնել էյին:

Կարմիր թաշկինակը գլխին կապած, արագաշարժ Սաջեն ճանապարհ էր դնում գնումներ կատարող գյուղացիներին: Բոլորը նրա հետ խոսում էյին մեղմ ու ժպտալով: Ծանաչում էյին նրանք Սաջեյին, վոր նա յեզդուհի է և կյանք ե մտել համարձակորեն, հերոսուհու քաջությամբ, հակառակ յեզդիների կամ-

քի: Իսկ նա անընդհատ շարժման մեջ եր: Մըշտական ժպիտը թուխ դեմքին, կարմիր թաշկինակի տակ ուրախությունից փայլող սև աչքերի վստահ հայացքով նա խոսում եր գնորդների հետ, կարճ ու ճկուն մարմնի արագ վտտյունով իսկույն խանութի մյուս անկյունից բերում նրանց պահանջած իրը:

Սայրեն ժամերով կանգնում ու դիտում եր աղջկա բոլոր շարժումները: Աղջկա կենսուրախ կյանքը նրան թեւավորում եր, արթնացնում նրա սրտում այնպիսի խինդ, վոր նա յերբեք չեր դաւցել: Ամեն անգամ աղջկանով հրճվելիս նա բոլոր մանրամասներով հիշում եր իր կյանքի տարիները, զրկանքների և անպտուղ աշխատանքի տարիները, աղաների թուքն ու մահակը, կտոր հացի կարոտ որերը և ամուսնուց ու վորդուց զրկվելը: Ու տեսնելով ներկան, նա ուզում եր ամուր գրկել, հենց կոպերատիվում գրկել Սաջեյի գլուխն ու սեղմել իր կրծքին: «Յես քո ջանին դուրբան, լաո՛, յես քո ումբրին դուրբան, լաո՛...» շշմում եր նա. «Ուր հինը, ուր ներկան, վոր հովվի կինը քաղաքի կարած վտտնաման հագնի՝ ով եր տեսել... Սափանվի, խափանվի հինը...» միշտ մտածում եր նա: Թվում եր նրան, թե աշխարհի ամենաանհոգ ու բաղդավոր մարդն ինքն ե: Ել ո՞վ կա իրենից լավ ապրող: Սաջեն թաղա կոչիկներ ունի, նոր շոր, ինքը նույնպես հագնված ե, ել ի՞նչ կուզի:

— Ընկե՛ր Սաջե, մի սապոն տուր, սապոն... կանչում եր գյուղացիներինց մեկը խառնված մարդկանց յետևից: Սայրեն յերբ յտում եր իր աղջկա անունը, շշմում եր ուրախությունից, իր վողջ եյությամբ դառնում ուրախություն:

— Համեցե՛ք, պատասխանում եր, Սաջեն սապոնն ուզողին և ուրիշի կողմ ե թեքվում՝ նրան պատասխանելու:

Յեղդիները գնումներ կատարելիս մյուս գործակատարների մոտ եյին գնում, Սաջեյից ամեն կերպ խուսափելու, համար:

— Ախպե՛ր, մի խատ սըփիչկա տաս,— դիմում ե հովվուհին մի գործակատարի, անհամարձակ ու վախվսելով:

— Սաջեյի մոտ գնա,— պատասխանում ե նրան գործակատարը: Հովվուհին՝ Չարեն յերկար սպասում ե: Նա չի ուզում Սաջեյի մոտ գնալ: Չե՞ վոր Սաջեն եր, վոր յեղդիների նամուսին քար պցեց, չլսեց աղային և յերեսի ամոթն ու նամուսը ցած թափեց: Սաջեն նայում ե Չարեյին ու ժպտում քթի տակ: Իսկ յերբ գործակատարներն իմացան, թե ինչո՞ւ համար Չարեն Սաջեյի մոտ չի գնում ապրանք գնելու, փըրթկացին ու սկսեցին կատակել: Չարեն ամոթից կարմրեց, բաղնիքից նոր դուրս յեկած կնոջ նման, ու վերադարձավ առանց «սըփիչկա» ուղելու, չլսելով գործակատարնեքի կանչը: Չմշիբի քույրը՝ Չինեն, յերբ ամաչելով կոտպերատիվ եր մտնում «սըփիչկա» կամ

«չաքըր» գնելու, նույալես Սաջեյի մոտ չեք
գնում, ուրիշ գործակատարի յեր գիմում ու
ստանալով պահանջելիքը, վախվխելով դուրս
եր շտապում:

Այսպես անցնում էյին որերը...

10

Առավոտ եր: Ընկերների հետ կոպերա-
տիվի խանութը, բանալու յեր գնում Սաջեն:
Ծիծաղում ու խոսում էյին նրանք որվա խնդիր-
ների մասին: Հասմիկը, առավոտվա պես
պարզ, ուրախացնում եր բոլորին: Խմբով քայ-
լում էյին նրանք, յերբ մյուս փողոցով դեմ
առ դեմ գալիս եր Նադոն: Յերբ նա տեսավ
Սաջեյին ու մյուսներին, դեմքը թթվեցնելով,
հայացքը գետնին հասեց ու չհեռացնելով աչ-
քերն իր վտուքերի վրայից, անցավ նրանց մո-
տով, շարժվող ստվերի նման, լուռ ու ան-
ձայն:

— Աղան յերկնքից խռովել է գետնին ե
նայում, — ասաց Հասմիկն ու բորբորով բարձրա-
ձայն ծիծաղեցին: Նադոն լսեց այդ, ու քիչ
հեռանալով, փնթվնթաց քթի տակ, հայհոյեց
ու ճանապարհը դեպի տուն թեքեց, վանդա-
կում փակված կատաղած արջի հուզմունքով:
Ճանապարհին ծերունի Սուդոյին հանդիպեց ու
նրանք միասին Նադոյի տունը գնացին՝ դար-
դերն իրար առաջ բաց անելու:

— Աշխարհը խրաբ է յեղել, կալե (ծեր-
բուկ), ժամանակը վատացե՛լ, — գիմում է ա-

ղան ծերունուն, — ժամանակը կանանցն է,
կանա՛նցը, բալո՛ (հայր), աշխարհում պա-
տիվ ու նամուս չի մնացել:

Նրանք լռեցին գլուխները տարբերելով ու
քիչ հետո, ծերունին հաղիվ լսելի ձայնով քթի
տակ մրմռաց իր հորինած յերգն աշխարհի
«խըրաբ» լինելու, մեծ-մեծ մարդկանց պատ-
վազուրկ լինելու մասին: Յերբ մեկամաղձոտ
յեղանակով ծերունին վողբում, ափսոսում եր
հնի անկումը: Հնի դառն պարտությունը ճըգ-
մում եր ծերունու սիրտը:

— Փո՛ւչ, անբա՛խտ աշխարհ... Նա-
մա՛րդ, նամարդ աշխարհ, — կրկնեց ծերու-
նին յերգը վերջացնելուց հետո, իսկ Նադոն
համը ծանրությամբ տարուբերեց գլուխն ու
կրկնեց.

— Նամա՛րդ է աշխարհը, կալե՛, նա-
մա՛րդ...

11

Մի քանի աղջիկ հավաքվել էյին Սաջե-
յենց տան դուռը և խոսում էյին ու ծիծա-
ղում: Այդտեղ եր նաև Չարեն: Նա Սաջեյի
բացակայության ժամանակ առիթը բաց չեք
թողնում նրան բամբասելու և պատմում եր,
թե ինքն ի՞նչպես է նրան տեսել հայ տղաների
հետ ծիծաղելիս և նրա ասելով յեղդի կանայք
զայրանում էյին՝ Սաջեյի վրա ու բամբասում,
անվերջ բամբասում, սովորական «կյալրե-
խուլի բա» խոսքերը կրկնելով: Բայց նույն

Չարեն առերես բարեկամ եր Խաջեյի հետ: Բարեկամանալու համար նա ուրիշ շահադրդուություն ունեւր:

Իրիկվանը կանանց ժողով կա, ճառելու յես չե՞, Խաջե, — դիմում ե Խաջեյին կենսութախ մի աղջիկ:

— Դու ճառիր, յես ճառել չգիտեմ, ընկե՛ր Հոխի. . . Ու Հոխիը սրախոսում եր, ծիծաղեցնում:

«Հողը ձեր ժողովի գլխին, անամոթնե՛ր. . . Դո՛ւք ել, ձե՛ր ժողովն ել գետինը մտնեք», — կրկնում եր մտքում Չարեն, փնթփնթում ինքն իրեն ու պտտում իլիկը: Հիմա յեր նա խոսում Խաջեյի հետ, վորովհետեւ նրանից սպասելիքներ ունեւր, վորովհետեւ մի յերկու որ առաջ եր նրանից ստացել մի զույգ չուստ: Բայց դե՛հ, ելի սրտով չեւր խոսում, այդ սպասելիքներից գրավված, խոսում եր նա, բայց դժկամությամբ ու ահամա: Ի՞նչպես գոհ ու պարզ սրտով խոսեր մի «աննամուս, անարգ» աղջկա հետ:

— Խաջեն լավ աղջիկ ա, պատվով, համա ենպես չի նստում ու վեր կենում, ինչպես աղջկան ա վայել, — պատասխանում եր Չարեն Խաջեյի քայլերին կողմնակից մարդկանց, Խաջեյի ներկայությամբ անգամ գովում եր նրան, իսկ յեղդուհիներին չըջանում յեռանդով պատմում եր նա իր «տեսածները»:

Խաջեն ու իր ընկերուհիները ծիծաղում եյին Հոխիի սրախոսելու վրա, յերբ Չարեն

հուզումից այլալվամ ժպտով հարցրեց նրանց.

— Իսկ անձրեւը վո՞րտեղից ե գալիս, վոր ասում եք ասոված չկա, ասե՛ք տեսնեմ. . .

Բոլորը ժպտալով նրան նայեցին, իսկ նա սպասում եր պատասխանի, կարծելով թե հաղթությունն իրենն ե:

— Հապա ինչո՞ւ չեք կարողանում մի ճանճ ստեղծել, յերկնքից ի՞նչու ձյուն ու կարկուտ չեք բերում: Ասոված աշխարհն ե ստեղծել, ձյուն, անձրեւ ու կարկուտ ե թափում, գիշեր ու ցերեկ ե անում, բայց ելի դուք չե՛ք հավատում: Դուք ի՞նչ եք նրա առաջ, խեղճեր, ասոված վոր ուղենա, բոլորիդ մի որում կմեցնի, — վրա յեր տալիս Չարեն, իսկ Հասմիկն ու ընկերուհիները հետաքրքրությամբ լսում եյին: Յերբ վերջացրեց նա, Հասմիկը հավատալով, վոր նրան կարող ե իր համոզումներից հետ կանգնեցնել, սկսեց բացատրել նրան, վոր անձրենն ու ձյունը ծովերից բարձրացող գորրչիներն են, վոր սառչելով ցած են թափվում: «Ձե՞ վոր դու ե ամուսինդ արդեն մի փոքրիկ տղա յեք ստեղծել, փոքրիկ Մատոյին, ել ինչո՞ւ յես ասում ճանճ ստեղծել չեք կարող», — կատակեց Հասմիկն իր յերկար բացատրությունից հետո:

— Անամո՛թ, — ասաց Չարեն ու քրքլաց բարձրաձայն:

— Ստե՛ղծեք, ստեղծե՛ք, վոր կարգվեն, իհարկե, յերեխա կունենան, այն ել ասածու

կամքով է, իսկ դուք վոր զոչաղ եք, առանց կարգվելու ստեղծեք:

— Ինչու չեք ասում, դե ասե՛ք է, հապա յերկի՞րն ով է ստեղծել:

— Վոչ վոք յերկիրը չի ստեղծել, — պատասխանեցին նրան:

— Հապա ինքն իրեն վո՞նց է ստեղծվել, — կրկնեց Չարեն:

— Իսկ յեթե ասովածն է ստեղծել, հապա աստծո՞ւն ով է ստեղծել, — հարցրեցին նրան: Չարեն դայրացավ այդ հարցի համար, ուզում էր հեռանալ, բայց նրանց «հիմարությունը» ծաղրելու համար, պատասխանեց:

— Ասովածն է բոլորին ստեղծել, աստրծուն վո՛չ վո՛ք չի կարող ստեղծել, ամո՛թ ձեզ, մեղք է, վոր եղպես բաներ եք ասում:

— Հապա ինքն իրեն վո՞նց է ստեղծվել, — կրկնեց Հասմիկը, քիչ առաջ արտասանած նրա բառերը:

Չարեն դայրացած լռեց: Մտքում նա հայհոյում ու անխիժում էր բոլորին ու Խաջեյին, վոր նրանց ընկերն է դարձել: Նախատինքի մի քանի խոսքեր ասելուց հետո, խրատելու ձևով դիմեց նա աղջիկներին.

— Մեղք եք, քույր ջա՛ն, ջահել եք, աստված ենպես կքրքրի ձեզ, վոր դուք լալով մեղա գաք, — աղջիկներն անհող ծիծաղեցին, իսկ նա ավելի հուզվեց ու փրփրեց:

Արևն ի՞նչպես է դուրս գալիս ու մտնում, եղ էլ կարո՞ղ եք ասել, — վերստին հարցրեց

նա, համոզված, վոր դրանով գոնե զինաթափ կանի նրանց:

Հասմիկն ահամա ելի սկսեց բացատրել թե ի՞նչպես յերկրագունդը պատվում է արևի շուրջը և իր առանցքի շուրջը և թե ի՞նչպես ամառ ու ձմեռ, ցերեկ ու գիշեր են առաջանում:

Չարեն դրանից վոչինչ չհասկանալով, աչքերը կիսախուռի արած, մտածում էր, թե ինքն ի՞նչ նոր բան ասի:

Յերբ Հասմիկը վերջացրեց, Չարեն ելի հրհռաց հիմարական ծիծաղով: Նա այնպես բարձր էր ծիծաղում, վոր կարմրեց ծիծաղի ուժից ու հետո, լրջանալով՝ իրեն ամենագետ մարդ համարողի սնապարծությամբ սկսեց պատմել շեյխի ասածները. «Ասովածն իրիկունները ձեռքն արևի վրա յե դնում ու որը գիշերանում է, իսկ յերբ վերցնում է ձեռքը ցերեկ է լինում: Ամեն ինչ աստծու կամքովն է, թշվառնե՛ր, դուք ի՞նչպես չեք վախենում, յերբ նրան դեմ՝ եք խոսում: Այ, յես ել կմեղավորե՛մ, յես ել, վոր անհավատների հետն եմ խոսում: Խոսողը մեղավոր չէ, լսողն է մեղավոր, լսողը...»: Այս անգամ ավելի հնչեղ ձայնով ծիծաղեցին նրա վրա: Չարեյի դայրույթն արդեն սահմանն անցել էր: Նա շփոթված ու կարմրած, հեռացավ նրանց մոտից՝ բարձրաձայն հայհոյելով:

Չարեն, ճանապարհին հանդիպեց աղայի

կնոջը, վոր նրան կանգնեցրեց ու բարկացած
ասաց .

— Մեկ էլ դու գնացել ես ե՞ղ լրբերի մոտ,
աղայիդ կասեմ մազերդ պոկի, քառասուն գըն-
դակ լցնի փորդ, դու յե՛լ ես կապդ կտրել, չե՞
վոր դուրս կգանք սարը: Կարծում եք բայլ-
չեփկներին կվախենա Նադոն, իրիկվանից
մինչև առավոտ բոլորիդ պանրի նման կբրդի՞,
կբրդի՞ . . .

Ընդունելով նրա նկատողութունն ու խեղ-
ճանալով նրա առաջ, Չարեն սկսեց պատմել,
թե ինչի մասին էյին խոսում նրանք, վորի հա-
մար ինքը խոտվեց ու յեկավ: Աղայի կինն
ավելի բարկացավ նրա վրա ու կարդազրեց,
վոր ել Խաջեյի հետ չխոսի, սպառնալով Նադո-
յին ասել:

— Անամո՛թ, լի՛րբ, գնացել կոմսոմոլ ա
յեղել, քո հերը բալի գյուռի մեջ իր թևերը
կրծի լաո՛, թո՛ւ, թո՛ւ քո պատվին ու նամու-
սին . . .

Ինքն իրեն խոսում եր աղայի կինը:

Ամեն անգամ, յերբ խոսում էյին Խաջեյի
մասին ու բամբասում, Խաջեն չլսելու յեր
տալիս, միայն աղայի կնոջն եր նա պատաս-
խանում և այն ել խոսութեամբ: Մայրն եր
միայն վեճի բռնվում իր աղջկան բամբասող-
ների հետ ու հայհոյում նրանց: Նա այնքան եր
արիացել, վոր մի որ ել հայհոյեց իրապես վա-
խենալով Խաջեյից, միայն ասել էյին .

— Խորտակվի՛ր, փչացի՛ր ելի, աշխարհ,
այնանդ հասանք, վոր մեր կեղտոտ կյաբա-
նին՝ Սայրեն ել ե մեզ հայհոյում . . .

Իսկ յերբ մյուսների հետ եր հայհոյանքի
բռնվում Սայրեն, Խաջեն միշտ աշխատում եր
դսպել մորը:

Չաջիդի մայրն ու քույրն արդեն սկսել
էյին անտարբեր դիրք բռնել, շատ քիչ էյին
մասնակցում բամբասողներին: Բացի դա,
նրանք արդեն կամաց-կամաց սկսում էյին
դժգոհել աղայից: Աղայի կինը մի յերկու
անգամ իր ամբողջ զայրույթը նրանց վրա յեր
թափել, հայհոյել եր նրանց ու արգելել, վոր
իրենց տունը գնան: Իսկ դրա առիթը յեղել եր
այն, վոր աղան Չաջիդի հովվական վարձի հա-
մար վատ գառ եր տվել, իսկ Չաջիդը լալն եր
ուղել: Դրա համար աղան բարկացել եր, գայ-
բացել, վոր իր հովիվն առարկել եր իր խոսքի
գեմ և ծեծել ու հայհոյել եր Չաջիդին, իսկ
իր կինը Չաջիդի մորն ու քույրը հայհոյելու
իր պարտականութունն եր կատարել և՛ մի
քանի անգամ: Հայհոյելու ժամանակ խանու-
մը Չաջիդի մորն ասել եր .

— Գնացե՛ք, գնացե՛ք ձեր հարսին տեր
յեղեք, վոր ուրիշի գրկումն ե լինում, վոր
հայ տղաներին ե կին դարձել, դուք ել լեզու-
ներդ հանեցիք մեզ վրա, տաքացած ոճեր . . .

Չաջիդի մայրն ու քույրը՝ Չինեն ել կա-
րող էյին նրան պատասխանել, հենց թեկուզ

նրա աղջկա մասին ակնարկելով, բայց չուել եյին...

Լուել եյին: Բայց Ջմշիդի մայրն ամոթի ու հուզմունքի մեջ եր, խանութի ասածն ուժեղ ապտակ եր յեղել նրա ինքնասիրությանը:

12

Գյուղխորհրդի ժողով եր: Նախագահը չէր կարողանում զսպել աղմուկը: Վիճում եյին, խառնվում իրար: Ամեն մեկը կարծում եր, վոր իր կարծիքն է ճիշտ և պետք է անպայման ընդունեն, ու պնդում եր, աղմկում:

— Լսեցեք, ընկերներ, եղպես չի՛ կարելի, ով ուզում է, առանց նախագահի սկսում է վիճել: Ժողովը մի ըուպե խանգարվում է, վոր հետո ելի աղմուկն սկսվի:

— Չայնը տրվում է ընկ. Հասմիկին, — հայտարարում է նախագահը: Հասմիկը կարմրած դեմքով կանգնում է, բլուկ-նոտի մի թերթիկ ու մատիտ ձեռքում բռնած:

Հասմիկի կողքին նստել է տասնութամյա մի աղջիկ, կլոր ու թուխ դեմքով, զթի վրա մի նեղլիկ անցք: Թվում է, վոր նա փոքր հասակում մի ծաղիկ է հանել այդ անցքի տեղը: Նրա կրծքին, կիսահամաչ վերարկուի վրա, փայլում է կոմսոմոլի նշանը: Գրուխը կախ, ամաչկոտ ժպիտով լսում է բոլորի խոսքերը, յերբեմն էլ կարմրած դեմքով լըրջախոհ հայացքը սևեռում խոսողի վրա, ու

վերարկուի թելի հետ ելի կախում գլուխը: Հասմիկը խոսում եր վոգևորված ու կրահոտ:

— Այո՛, ընկերներ, պետք է աշխատել յեղդի բատրակներին ու բատրակուհիներին էլ գիտակցության բերելու, վորպեսզի պայմանագիր կնքեն վարձողների հետ: Նրանք դեռ շահագործվում են իրենց անգիտության պատճառով, մենք պետք է պաշտպան կանգնենք նրանց:

Բոչորի դեմքի վրա ուրախ ժպիտներ եյին խաղում, յերբ Հասմիկը վերջացրեց:

— Ընկերներ, խոսքը տրվում է ընկ. Խաջեյին, — ասաց նախագահն ու նստեց իր տեղը:

Խաջեն վոտքի կանգնեց և ուզում եր խոսել, յերբ նույն ըուպեյին դուռը չրխկալով բացվեց ու ներս մտավ մի միջահասակ յերիտասարդ, արյունլվա դեմքով... Բոլորը նրա վրա վազեցին ու ժողովը խառնվեց իրար: Յերբ Խաջեն նրան տեսավ, ճչաց և վայրկյանապես գունատվեց, վոտքերը թուլացան ու նստեց նստարանի վրա: Ներս մտնողի գըլխի մազերն արյունոտ եյին ու գզգզված:

Նրա այտերի վրա տեղ-տեղ մաշկը պլոկ ված եր, վորտեղից կաթիլ-կաթիլ դեռ դուրս եր դալիս կիսակարմիր հեղուկը, իսկ գլխի ջարդվածքից հոսած արյունը չորացել եր մազերի մեջ և ունքերի վրա: Նրա շորերը գզգզ ված եյին: Նրա ձեռքին մի մահակ կար, վոր ներս մտնելուն պես բռնեց ձախ ձեռքով և ա-

Ըով ցույց տվեց գլխի ջարդվածքը, նրանից հոսող արյունն ու իր կտրտված շորերը: Լա-
ցակումած ձայնով նա դիմեց գյուղխորհրդի
նախագահին.

— Ընձի սպաներ ե, նախագահ ջան, յես
մեռել ե, ընձի հեչ հալ չմնացեր ե,— ու լացը
գսպելով շարունակեց,— չա՛տ, շատ տըրիես
ինձի, նախագահ ջան, հեչ հալ չմնացեր ե:

Գյուղխորհրդի բոլոր անդամները հերթով
նայեցին նրա գլխին: Ահագին ճեղքվածքը,
վոր առաջացել էր մահակի մի ուժեղ հարվա-
ծից, և արյունոտ մազերն ու արյունի մեջ
թաթախված նրա դեմքը գիտելիս մարդու
մարմինը փշաքաղվում էր ու սիրտն ատելու-
թյամբ լցվում վոճրագործի հանդեպ:

Գյուղխորհրդի գրասենյակը լցվեց մարդ-
կանցով: Բոլորն էլ մոտենում, նայում էլին
նրա գլուխն ու հայհոյանքներ ուղղում ծեծո-
ղին: «Ո՞վ ե խփել, եդ ի՞նչ ե յեղել»,— հարց-
եում էր յուրաքաչյուր նոր ներս մտնողը:

Յերբ նախագահը նայեց իր յետև, էլի
նրա մարմինը փշաքաղվեց ու մնաց չձամբ:
Խաջեն դեռ նստած էր իր տեղում, դադաղում
պառկած մարդու գունատ դեմքով: Նա սպի-
տակել էր լվացված քաթանի նման, այն-
պես վոր նայողը կկարծեր, թե յերկարատև
հիվանդությունից նոր էր վեր կացել:

— Եդ ի՞նչ ե, Խաջե, քեզ ի՞նչ ե պատա-

հել—բացականչեց նախագահը և նրա ձեռքը
բռնելով կանգնեցրեց նստած տեղից ու կան-
չեց Համիլին, վորն իրարանցումին խառնը-
վելով, մոռացել էր ընկերուհուն: Համիլը
դուրս տարավ Խաջեյին, իսկ նախագահը
գյուղացիներին խնդրեց, վոր ազատեն գրա-
սենյակը քննություն կատարելու համար:

Յերբ գյուղի կատարածունները Նադոյին
գրասենյակ բերեցին, նրանց հետևից վազե-
լով գրասենյակի բակը մտան նաև Ջմչիդի
մայրն ու քույրը: Մայրը գոռում էր ամբողջ
ձայնով ու հայհոյանքներ ողղում Նադոյին:
Հայհոյում էր նա Նադոյին, վորին յերբեկ-
ցե մտքումն իսկ չէր հայհոյել, չնայած առա-
ջին անգամը չէր, վոր Նադոն ծեծում էր իր
վորդուն: Ջմչիդին տեսնելով, ձեռքերով
խփեց իր գլխին, գոռաց հայհոյելով ու ընկավ
գետնին:

«Քր բեխերը... քո հերը... շուն... ա-
նամթ շուն... հայհոյում էր նա առանց ընդ-
հատելու: Նադոն փրփրում էր, ատամները
կրճտեցնում ու սպառնալիքով շարժում գլու-
խը:

— Հանդիստ պահիր քեզ, քաղաքացի Նա-
դո, և իմացիր վոր սարումդ չես,— դիմեց
նրան նախագահը բարկացած, յերբ նա պա-
ռալի հայհոյանքներին ուղում էր պատաս-
խանել Ֆիդիքական ուժով:

— Մի գդա, թե բոլորը քո ստրուկներն
են, ինչպես զդացել ես միշտ,— կրկնեց Հա-

միկը, — հետո դատարանում կխոսենք, սրա-
նով չի վերջանա:

Նադոն վոչինչ ասել չեր կարող, ինչպես
կապած դամիւրը մարդու կծել չի կարողանում
և կրծոտում է իր շղթան: Իսկ Ջինեն՝ Ջմչիդի
քույրը՝ գրասենյակի դռանը կանգնած հեծ-
կըլտում եր աղիողորմ, լաց լինում հոնգուր-
հոնգուր: Հասմիկի հետ գրասենյակից դուրս
գալով Սաջեն մոտեցավ Ջինեյին ու գրկելով
նրա գլուխը, շնջաց քրդերեն լեզվով.

— Լաց մի յեղիր, խուշկ ե՞ ջան, մի լա
իմ քույր Ջինե...

Ջինեն ամոթից զսպեց լացն ու գլուխը
կախեց: Խաջեյին թվում եր, վոր լուռ մի
կարոտ, անհազ մի սեր կա Ջինեյի մեջ դեպի
իրեն, վոր արտահայտվում է միայն լուռ-
թյամբ: Յեվ իրապես սիրում եր նա Սաջեյին:
Իսկ վոր միշտ հայհոյում եր, հայհոյում եր,
նրա համար, վոր բոլորը ինչպես նաև իր մայ-
րը, սովորություն եյին դարձրել Սաջեյին մըշ-
տապես հայհոյելը:

Ջմչիդին վոչինչ չի յեղել, քույր ջան,
լաց մի յեղիր, մենք աղայից ավելի խիստ
կերպով այդ վրեժը կառնենք, — կրկնեց Սա-
ջեն շոյելով Ջինեյի գլուխը:

Ներսում Ջմչիդի մայրը դեռ հայհոյում
եր Նադոյին ու լաց լինում:

— Ընկեր նախաքա, իրավունք ունե ընձի՞

քրվե, — արդար յերևալու տոնով նախագահին
դիմեց Նադոն:

— Իրավունքի մասի՞ն ես խոսում, իսկ
դու իրավունք ունեյի՞ր նրա վորդու գլուխը
ջարդելու...

Նադոն լուց: Քույրը գլխից իջեցրեց ու
նրա տակը տալով իր սև մագերը՝ նորից գր-
լուխը դրեց: Նրա թուխ ճակատը փայլում եր:
Գեմքի վրա մռայլություն չկար: Այնպես,
վոր սպասելի չեր այդպիսի բարեկազմ ու մեղմ
արտաքին ունեցող մարդուց այդորինակ դա-
դանային գործ:

Նախագահը՝ յերբորդ անգամ խնդրեց
Ջմչիդի մորը վոր լուի, կամ դուրս գա գրա-
սենյակից, վորպեսզի հարցաքննություն կա-
տարեն: Յերբ մայրը դուրս յեկավ ու Սաջեյին
տեսավ իր աղջկա մոտ կանգնած թեքվեց մի
կողմ, նրան չնայելու համար: Իսկ Սաջեն
Հասմիկի հետ մտավ գրասենյակ հարցաքն-
նությանը ներկա լինելու:

Յերբ պարզվեց, վոր Նադոն Ջմչիդին
ծեծել է հովվական վարձի համար, Սաջեն
վճռահանությամբ դիմեց նախագահին.

— Ընկեր Լեոն, ինձ վկա գրիր, յես տեղ-
յակ եմ թե դարնանը վարձն ինչպես են խոսել:
Այդ ժամանակ յես ել սարումն եյի:

Նադոն ու Ջմչիդը նրան նայեցին: Մեկն
ամաչելով, մյուսն ել վախի զգացմունքով:

Հասմիկի ու Ջմչիդի հայացքները հան-
դիպեցին իրար: Ջմչիդը գլուխը կախեց. նը-

¹ Քույրիկ:

րան թվում եր, վոր Հասմիկն իրեն ուզում ե
ասել: «Այ, Ձմշիդ, այդպես կլինի, աղային
լսում եյիր ու ինձ մեղադրում, տեսնո՞ւմ ես
վերջն ինչպես յեղավ, իսկ հիմա յես ելի պաշտ-
պան կկանգնեմ քեզ, իսկ աղան քեզ մի՛շտ,
միշտ թշնամի կմնա...»

Գյուղխորհրդի նախագահը հարցաքնն-
նեց կողմերին ու վկաներին, Նազոն կալանա-
վորվեց ու գործը արվեց դատարան:

Գրասենյակից դուրս յեկան այնտեղ յե-
ղողները: Ձմշիդի մայրն ելի սկսեց բարձրա-
ձայն հայհոյել: Ձմշիդն առաջ—առաջ քայ-
լում եր, իսկ մայրը Ձինեյի ձեռքը բռնած,
հայհոյում եր, ու նրանք տուն եյին գնում:

Ձինեն հետ եր դառնում մեկ—մեկ ու նա-
յում, Հասմիկին ու Խաջեյին տեսելու, ու
ամաչելով թեքվում, դեպի մայրը, յերբ նը-
րանց հայացքն եր հանդիպում:

— Գուրե ջնո՞ւ՛... Սայե ջնո՞ւ՛... լավում
եր Ձմշիդենց տան կողմից նրա մոր ձայնը:

13

Հասմիկն եր ժողովի նախագահը: Այդ-
որվա ժողովը տարբերվում եր մյուս ժողով-
ներից: Արտակարգ մի հետաքրքրութուն եր
նկատվում բոլորի դեմքերի վրա: Հասմիկը
հերթով ձայն եր ապրիս բոլորին. յեթե լինում

¹ Կատաղած գայլ:

² Կատաղած ջուն:

էյին սխալներ, նա ժպտալով ուղղում եր ու-
բացատրութուններ եր ապրիս:

Յերբ բոլորը խոսեցին, հերթն իրեն հա-
սավ: Նա սանրով հետ տարավ մաղերը և ժրպ-
տալով սկսեց.

— Ընկերներ, վո՛չ մի որ մենք չենք ու-
բախացել այնպես, ինչպես այսօր: Այսօր, մեր
կողքին, մեզ հետ ժողովում նստել են մեր յեզ-
դի ընկերուհիները: Նրանք, վորոնց այսքան
չատ ժողով գալը մեր մտքով չեր անցնում:
Իայց մենք աշխատում եյինք, մենք հավա-
տում եյինք մեր գործին ու մեր աշխատանքն
իզուր չանցավ, ուրեմն ինչպես չուրախա-
նանք...

Նրա խոսելու ու շարժումների հետ Սայ-
րեն շարժում եր իր գլուխը, նրա սիրտը լրիվ
ուրախությամբ եր լցված: Իսկ Ձմշիդի մայրը
լուռ լսում եր միայն, չհասկանալով, թե ի՞նչ
են ասում: Ու Ձինեն, վոր նստած եր Խաջեյի
հետևում, ամաչում եր անգամ գլուխը բարձ-
րացնել վերև նայելու: Չեր կարողանում նա
ձեռքերը մի հարմար տեղ դնել. փորձում եր
ծնկների վրա դնել, իրեն անհարմար եր թվում,
դնում եր նստարանի վրա, կարծում եր վոր
կծիճաղեն: Պլիկներն ու գնդիկները կախ-
ված եյին նրա պարանոցից. նա այնքան եր
ամաչում, վոր ճակատից զրախնքի կաթիլնե-
րը, ճակատի կլոր ու փոքրիկ մետաղների նը-
ման սպիտակ, ցած եյին գլղլում: Չարեն սա-
ռըն հայացքով նայում եր ամեն խոսողի շըր-

Թունքների շարժումներին, աչքերին, ձեռքերի
Թափահարումներին ու անմիտ հայացքը դա-
մում եր մի կետի, աչքերը յերկար ժամանակ
նրանցից չհեռացնելով: Չարեն այնպես եր շըշ-
մել ու ինքնամոռացության մեջ թաղվել, վոր
չեր գգում, թե ի՞նչ ե կատարվում իր շուրջը:

Բոլորը խոսեցին: Վողջունեցին նոր կյանքի
չեմքը մտած յեզդուհիներին: Բոլորից հետո
խոսեց նաև Սաջեն: Ամբողջ ժողովը ծափա-
հարեց նրան. «Ուռուս՝... ուռուս՝... մեր քույ-
րերին», ծափահարելով կանչեց կոմյերիտա-
կան Արամը և բոլորն արձագանքեցին նրան:
Յերբ քիչ լուռ եյին, Սաջեն փորձում եր շա-
րունահել, բայց ելի ծափահարում ու նա ընդ-
հատում եր: Գլուխը կախած, հայացքը գետ-
նին հառելով, դեմքը կարմրած, մատներն ի-
րար եր քսում նա ու սպասում ծափերի վեր-
ջանալուն: Այս անգամ եր միայն Ձինեն գլու-
խը բարձր պահած նայում: Ժողովի ծափահա-
րությունները նրա ներքին աշխարհը լցնում
եյին հրճվանքով ու համակում նրան անձայն
ուրախությամբ:

Ծափահարությունները մեղմացան, Սաջեն
սկսեց: Նա խոսում եր քուրդ կանանց մասին,
նրանց ել կին պատգամավորական խմբակի մեջ
ընդունելու մասին:

— Գուրդ աշխատավոր կինը, շատ, շատ
ե ճնշվել ու հայհոյվել խանութների կողմից,
ինչպես և նրանց ամուսիններն են ծեծվել, վոր-
պես անասուններ: Այդ ճնշումներից ազատվե-

լու ժամանակն ե և մենք ազատվում ենք, մենք
ազատվում ենք և անհաշտ պայքարի յենք դի-
մում հնի դեմ, — այսպես վերջացրեց Սաջեն
ու ծափերի, ուրախ բացականչությունների
տակ ժողովը փակվեց:

Այդ որը պատգամավորական խմբակի ան-
դամ դարձան ժողով յեկած յեզդուհիները...

14

Յերբ նրանց ճանապարհ դնելուց հետո
Հասմիկն ու Սաջեն վերադարձան, Հասմիկն
ներքին անհուն մի ուրախությամբ հարցրեց.

— Դե՛, շուտ պատմի՛ր, Սաջե ջան, այդ
ի՞նչպես, ի՞նչպես հաջողվեց: Յես հենց այսօր
քաղաքից վերադարձա ու շատ անակնկալ կեր-
պով նրանց ժողովում տեսա:

Ու Սաջեն, ինքնարավականությամբ, իր
հաղթանակով հրճված, սկսեց պատմել:

«Ինձ համար ել յերազ ե թվում, Հասմիկ,
և դեռ անհավատալի: Ո՞վ կկարծեր, ո՞վ կհա-
վատար, վոր վրանի ներսից բացի աշխարհ
չտեսած, աշխարհի մասին չիմացած յեզդի
կինը ժողով դար: Նրանց համար ժողով դալն
այնպես եր ծանր, ինչպես յեզդի շեյխերի,
դավալների, փիրերի՝ և աղաների համար մահն
ե ծանր: Գու տեսա՞ր, ինչպես շփոթվել ու
կարմրել եյին նրանք: Գիտե՞մ, վոր նրանք
կարծես վախենում եյին: Բայց ներքին մի մը-

¹ Յեզդի հոգեվորականներ

դում ստիպում եր նրանց անպայման ժողով դալ: Այդ մղումի մասին կասեմ քեզ, այդ դրդապատճառը յեթե չլիներ, գուցե շատ ու հաջողվեր նրանց հասկացնել այն, ինչ վոր հայ աշխատավոր կիսն արդեն հասկացել ե: Մանավանդ Ձինեն: Համիկ, զգում եյի, վոր այդ աղջիկը վերջերս շատ անկեղծ ե սիրում ինձ, աղբյուրի նման պարզ այդ աղջիկը: Ինչքան ատում եմ Ձայնեյին, նույնքան համակրանք կա իմ մեջ Ձինեյի, վերջին որերի Ձինեյի նկատմամբ: Վերջապես՝ հաջողվեց նրանց ժողով բերել, վորն սկիզբն ե այն աշխատանքների, վոր մենք հետո պետք ե կատարենք նրանց մեջ, իսկ այդ սկզբնական քայլի հաջողութունն սկսվել եր դեռ չուտ, սրանից մի քանի շաբաթ առաջ:

Յեվ այդ բոլորն այսպես յեղավ:

Յերբ Ձմչիզն արյունլիա գյուղխորհուրդ մտավ, դու հիշում ես չե՞, թե ինչքա՞ն վատ յեղա յես: Հենց այդ որվանից սիրտս ե՛լ ավելի ցավել սկսեց նրանց համար: Վոր Ձրմչիզի գործին վկա գրվեցի, յեզդիներն ելի իրենց բամբասանքի ճամբան սկսել եյին սկզբից, իսկ Ձմչիզի մայրն ու քույրը, նրանց հետ ե Ձարեն (դու նրա ամուսնուն ճանաչում ես չե՞, Ձմչիզի հովիվ ընկերն ե, անունը Համգո). — Համիկն հավանության նշան արեց. — Ձմչիզի մայրը, քույրը ե Ձարեն իմ արածի մասին հիացմունքով եյին խոսել մի քանի հայ

կանանց մոտ: Արդեն զգացվում եր, վոր աղայից յերես եյին թեքել ու կրելով մեր պայմանների ազդեցությունն ել, ատելությամբ եյին լցվել դեպի նա ե սպասում եյին դատին, իսկ այդ դատը, վերջապես յեղավ: Դու դատարանում լինեյիր, Համիկ, վորքա՞ն, վորքա՞ն կուրախանայիր: Արամն այնտեղ եր: Նա ուրախությունից իր տեղում հանգիստ նստել չեր կա բողանում: Յերբ դատարանն ինձ կանչեց վորպես վկայի, այսպես սկսեցի. «Առաջին անգամը չե, ասացի, վոր Նազոն դրան ծեծում ե: Ծեծել ե միշտ, ինչպես վոր միշտ իր վարձկան յեզդիներին ե ծեծել: Այո՛, ասացի, — յեզդի ժողովուրդը նրա աչքին դեռես հոտի յե հավասար, լոող ու անապստամբ: Մեր դատարանը պետք ե ցույց տա նրան, վոր բատրակների հովիվների դավրանն¹ ե հիմա: Իսկ այս անգամ ծեծել ե դրեթե առանց պատճառի: Յես ներկա յեմ յեղել, ե բոլոր յեզդիներն ել դիտեն, վոր դարնանը քաղաքացի Նազոն խոտացավ վեց դառ տալ Ձմչիզին հովության վարձ, բայց չորս դառ ե ավել, իսկ յերբ Ձրմչիզը պահանջել ե իր լրիվ վարձը, նա, ըստ իրեն հին սովորության, վորին դեռ կառչած ե, այդպես ծեծել ե Ձմչիզին: Վորպես տեղյակ այդ գործին, ասացի, խնդրում եմ խիտ լինել: Յես հավատում եմ, ասացի, վոր խորհրդային դատարանը խիտ կլինի»: Սոսեյուց հետո, յերբ Ձմչիզի դեմքին նայեցի, նա ճնըչ-

¹ Դավրանն ե — մամանակն ե:

վեց իմ առաջ ու դեմքի զղջումի արտահայտութեամբ գլուխը կախեց: Սրտումս առաջացավ մի վառ զգացմունք, յես սիրեցի այնպես, ինչպես սիրել եյի մի տարի սրանից առաջ, յերբ նշանվեցինք... Յերբ դուրս յեկանք դատարանից, նա ամանչում եր յերեսիս նայել: Խուսափելով մեր մոտիկութունից, նա առաջ անցավ մեր շարքից ու առաջ-առաջ գլուխ յեկավ: Անզուսպ խինդն եր յեռում նրա սրտում: Յես այդ նկատեցի այն ժամանակ, յերբ դատավորն հայտարարեց, վոր Նազոն տուգանվում է յերեքհարյուր ուրբով: Ձմչիդն այդ խոսքերը լսելիս՝ հրճվանքից անհանգիստ շարժումներ եր անում: Նա ուրախ եր, բայց նրա դեմքի վրա կարելի յեր կարդալ նրա հոգում անսահման հուզմունք: Յեվ ուրախ եր նա, և հարկադրված մտածելու ինչ վոր բանի մասին...

Հետևյալ օրը, յերբ յերեկոյան տուն գրնացի, զարմանքս շատ յեղավ, վոր Ձմչիդի մորը՝ Փարիշանին, Ջինեյին ու Ջարեյին մեր տանը, մորս կողքին նստած տեսա: Յերբ ներս մտա, նրանք կարծես քաշվեցին ինձանից ու բորբով միասին վտարի կանգնեցին: Չիմացա, թե մենք ինչպես խոսեցինք իրար հետ: Հենց խոսելու առաջին րոպեյին զգացի, վոր նրանց վերաբերմունքը փոխվել եր: Անկեղծ, մտերմական զգացմունքներ եյին արտահայտում նրանք ինձ հետ խոսելիս:

«Նստի՛ր լառ, դուրբան քեզ»,—այս խոս-

քերով դիմեց ինձ Փարիշանն առաջին անգամ: Ջինեն ելի ամաչկոտ գլուխը չեր բարձրացնում, իսկ Ջարեն միշտ նայում եր ինձ ու ժպտում: Յես ել չափից շատ ուրախ եյի...

Յերբ նրանք գնացին, մայրս պատմեց ինձ, վոր Ձմչիդն եր նրանց ուղարկել մեր տունը: Իատարանից յերբ վերադարձել եր նա, հուզմունքից լաց եր յեղել ու հետո ստիպել մորն ու բրոջը, վոր դան մեզ մոտ:

— Ձմչիդը շատ է տանջվում քեզ համար, բարխո ջան¹, ախոսս է նա, լառ, չթողնենք, վոր մեր նամուսը շանը նետվի,—համոզում եր մայրս գլուխս շոյելով:

— Նա յե իմ փեսան, ասում է, Խաջե, ի՞նչ ել ուզում է լինի, դու պետք է մեր պատվին դեմ չգնաս: Յես ամաչեցի մորս պատասխանել, ծիծաղեցի ու կախեցի գլուխս:

Այդ յերեկո մայրս ինձ գոռով Ձմչիդենց տունը տարավ: Յես ճնշվում եյի, Ձմչիդի մոտ գնալ չեյի ուզում ու շատ ել կարմրեցի յերբ նրանց տունը մտանք: Բայց Ձմչիդն ավելի շատ շիտթվեց: Նրա կարմիր, սարեցի հովվի այտերը հալված մետաղի գույն ստացան: Նա խուսափում եր մորս ու իմ հայացքցան: Ամենից առաջ յես զրույց սկսեցի Ջիներից: Ամենից առաջ յես զրույց սկսեցի Ջինեյի հետ մեր մասին, մեր ժողովների մասին, կոմսոմոլի մասին: Ջինեն խելոք գառան նման լսում եր ինձ, յերբեմն ել միտքն ուրիշ բանով զբաղված: Իսկ Ձմչիդը լուռ եր, նա գերի

¹ Գառնուկ ջան — փառաբանական խոսք է:

յեր դարձել իր մտածմունքներին ու ամփոփվել էր իր մեջ: Ամեն անգամ, յերբ պատահաբար մեր հայացքներն իրար ելին հանդիպում, ինձ թվում էր, վոր նա ուզում էր ասել. «փոշման եմ», բայց չի վստահում: Պարզ ասած, Համիկ, շատ ել գեղեցիկ է Ձմչիզն ու խելոք: Դեհ ինչ արած, աղային պետք է լսեր, վորովհետև դեռ դասակարգային դիտակցութուն ու թշնամանք չունեն: Այն ելի ասում ուրեմն, վոր նա վոչ վոքի հետ չեր խոսում, բուռ էր, նա մտքում յերևի նոր էր չափում՝ թե ո՞վ է բարում՝ գոմերում Ձայնեյի ու իր հովիվ ընկերների թավալումները...

Կամ հիշում էր գուցե, վոր աղալում, վոչ խարների մեջ, լուսնյակ գիշերին տեսել էր Ձայնեյին իր հովիվ ընկերոջ թևերի վրա, կամ գուցե հիշում էր ձորից հանած ընկեցիկի փոքրիկ դանդը շան բերնում... և համոզվում էր, վոր ինքը սխալ է յեղել աղաների ընտանիքների այլանդակութուններն ու բարոյական անկումը տեսնելով հանդերձ, պահել է իր մեջ նրանց նկատմամբ յեղած համակրանքը:

Յերկար խոսեցինք:

Բայց ելի չեմ հիշում, թե ինչպես յեղավ վոր յես ու Ձմչիզը խոսեցինք իրար հետ: Նա ինչքան էր փոխվել... Աղայի մասին զրլանքով էր խոսում: Մենք խոսում էյինք իրար

հետ առանց իրար դեմքի նայելու, յերբ նայում եյի նրա աչքերին, նրա դեմքը վայրկյանապես շիկանում էր:

Մենք առաջվա նման մտերմացանք:

Իսկ այսօր գնացի, խնդրեցի վոր ժողով դան: Փարիշանն անախորժութուն զգաց, բայց վորովհետև շատ խնդրեցի, խաթրս չկոտրելու համար անվստահ ու ամաչկոտ հետս ժողով յեկավ, յերբ մորս ել բերեցի: Յեթե իմանաս ինչքան է ուրախացել սիրտս, Համիկ, թվում է ինձ, թե ամբողջ աշխարհն է խորհրդային դարձել և վոչ թե մի յերկու յեզդի կին են ժողով յեկել, վոչ թե մի յերկու կին են կանանց կազմակերպության մեջ մտել... Մի քանի հոգ յեն, բայց մեծ է, մեր հաղթանակը մեծ է: Ուրիշ անգամ յե՞րբ է քուրդ հովվուհին հասարակական կյանք մտել... — Վերջացրեց իմ ջեն: Բարձր վոզեւորութունից թեւովորվել էր նա:

— Այս բոլորն անհավատալի յե թվում ինձ, յերազ, — ելի կրկնեց նա:

— Կեցցես, իմ ջեն, կեցցես. տեսնում ես ինչպես անվհատ աշխատանքի արդյունքն լինում է հաղթութունը: Հիշում ես մեծ մարդկանց ասած խոսքերը, վոր յես կրկնում եյի միշտ. «շարունակիր քո քանապարհը և քող միշտ. «շարունակիր քո քանապարհը և քող մարդիկ խոսեն, ինչ կուզեն», իսկ դու յերբեմն հուսալքվում եյիր, յերբեմն վատատես եյիր հաղթանակի նկատմամբ. — Համիկը հիայեի էր իմ ջեյի վոզեւորված աշխատանքով: իմ ջեն տարվեց մտածմունքով ու լուռ քայլում եյին նրանք:

— Ուրեմն դու Ջմչիդի հետ ամուսնանալու յես, չե՞, քանի վոր վերակենդանացել է քեր սերը...

Խաջեն ծիծաղելով Հասմիկի ուսին խփեց ու անպատասխան թողեց նրա հարցը:

— Իսկ Մուշեղին ի՞նչ պատասխանեցիր, ելի հարցրեց Հասմիկը:— Խաջեն լուռ եր:

— Իսկապես Խաջե, հետաքրքիր ե, կըրկնեց Հասմիկը: Այս անգամ մի քանի վայրկյանի մտահոգ լուռթյունից հետո Խաջեն պատասխանեց:

— Հասմիկ, չե՞ վոր յես միշտ նրան ել, քեզ ել ասել եմ, վոր դեն նետի իր այդ մտքերը, մոռանա, յես այնքան ել սերի-մերի գերի չեմ, վոր նպատակս, աշխատանքս մոռանամ, ինձ այսպես եր հարկավոր վարվել...:

— Բայց Մուշեղը, կարծես հուսով ե, Խաջե:

— Դու ասա՛ նրան, Հասմիկ ջա՛ն, համոզիր, վոր աշխատի, գործ անի անհարկավոր թեթևությունը թողնի, ինչ աննպատակ ջահելություն ե անում, ի՞նչ ե հարկավոր, ախար նա գիտի, վոր յես ուրիշի յեմ սիր...

— Լա՛վ, Խաջե ջան, կխոսեմ:

— Դեռ առաջին անգամ, յերր նա այդ մասին ասաց ինձ, յես խնդրեցի, վոր ել չկըրկնի, բայց մոտիկ ընկերներ եյինք, հանդիպում, խոսում եյինք և նա չուզեց մոռանալ, բայց հիմա պետք ե վոր թողնի, թողնի իր «սե-

րը-մերը»,— յես դեռ ինչքա՛ն, դեռ ինչքա՛ն ունեմ կատարելու...:

— Անհոգ յեղի՛ր Խաջե, կասեմ յես նրան այդ բոլորը:

Բաժանվելիս կարծես նոր եյին նրանք իրար տեսնում, իրար ձեռք բռնած լուռ կանգնած եյին յերկար: Վերջին անգամ մեկ ել իրար աչքերի մեջ նայելով ժպտացին ու հեռացան իրարից:

Մի անգամ ել Հասմիկը թեքվեց Խաջեյին նայելու. նա գլուխը կախ՝ արագ-արագ դնում եր:

Արևը դեռ չեր մտել: Նրա շողերը խաղում եյին դպրոցի քարե գորշ պատերի վրա: Մեղմ քամին սվսվում եր, գարնան մոտալուտ լինելն զգացվում եր:

Զինեն ու Խաջեն դուրս յեկան խրճիթ-ընթերցարանից: Յերկու ժամ եր, ինչ կոմսոմոլի ժողովումն եյին նրանք: Մեղմ հողմը շաշյունով խփում եր Զինեյի բաց, անզնգլիկ ճակատին, չարժում նրա մանրահյուս սև գիսակները: Դպրոցի դուռը հասնելով, մի քանի բուպե սպասեցին նրանք, մինչև Ջմչիդը դուրս յեկավ, մի գիրք ու տետրակներ թևի տակը դրած:

Նա լիկկայան եր դնում:

Յերր դուրս յեկավ նա, ժպտացին յերեքով ել ու սկսեցին քայլել: Այո՛, ժպտում եյին,

միշտ եյին ժպտում նրանք, շատ եյին ուրախ. Գարնանամուտ եր: Մարտ ամիսը: Գարունն սկսվել էր նաև քուրդ հովիտների ու հովվուհիների մեջ և այդ գարնան ծիծեռնակներին քայլող յեռյակի անդամները՝ Խաջեն, Ջմշիղն ու Ջինեն: Փողոցում մեղմ քամին շնչկում եր, հալված ձյունը չփչվում նրանց վոտքերի տակ...

Փոխանակ տուն գնալու, թեքեցին նրանք իրենց ճանապարհը մի այլ փողոցով: Գնում եյին նրանք դանդաղաքայլ ու գրուցում: Գրում եյին և աննկատելիորեն մոտեցան Նազոյի տանը: Առաջինը Խաջեն նկատեց Նազոյին ու ծերուկ Խուզոյին դռանը կանգնած: Նրանք գրուցում եյին՝ յերգում հազար ազամ յերգած յերգը. «Իսպրանը վատ դավրան է, դունյան խըրար է յեղել, մեծամեծ մարդիկ պատիվ չունեն»:

Չայենն կանգնել էր նրանց առաջ հյու գերու նման: Պլիկներն ու գնդիկները ծածկել էյին նրա ճակատը. կարմիր, դեղին, կապույտ ու գույնզույն հուլունքները կախվել էյին պարանոցից, իսկ դարաֆիլը հեռվից յերևում եր նրա քթի տակ:

Աղան ու Խուզոն յերբ նկատեցին քայլող յեռյակին, վոր հեգնական ծիծաղով իրենց եր նայում, մտան տունը, փնթփնթալով, հայհոյելով աշխարհին:

Խաջեն ու Ջմշիղը լսելի ձայնով ծիծաղեցին, իսկ Ջինեն ժպտալ յերեսին արագ քայլերով տունը մտնող Չայենյին եր նայում անձայն ծիծաղով:

Արբեն տուն եյին վերադառնում նրանք, յերբ աղայի կնոջը հանդիպեցին, վոր փողոցով դեմ ու դեմ դեպի նրանց եր գալիս: Խանումը նկատելով Խաջեյին, վոր ուղիղ իրեն եր նայում, արագացրեց իր քայլերը, նրանցից ավելի շուտ խուսափելու համար:

— Բարո՛վ յեկար, խանը՛մ, — դիմեց նրան Խաջեն այն կծու հեգնությամբ, վորով նա յեր Սայրեյի՝ Խաջեյի մոր հետ խոսում Արագածի բարձրունքներում յեղած ժամանակ, յերբ դուրս եր անում նրան որայից:

Խանումը խեթ-խեթ նայեց Խաջեյին, փնթփնթաց, ու «կյավրե խուլի բա» — բռռերը մեքենայորեն արտասանելով՝ արագ հեռացավ: Նրա յեռևից յերեքով ել բարձրաձայն ծիծաղում եյին ու արհամարանքով նրան նայում, յերբ փախչելու չափ արագ գնում եր նա:

«Յերեք հարյուր ուրլի տվեց հա՞, տասնուհինգ վոչխա՞ր» — հարցնում եր Խաջեն ինքն իրեն:

Քամին սուլում, շնչնկում, սարսեցնում եր կիսահալ բյուրեղ ձյունը:

Յերեկոյանանում եր: Մարտի գարնանամուտ յերեկոներին եր:

Կրկին վերհիշելով իր անցած ամբողջ ճա-
նաչարհը, իր զրկանքների, անարգվելու, պայ-
քարի և հաղթելու պատմությունը, Խաջեն
բարձր ձայնով արտասանեց. ՇԱՐՈՒՆԱԿԻՐ
ԳՈ ՃԱՆԱՊԱՐ ՀԸ ՅԵՎ ԹՈՂ ՄԱՐԴԻԿ ԽՈՍԵՆ,
ԽՆՁ ԿՈՒՋԵՆ:— Հետաքրքրվող հայացքով նը-
րան նայեցին Ջմչիդն ու Ջինեն.

Նա մտածում էր:

Տուն վերադարձան նրանք, փորպես մար-
տից վերադարձող, թշնամուն հաղթած ուղ-
միկներ:

Յեվ նրանք առաջիններն էին, վոր վոչ-
խարային հնադանդությունից յեղնելով, մար-
տական հանդգնությամբ էին համակվել:


Գարնանամուտ անդորր յերեկո յեր, այն-
պես հանգիստ ու խաղաղ, ինչպես Ջմչիդի ըզ-
գացմունքներն հանգստացել ու խաղաղել էին:
Խաղաղել էին Ջմչիդի հոգեմաշ մտածումնե-
րը. բայց նրա սրտում արդեն լափ էր տալիս
թշնամանքի, ատելության առաջին ալիքը:

Գարնանամուտ անդորր յերեկո յեր...

1931 թ.

ՅԵՐԵՎԱՆ





60752